Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

262.1
f.-93

1865

4

ԳՐԻՍՏՈՍ

ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

262.1
P-93

62-1
Ք-93

ՔՐԻՍՏՈՍ

ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

ԽՈՐՀՈՒՐԴՔ Ս. ԳՈՀՈՒԹԵԱՆ

Ի ՎԱՐՈՒՄՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ

Ի ՎԱՆՍ ՄԽԻԹԱՐԱՅ

Ի Ս. ՂԱԶԱՐ ՎԵՆԵՏԿՈՅ

1865

Ա. ՀԴ

Բնագիր մատենկանս 'ի լեզու Փռանկաց, յաճախեալ յոյժ էր, որպէս տըպագիրն ծանուցանէ, յառաջ քան զմեծ այլայլութիւն աշխարհի նոցին, յամենայն վարժարանս ժառանգաւորաց և 'ի ձեռս քահանայից. և 'ի նոյն պատիւ դարձեալ թեւակոխէ ընդ այլս 'ի համախօս գրոց. զորոյ զօգուտ փափագեցաք և մերոմանն փոխանցել 'ի մերազնեայ պաշտօնեայս և նուիրողս Աստուծոյ, մանաւանդ 'ի նորակերտ քահանայս, որոց այնքան մեծ և անհրաժեշտ պարտք 'ի վերայ կան ճանաչողս և նմանողս լինելոյ Քրիստոսի. այն՝ որ զանձառահրաշ և զբազմապատիկ գանձս էութեան իւրոյ՝ թաքուցանէ և յայտնէ 'ի խորհրդեան սրբոյ Գոհութեանս։

282-Ա2
52871-Ա
ՄԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ZUUՊ-Арм ССР
Ս. Մասնայանի անվան գրադարան
32800-67

ՔՐԻՍՏՈՍ

ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

ԽՈՐՀՈՒՐԴՔ Ս. ԳՈՀՈՒԹԵԱՆ

Ա.

ՅԻՍՈՒՍ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած՝ զի խորհուրդն գոհութեան է ճշմարիտ և միայնակ պատարագ նորոյ օրինացս, նախատացեալ 'ի ձեռն Մաղաքիայի մարգարէի. քանզի տէրն մեր Յիսուս Քրիստոս է քահանայ և զոհ պատարագիս այսորիկ. որոյ ոչ համարեալ շատ զգենուումն իւր վասն մեր 'ի վերայ խաչին, մշանջենաւոր կատարէ զնոյն զոհ զօր ամենայն 'ի վերայ սեղանոյ մերոյ. — և զի նա ինքն

ընարեաց զմեզ լինել պաշտօնեայս իւրոյ պատարագին։ Ո՛վ, թէ որ-քան մեծ է մերս պատիւ, կալ մեզ 'ի սեղանի անդ՝ փոխանակ ամենա-սուրբ քահանայապետին։ Իցէ՞մք այսմ արժանիք։ Այլ քանի՛ հրա-շափառագոյն է այս սէր Յիսուսի, պատարագել զանձն զօրհանապազ վասն մեր։ Իցէ՞մք պատրաստք փո-խարէն երախտեացս այսոցիկ՝ նուի-րել զանձինս 'ի վերայ նորա։ Ալէ՞ մատիցուք 'ի սեղանն հոգւով այսր պատարագի. «Օ՛ն, եկայք և մեք ընդ նմին մեռցուք»։

Բ. Զմտաւ ածէ, զի Յիսուս պա-տարագաւս այս արբով մատուցանէ զինքն բովանդակ. այսինքն է, ոչ միայն նուիրէ զբնական մարմին իւր զկազմեալն յարգանդի Մարիամու, այլ և զխորհրդականն մարմին՝ որ է եկեղեցին, որոյ և դու անդամ ես. և ըստ այդմ մասին՝ նուիրեալ իսկ և զոհեալ ընդ նմա. միայն թէ և բնակէիր 'ի նմա, զի և նա բնակէր 'ի քեզ։ «Կացէք յիս և ես 'ի ձեզ»։ — Տես, թէ որպիսի՛ ուռնիցիս միու-

թիւն ընդ Յիսուսի՝ առ 'ի նուիրիլ ընդ նմին։ Ո՛վ, քանի՞ դու հակառակ ես հոգւոյ նորին և մտաց։ Համեմատեա զի՞նչ նա և զինչ դուդ, և պատկառեաջիր։ Մի այլիր սրտիւ ընդ ներքին պատրաստութեանց նորին, առ 'ի կարող լինելոյ արժանապէս նուիրիլ ընդ նմա։

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ածէ, զի Գոհութիւն խորհուրդ է Ճշմարիտ. քանզի ընդ տեսակօք հացին և գինւոյ՝ պարուն նակին Ճշմարտապէս մարմին և արիւն, հոգի և աստուածութիւն Յիսուսի, զոր գաս ընդունել 'ի սրբում պատարագի. «Հաւատա՞ս այսմիկ». հաւատայցե՞ս ստուգիւ այսմ Ճըշմարտութեան։ Եւ զի՞նչ այդպէս սակաւ զգածնուս՝ յանդիման եղով Յիսուսի Քրիստոսի։ Զարհուրեր Յակոբ յեռ տեսանելոյ զԱստուած 'ի յերազի. Սողոմոն աքանչացեալ հիանայր յորժամ զմտաւ ածէր՝

զի հաճեցաւ մեծվայելչութիւնն Աստուծոյ՝ բնակել յիւրում 'ի ձեռակերտ տաճարին։ Ո՛վ, քանի՛ երանդուն, քանի՛ զգաստ արժան էր քեզ լինել 'ի պահուս յայսմիկ, զի ունիս 'ի քեզ ստուգապէս զԱստուածն քո։ Արա մեծարանս անսահման փառաց նորին, և խոնարհեաց յոյժ առաջի նորա։

Բ. Զմտաւ ած, զի յընդունելն զխորհուրդս զայս՝ ընկալար զնոյն զայն մարմին Յիսուսի՝ որ կազմեցաւ 'ի Հոգւոյն սրբոյ, 'ի մաքրագոյն արենէ Մարիամու. որ հրաշագործեացն այնչափ անչափ սքանչելիս. որ կրեալ տարաւ այնպիսի վաստակոց, և համբերեաց այնչափ չարեաց վասն մեր 'ի տնօրէնութեան մահացու կենացն. և որ այժմ նստի փառօք ընդ աջմէ Աստուծոյ յերկինս. — զայն արիւն Յիսուսի, որ հեղաւ 'ի մանկութենէ անտի իւրմէ 'ի թլփատութեանն, և քամեցաւ խապտաւ 'ի սեղանի խաչին. — զայն հոգին Յիսուսի, որ 'ի վայրկենէ անտի մարդեղութեանն լի էր

շնորհօք և առաքինութեամբ, որ էջն 'ի դժոխս և միւսանգամ միացաւ ընդ փառաւորեալ և ընդ անմահ մարմնոյն. — զնոյն ինքն զաստուածութիւնն Յիսուսի, որ ըստեղծն զերկինս և զերկիր: Ո՞վ անպատում բարեացս. զՅիսուս Քրիստոս սուանալ բովանդակ: — Հիւանդքն՝ որ յաւետարանն յիշին, երանիս տային անձանց, եթէ սեսանէին զնա յանցանելն իւրում, եթէ շօշափէին զքղանցս հանդերձից նորա, եթէ գնէր նա ձեռս 'ի վերայ նոցա, կամ թէ անկանէր 'ի վերայ իւրեանց մի եւեթ հայեցուածն նորա: Իսկ ես՝ բոլորովիմբ իսկ ունիմ զնա 'ի սրտիս. «Օրհնեա՛ անձն իմ զՏէր, և ամենայն ոսկերք իմ զանուն սուրբ նորա»: — Ո՞վ սրբազան մարմին Յիսուսի, քեզ երկիր պագանեմ. ո՛վ պատուական արիւն Յիսուսի, 'ի քեզ ապաւինիմ. ո՛վ ամենասուրբ հոգի Յիսուսի, ընդ քեզ միանամ. ո՛վ աստուածութիւն Յիսուսի, խոնարհիմ առաջի քո:

Բ

ՅԻՍՈՒՍ ՕՐԻՆԱԿ ԵՒ ՀՇՄԱՐՏՈՒԹԻՆ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած, զի պատարագս այս համառօտութիւն իմն է և կատարումն ամենայն օրինակաց հնոյ ուխտին. որպիսիք են ծառն կենաց 'ի դրախտին, հացն առաջաւորութեան 'ի տաճարին, մանանայն յանապատին, գառնն զատկին և տապանակն ուխտի. պարզիակեալ յինքեան բերէ սա 'ի հոգիս մեր զամենայն զօրութիւն նոցին: Ի խորհրդեանս յայսմիկ՝ Տէրն մեր լի ողորմութեամբ և մարդասիրութեամբ եթող մեզ զյիշատակ աքանչելեաց իւրոց. «Յիշատակ արար աքանչելեաց իւրոց ողջոց. ողորմած գթած է Տէր»: Բէր և համեմատեա՛ ընդ մեծարանաց զոր մա-

տուցանէին օրինակացն այնոցիկ՝ ըզ-
քո զվարկպարազն շուք, զոր դնեա
նմին իսկ ճշմարտութեանս այսմիկ։
Որպիսի սրբութիւնս ոչ պահան-
ջէին օրէնքն 'ի քահանայից և 'ի ժո-
ղովրդոց՝ առ 'ի մերձենալոյ առ ըս-
տուերան և առ գոյզն և անկատար
նշանակքն։ Քանի՞ առաւել ակնա-
ծութեան չիցեն պէտք առ ընդու-
նելոյ զճշմարտութիւնն՝ որ ունի
յինքեան զայն ամենայն։ «Առա-
ւել լուա՛ զիս յանօրէնութենէ իմմէ
և 'ի մեղաց իմոց սուրբ արա զիս»։

Բ. Զմտաւ ածա, զի խորհուրդս
այս դարձեալ օրինակ է և յիշա-
տակ մահուանն Յիսուսի, ըստ այսց
բանից զոր ասաց առաքելոյ Եւրոց
և ընդ նոցին համօրէն ամենայն քա-
հանայից. «Զայս արարէք առ ի-
մոյ յիշատակի»։ Զնք և մի ապաս
զդեսուս քահանային, կամ պաշ-
տամունք պատարագի՝ որ ոչ յան-
դիման ածցեն զդէպս ինչ չարչա-
րանացն։ Մատիցուք ուրեմն 'ի սե-
ղանն նովին հոգւով՝ որով Յիսուս
եկ 'ի Գողգոթա առ 'ի մեռանել.

զդեցցուք զարբազան զգեստսն նո-
վին յօժարութեամբ, որով նայն
ընկալաւ զհանդերձսն զոր արկին
զնովաւ. երևեսցի և առ արտաքս 'ի
մեզ՝ եթէ զդաճեալք եմք յիշատա-
կաւ մահուան նորա. « Քրիստոսի
չարչանիցն մասնիսով, և դուք 'ի նոյն
միտս վառեցարուք »: Եւ քանզի
զոհն զոր մատչիս մատուցանել, օ-
րինակ է և նուիրումն մահուան նո-
րա, քաջիկ կալջիր զայս յուշի:
Ո՛վ Յիսուս, 'ի նորոգելն իմ արդ
զիշատակ չարչարանաց քոց, մի
տար ինձ թոյլ նորոգել և զմեղս՝ ոչք
եղեն այնմ պատճառք, այլ տուր
ինձ ընդունել նոր օգնան 'ի վերկա-
գործութենէ այսի քումմէ. « Վա-
յելեսցուք միշտ զնոր արդիւնս վերը-
կագործութեան քո » . զայսչնորհս
խնդրեմ 'ի քէն ընդ Եկեղեցւոյ:

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ած, զի 'ի սեղանի
անդ ընկալար զՅիսուս Քրիստոս

Ճշմարտապէս՝ և ոչ օրինակաւ, որ-
պէս ընդունէին Հրեայք յորժամ
ուտէին զզատիկն. և ոչ 'ի հոգւոջ
միայն՝ որպէս ընկալեալ լինի 'ի խոր-
հրդաբարն հաղորդութեան. այլ
իսկապէս, Ճշմարտապէս, գոյացա-
պէս. զնոյն՝ զոր Հայրն ծնաւ 'ի
յաւիտենից 'ի ծոցի իւրում, և զոր
Կոյսն սուրբ տարաւ ինն ամեայ
յարգանդի. «Հաւատամ Տէր, օգ-
նեա՛ անհաւատութեանս իմում»:
Այո՛, ես զքեզ գոյացուցի 'ի սեղա-
նին, զքեզ՝ զմիածին Որդիդ Աս-
տուծոյ. «Ես այսօր ծնայ զքեզ».
մանակից լինիմ երանութեան մօր
քո, որ կրեաց զքեզ յարգանդին.
«Երանի՛ որովայնին որ կրեացն զզ-
քեզ». կցորդեմ զիմն ընդ նորայ-
ումն պատրաստութեան, և նուի-
րեմ քեզ զնորին շնորհակալիս.
«Մեծացուցէ անձն իմ զՏէր»:

Բ. Զմտաւ ած՝ զի ընկալար զզ-
ցիսուս Ճշմարտապէս ոչ միայն որ-
պէս էրն յերկրի և որպէս էն այժմ
յերկինս, այլ ընկալար զնա ամե-
նայն կատարելութեամբք նորին,

առաքինութեամբքն և արժանեօք։ Քաջ կշռեա զայս ամենայն։ Ունիս արդ 'ի քեզ զայն Յիսուս՝ որ Աստուածն է յաւիտենական, անչափ և անբաւ։ զՅիսուս՝ զարարիչն քո, զպահապանն քո, զփրկիչն քո և զդատաւորդ։ զնոյն Յիսուս՝ որ կայրէ զամենայն՝ որ 'ի կարգի բնութեան և շնորհաց և վարուց։ զՅիսուսն զայն հեզ և խոնարհ, զհամբերողն և զգթած։ զՅիսուս՝ որոյ մի ևեթ գործ՝ առաւել արդիւնական էղև քան զամենայն գործս հրեշտակաց և արբոց։ « Յամենայնի մեծացարուք նովաւ »։ Ո՛վ, քանի՛ երախտեաց չիցէ նա արժանի՝ վասն այնչափի և մեծամեծ բարեաց։ Քանի՛ ամօթ քեզ՝ զի այսքան սակաւ ինչ օգտիս 'ի նմանէ։ Ո՛վ Յիսուս իմ, տուր ինձ ընդունել և զհոգի քո 'ի մարմնոյդ ընդունելութեան։ արա զիս մասնակից արդեանց քոց և առաքինութեանց, հաղորդելովս մարմնոյ քո արբոյ և անդին արեանդ որոց կարօտս եմ յոյժ յոյժ։

Գ.

ՅԻՍՈՒՍ ՔԱՀԱՆԱՅ ԵՒ ՔՈՀ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած, զի Յիսուս Քրիստոս է քահանայապետն մեծ, քահանայ յաւիտենական, քահանայ համաշխարհական։ — Քահանայապետ մեծ՝ քանզի 'ի նմա բնակէ լըրումն սրբութեան և իշխանութիւն քահանայից, և 'ի նմանէ ընդունին նոքա զզօրութիւն և զիշխանութիւն։ — քահանայ յաւիտենական, զի քահանայութիւն նորա կացցէ յաւիտեանս յաւիտենից 'ի յերկինս, ուր մատուցանէ և մատուցցէ զանձն անդադար Հօր իւրում։ — քահանայ համաշխարհական, զի նա ինքն է որ ներգործէ և խօսի 'ի քահանայս, 'ի Ժամու պաշտաման։

Ս. Հմ. Ա. Մաշտոցի անվան

նոցա։ « Ունիմք այսուհետև քա-
» հանայապետ մեծ, անցեալ ընդ
» երկինս... մատիցուք այսուհետև
» համարձակութեամբ առաջի ա-
» թոռոյ շնորհաց նորա, զի ընկալ-
» ցուք զողորմութիւն, և գտցուք
» շնորհս 'ի դէպ ժամանակի օգնա-
» կանութեան »։— Յիսուս, Ճանա-
չեմ զքեզ ինձ 'ի քահանայապետ.
հան ինձ մասն 'ի շնորհաց և 'ի սրբ-
բութենէ քահանայութեան քո,
առ 'ի մատուցանել արժանապէս
զխորհուրդս սրբութեան։

Բ. Զմտաւ ածէ, զի ասպիճա-
նաւոր քահանայութեան, գործի և
պաշտօնեայ է Յիսուսի Քրիստո-
սի. յանուն նորին գործէ և խօ-
սիս. և այնպիսի ինն սեռն և սերտ
զօր միութեան ունիս ընդ նմա, մին-
չև զամենայն զոր միանգամ ասէս
և առնես յանուն նորա, զնոյն և նա
ասէ և առնէ ընդ քեզ։ Ի միրտելն
քո, « Ես է որ միրտէ ». 'ի քաջա-
լերելն քո՝ նա է որ քաջալերէ ա-
ռաւաւածաբար բարեխօսութեամբ.
'ի մատուցանելն քո՝ նա է որ մա-

տուցանէ զսուրբ խորհուրդ պա-
տարագին։ Ո՛վ, որպիսի՜ պատիւ
է քո, երևիլ առաջի սեղանոյն՝ ոչ
որպէս մարդ մահկանացու, այլ
որպէս այլ ոմն Յիսուս։ Արդ տես
եթէ ի՞նչ բաւական կարող լինելոյ
յանդիման առնել զնա. ունիս զնշ-
խանութիւն նորա, ունիցի՞ս ար-
դեօք և զառաքինութիւնս նորին,
զսրբութիւնն, զխոնարհութիւնն և
զմեռելութիւն։ Մի՞ արդեօք քա-
հանայ ի՞նչ ըստ աշխարհի, զգայա-
սէր և փափկավար։ Յո՞ արդ գնաս
յայգակիսում գոլով վիճակի, որ
գլխովին հակառակն է Յիսուսին։
Մերկացիր զհին մարդն և զգեցիր
զնորն. «Զգեցարուք զՅիսուս Քրիս-
տոս»։

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ած, զի Յիսուս 'ի
Գոհութեանն՝ յանդիման կայ հանա-
պազ Աստուծոյ՝ հօր իւրոյ, որպէս
զոհ համաշխարհական ամենայն

մարդկան, առ 'ի տալ նմա՝ յանուն նոցին զպատիւն զոր պարտին, և 'ի ընուլ զարդարութիւն նորա վասն ամ մեղաց գործեցելոց։ Եւ այժմիկ յընդունելն քում զնա, սիրա քո եղիր նմա 'ի սեղան նուիրման պատարագի նորա. որպէս զի կարող ես ասել ընդ մարգարէին. «Աղօթք իմ առ Աստուած վասն կենաց իմոց»։ Աստուած իմ, չեմ ես ինձէն բաւական 'ի փառաւորել զքեզ ըստ արժանեաց քոց, և ոչ ամոքել ըզբարկութիւն քո. այլ հայեաց 'ի Քրիստոսն քո. «Հայեաց յերեսս օծելոյ քո». ընծայեմ քեզ զարիւն նորա և զկեանս. կցորդեմ զանձն իմ ընդ անբաւ արդեանց նորին՝ որքան է յիս կար։

Բ. Զմտաւ ած, զի ոչք ուտէին 'ի մարմնոյ զոհելոցն առ կուռս, հաղորդք լինէին, ըստ Պօղոսի, ամենայն պաշտամանց նուիրելոց նոցին, նա և բազում անգամ ծառայք իսկ այսոյն պղծոյ. քանիցն առաւել չիցէ պարտ և արժան ճաշակողիդ 'ի կենդանի պատարագէ

ասաի 'ի սրբոյ և 'ի հաճոյականէ Աստուծոյ, զգէնուլ և ընուլ հոգւով նորին։ Զայս իսկ կամի Տէրն մեր. զի որ ուտէն 'ի մարմնոյ իւրմէ, կեցցէ և նորին կենաք. «Որ ուտէն զիս և նա կեցցէ վասն իմ». և այս իսկ է արդարև հաղորդն լինել սեղանոյն։ — Ո՛հ, Յիսուս իմ, տուր ինձ զնորհս կելոյ ըստ հոգւոյ քում, և մեռուցանելոյ յիս զոգի աշխարհիս։

Դ

ՅԻՍՈՒՍ ՊԱՏԱՐԱԳ ՈՂՋԱԿԻՉ ԵՒ ԳՈՀԱՑՈՂԱԿԱՆ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած՝ զի ամենայն պատարագք հնոյ օրինին անբաւական գտան 'ի պատուէր Աստուած ըստ նորին արժանեաց. վասն այսորիկ Յիսուս հաստատեաց 'ի նորումն զխորհուրդ պատարագին, որոյ անքաւ գոլով արժէիւք, մատուցանէ Աստուծոյ զպարտուպատշաճ պատիւն՝ վասն իւր և վասն մարդկան. և այսու հատուցանէ առաւելաւն հանդերձ զպարտիս և զյանցանս մեր. «Զզոհս և զպատարագս ոչ կամեցար և ընդ ողջակէզս ոչ հաճեցար. յայնժամ ասացի, Թէ ահաւասիկ եկի»: Ո՞վ աքանչելի իմաստութեանն Յիսուսի. որ եգիտ

զՀզօր զայս հնարս հատուցանելոյ բոլորովիմբ զմեր պարտս յարգութեան և պաշտամանն առ Աստուած։ Մխայցուք ուրեմն ընդ դիտման մըտաց նորին՝ ի հաստատելն անդ իւրում զնորհուրդ զայս պատարագի. մատուցցուք զնա առ՝ ի պաշտել ընդ նմին զՀայր՝ հոգւով և ճշմարտութեամբ. զի նա «այնպիսի երկրպագուս իւր խնդրէ»։ Ո՛վ Յիսուս, հրաժարիմ յամենայնէ որ չնցէն քեզ հաճոյ։ Ե՛կ յիս ընուել զթերութիւն անարժան և տկար երկրպագութեանցս, աղօթիցս, գոհութեանցս և փոխարինի հատուցմանց ամենայն յանցանաց իմոց։ Ո՛վ, քանի նուազեալ եմ յամենայնի՝ զոր պարտիմ առ Աստն իմ։

Բ. Զմտաւ ածէ, զի՝ ի պատարագի ողջակիզին՝ հրով ծախէր զոհն բովանդակ, ՝ի վկայութիւն ծայրագոյն իշխանութեանն Աստուծոյ՝ ի վերայ արարածոցս։ Տես, թէ որպէս յայտմ խորհրդեան՝ Յիսուս սիրոմբն որ առ մեզ՝ ոչնչացեալ ինքն ունայնանայ՝ ի սրբագործութեան

և՝ ի հաղորդութեան անդ, առ՝ ի պա-
տուէր զամենակարողութի, զինքն-
իշխանութիւն և զտէրութիւն Աս-
տուծոյ՝ հօր իւրոյ։ Տէս արդ, յերբ-
թալդ՝ ի մատուցանել զնոյն ողջա-
կէզ, որպիսի ունիցիս յօժարու-
թիւնս, իցէ՞ն ինչ նմանք Յիսուսին։
Իցէ՞ս պատրաստ՝ ի զենուումն ողջամբ
ընդ նմին։ Զիցէ՞ ինչ իր յաշխարհի՝
որ մածեալ իցէ զքեզ, ազգականք
կամ բարեկամք, դաստակերտք, հա-
ճոյք, անդորր կենաց. կամ դու ինք-
նին, տաղանդք մտաց քոց, առող-
ջութիւն քո, հանքաւ քո, կեանք
քո։— Ո՛չ այդպէս, ատուածայինդ
Յիսուս, այլ հրաժարիմ յամենայ-
նէ, առ՝ ի տալ զիս՝ ի զենուումն ընդ
քեզ. «Օգնեա ինձ ըստ բանի քում
և կեցո զիս. և մի՛ յամօթ առներ
զիս՝ ի յուսոյ իմմէ»։

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ած, զի ժամու ժամու ընկալեալ մարդկան զանչափ շնորհս Աստուծոյ, զարտաքինս և զներքինս, զբղխեալսն յանբաւութենէ նորին սիրոյ, պարտականք էին անդուլ գոհութիւնս նմա մատուցանել. այլ զի առ տկարութեան բնութեան իւրեանց չէին բաւականք հանապազ 'ի հատուցումն պարտեացն, Յիսուս էդ զանձն 'ի խորհրդեանս առ 'ի ընուլ զպակասութիւն նոցին, և մատուցանել ցանկ գոհութիւն առ Աստուած՝ Հայր իւր, որպէս և այժմիկ մատուցանէ ընդ մեր։ Ո՛, որպէս զի սուրբ և հաճոյք են Աստուծոյ Հօրն՝ գոհութիւնքդ այդոքիկ։ Երջանիկ եմ՞ ես զի յանձն առնու հատուցանել Յիսուս զկրաւացի զպարտս իմ։ Զի՞ր շնորհս մատուցից քեզ, որ չունիս պէտս բարեաց՝ իմոց. «Բարիք իմ չեն քեզ ինչ պիտոյ». և առ 'ի քէն

էն ամենայն զոր ունիմ։ Հաճեաց ուրեմն ընդ գոհութիւնս զոր մատուցանէ քեզ Յիսուս՝ ընդ իմ, նուիրեմ քեզ զայնոսիկ՝ միացեալ խմուլանն կամաց, որչափ և կարող լցեմ։

Բ. Զմտաւ ած՝ զպարտան զոր ունիս առ Յիսուս, վասն տալոյ նորա քեզ հնարս խմանալոյ զբարիսն՝ զոր արար ընդ քեզ Աստուած. այնպէս զի նուիրելովդ նմա զՈրդին իւր՝ առաւելաւն իսկ հատուցանես փոխանակ ամենայնի տուեցելոցն քեզ։ Քանզի Որդին նորա է աղբիւր ամենայն բարւոյ. գերագոյնն բարի, բարին էական, բարին ընդհանուր. և զամենայն զոր միանգամ տացէ քեզ Աստուած, բաց՝ի նմանէն, երմունք և հոսանք ինչ են բեղմնաւոր և անսպառ աղբերն այնորիկ։ Ո՛վ, քանի՛ մեծ են քեզ այսպիսի սիրոյ ախորհանք։ Մի կասիր տալա՝ի գոհանալոյ զԱստուծոյ Հօրէ Քրիստոսիւ Յիսուսիւ. « Գոհացօղք լինիջիք զԱստուծոյ և զՀօրէ նովաւ »։ այսու օրինակաւ ձգեա-

ցես՝ի քեզ շնորհս նորանորս։ Զայդ ազդ առնէ քեզ եկեղեցի՝ յաղօթս անդ պատարագին զոր ասեսդ զօր ամենայն, թերևս առանց քաջ միտ դնելոյ, եթէ «Արժան է սուրգապէս և իրաւ ամենայորդոր փութով միշտ փառաւորել զքեզ, Հայր ամենակալ... Քրիստոսիւ Յիսուսիւ տերամբ մերով»։

Ե

ՅԻՍՈՒՍ ՊԱՏԱՐԱԳ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած՝ , զի համօրէն մարդկութիւն ոչ էր բաւական 'ի հատուցումն միոյ ևեթ մեղաց . իսկ Յիսուս մարդ եղև , և մեռաւ 'ի վերայ խաչին առ արժանիս առնել զմեզ թողութեան մեղաց մերոց . և հրաշափառագոյն ևս զթութեամբ զինքն 'ի խորհուրդ հաղորդութեան , առ 'ի սեփականել մեզ զարդիւնս շնորհի հատուցման . վասն որոյ և եկեղեցի տայ մեզ ասել զնըմանէ 'ի խորհրդեանս . « Ահա գառն Աստուծոյ , որ բառնայ զմեղս աշխարհի » : Ո՛վ անճառ մխիթարութեանս , մատուցանել մեզ յաճախ զպատարագն՝ որ կարօղ է ջնջել

զմեզ՝ զոր գործեցաք յաշխարհս, և զոր գործեմք օր ըստ օրէ, և որոց 'ի վտանգի կամք գործելոյ յամենայն կեանս մեր։ Ո՛վ Յիսուս, յանդիման լինիմ քեզ որպէս մեղաւոր մեծ. ողորմեա՛ ինձ ըստ մեծի ողորմութեանդ քում. ջնջեա՛ զամ յանցանս կենաց իմոց՝ զօրութեամբ արեան քո պատուականի։ Անգիտանամ՝ եթէ արդեօք թողեր ինձ զայնոսիկ. բայց գարշիմ մերժիմ ես 'ի նոցանէն բոլորով սրտիւ իմով, վասն սիրոյ քո եւեթ. ոչ արհամարհես դու ըստ խոստման քո՝ զպատարագ սրտի խորտակելոյ և խոնարհելոյ. « Զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ՝ Աստուած ոչ արհամարհէ »։

Բ. Զմտաւ ած, զի գիտելով Յիսուսի յառաջագոյն, եթէ լինիցին միշտ յերկրի մարդիկ՝ որ արհամարհեսցեն զԱստուած, եդ զինքն 'ի հաղորդութեան՝ որպէս զոհ քաւութեան, առ անդրակի խնդրել 'ի հօրէ իւրմէ զթողութիւն ամենայն մեղաց գործելեաց, և առ 'ի զինչուցանել զարդար բարկութիւն նորա 'ի

մարդկանէ. «Ահա է, ասէ նոքն Յով-
հաննէս, քաւութիւն մեղաց մերոց,
և ոչ եթէ մերոցն միայն՝ այլ ամե-
նայն աշխարհի»։ Եւ ո՞ւր երբէք ե-
րևեցաւ զթութիւն այսքան լայնա-
լեր որպէս և Յիսուսին։ Մատո՛ ու-
րեմն Աստուծոյ՝ զայս պատարագ
քաւութեան, ոչ միայն վասն քոյ-
ոցդ եւեթ մեղանաց, այլ և վասն
ամենայն քրիստոնէից, և վասն մե-
ղաւորաց մեծաց՝ զոր Ճանաչէաք.
քեզ անկ է լալ ընդ մէջ աստիճանա-
ցըն և սեղանոյն և ասել. «Խնայեա՛,
Տէր, 'ի ժողովուրդս քո»։

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ածէ, զի մարդիկ 'ի
սակս մեղաց իւրեանց՝ անարժանք
գոլով գամագիւտ լինել առ 'ի յԱ-
ստուծոյ և ոչ միոյ իմիք շնորհի, Յի-
սուս եդ զինքն 'ի գոհութեանս, առ
ընդունելոյ զամենայն որոց միան-
գամ կարօտին, ըստ մարմնոյ և
ըստ հոգւոյ, վասն ժամանակաւո-

ին և վան յաւիտենականին. և այժմ յետ ընդունելոյ քո զնա, կատարէ 'ի սրտի քում զպաշտօնս զայս. «Կայ մշանջնաւոր լինել բարեխօս վան մեր»: Ո՛վ բարեխօս արժանաւոր. զի՞նչ կարէաք մեք գործել առանց նորա. կամ թէ էաք բաւական գէթ վան անձանց մերոց ընդունել շնորհ ինչ յԱստուծոյ:— Գոհանամ զքէն Յիսուս, զի հաճիս բարեխօս լինել վան իմ առ Հայր. 'ի ձեռս քո յանձն առնեմ զամենայն օգուտն իմ. միաբանիմ յաղօթս քո. ոչ ինչ այլ խնդրեմ էս, բայց զոր դուք խնդրես վան իմ, և զոր ուսուցեալդ ինձ խնդրել. «Հայր մեր, սուրբ եղիցի անուն քո»:

Բ. Զմտաւ ած՝ զի թէպէտ Յիսուս աղօթէ անդուլ վան մեր 'ի հաղորդութեան, և որուամ ինչ մի ոչ զլանայ Հայրն, որպէս և ինքնին վստահ առնէ զմեզ, «Գիտէի՝ զի յամենայն ժամ լսես ինձ». սակայն առ արժանիս լինելոյ աղօթից նորա, պարտ և պատշաճ է յար-

մարել զմեզ ոգւոյ նորին՝ որով աղօթէ վասն մեր։ պարտ է մեզ աղօթել ընդ նմա որպէս և նայն։ Ո՛վ, քանի՛ սուրբ և հաճոյականք են աղօթք նորա առաջի Աստուծոյ Հօր իւրոյ։ Որպիսի՛ ամիսիսումն, քանի՛ մտադրութիւն, որպիսի՛ վայելք, քանի՛ եռանդն։ Գեղեցիկ օրինակ, որում՝ ունիս նմանել յաղօթսն քո։ «Զնոյն խորհեսցի իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ որ և 'ի Յիսուս Քրիստոս»։ Մուտ 'ի նեղբին պատրաստութիւնս Յիսուսի։ — Թերևս մինչև ցայժմ ոչ ինչ խնդրեցեր յանուն նորա և արդեանց նորին։ «Մինչև ցայժմ ոչ ինչ խնդրեցէք»։ Եւ եկէ՛ ինչ զարմանաց զի սակաւ յոյժ օգտեցար 'ի պատարագէ սասի ընդունելութեանդ՝ զոր մատուցերդ յաճախ։ «Խնդրեցէք և առնուցուք»։ Խնդրեա՛ այսուհետև ընդ Յիսուսի և ըստ Յիսուսի, և ապա ընդունիցես զամենայն զոր և խնդրեսն։

Զ

ՅԻՍՈՒՍ ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ԵՒ ԹԱԳԱՒՈՐ ՄԵՐ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած՝ զի Յիսուս 'ի սուրբ Գոհութեանս գոլով ստուգապէս Աստուած, ընդ իւր ունի զամենայն մեծութիւն իւր անբաւ և անհասանելի, զամենայն կատարելութիւնս իւր, — զմեծվայելչութիւն, զամենակարողութիւն, զյաւիտենականութիւն, զանչափութիւն, զարքութիւն, զիմաստութիւն, զբարութիւն, զերկայնմտութիւն, զարդարութիւն և զողորմութիւն։ — Ո՛վ Աստուած իմ, ճշմարտապէս Աստուած ոմն ես դուծածկեալ 'ի խորհրդեանս յայսմիկ։ Եւ ոչ իսկ իբրև զմարդ զոք տեսանեմ զքեզ ասասանօր, և սակայն

կաս 'ի նմին՝ որպէս մարդ և որպէս Աստուած։ Հաւատամ այդմիկ 'ի բոլոր սրտէ և ճանաչեմ զքեզ Տէր իմ և Աստուած իմ։ Ո՞վ եմ ես, Աստուած բարձրեալ, զի մատեայց առ քեզ, ճանեցից զքեզ և ընկալայց զքեզ։

Բ. Զմտաւ ած, զի Աստուածն զոր հասանէ քեզ ընդունել՝ է աբն սրբոց և նոյն ինքն սրբութիւն. զի յամենայն ժամանակի ինդրեաց նա մաքրութիւն բազում՝ յամենեցուն որ մատեանն առ նա։ Տես զինչ պահանջէ 'ի Մովսիսէ մինչև թողացուցեալ նմին մերձենալ առ մորենին վառեալ. կամի նմա առ մեծարանաց բոկանալ զկօշիկան, քանզի տեղին յորում կայր՝ երկիր սուրբ էր. «Լոյծ զկօշիկս քո յոտից քոց. զի տեղիդ յորում կաս դու 'ի դմա՝ երկիր սուրբ է»։ Տես զինչ պատուէր տայ Ահարոնի և որդւոց նորա. յառաջ քան զմատնել 'ի դաբիրայն և ծխել նմա խունկըս, լուանալ ասէ զոտս և զձեռս, ապառնալիս մահու 'ի վերայ կա-

պեալ՝ եթէ արհամարհիցեն զպա-
տուիրանսն։ — Ո՛վ Աստուած իմ,
դու ինքն տուր ինձ զմաքրութիւնն՝
որում պէտս ունիմ առ 'ի մերձե-
նալոյ առ քեզ։ « Սիրտ սուրբ հաս-
տատեա յիս Աստուած, և հոգի ու-
ղիղ նորոգեա 'ի փորի իմում »։ զի
ո՞ կարիցէ սրբել զծնեալն 'ի պիղծ
արենէ։ ոչ դու միայն, Տէր։ թէ-
պէտ և ունիցիմ զմաքրութիւն հրեշ-
տակաց կամ զսրբութիւն Յովհան-
նու Մկրտչի, համայն և այնպէս ոչ
գոսյց անարատ յաչս քո։

Զկնի պատարագին

Ն։ Զմտաւ ած, զի այն Յիսուս
որ յաստուածատուր գիրս կոչի
Թագաւոր Թագաւորաց և տէր տե-
րանց, 'ի սրտի քում է այժմիկ իբ-
րև Թագաւոր բազմեալ 'ի գահոյսն,
և ակն ունելով գտանել մեծարանս,
հպատակութիւն և հաւատարմու-
թիւն՝ զոր պարտիդ նմա։ ծանիր
զնշխանութիւն նորա, զտէրութիւն զոր

ունի 'ի վերայ քո որպէս Թագաւոր։ «Դու ես Թագաւոր իմ և Աստուած իմ»։ Դու ինքն, Յիսուս, դու ես իմ Թագաւոր և Աստուած։ Թագաւորեաց յաւիտեան 'ի վերայ ամենայն կարողութեանց հոգւոյ իմոյ և զօրութեանց մարմնոյ իմոյ։ Ո՛վ, քանի՛ փառք են ինձ հրապատակն կալ այսպիսւոյ մեծազօր Թագաւորի որ նստին ընդ աջմէ Հօր իւրոյ յերկինս։ որուն ստեալ է ամենայն իշխանութիւն, որ երկրպագի 'ի հրեշտակաց և 'ի սրբոց, յորմէ առնուն Թագաւորք երկրի զԹագ իւրեանց։ Ծառայել այսպիսւոյ վեհափառ Թագաւորի՝ Թագաւորել իսկ է։ Ո՛վ, քանի՛ շահաւէտ է կեալ ընդ օրինօք այսքանոյ արդարակորով և բարեբար արքայի, որոյ լուծն այնպէս քաղցր է և փոքրագի։ Ո՛վ Յիսուս, դու լիցիս Թագաւոր իմ յաւիտեան։ Երդնում քեզ հաւատարմութիւն անդրդրժելի։

Բ։ Զմտաւ ած, զոր պարտիմն Յիսուսի Թագաւորին քո։ նա փըր-

կեաց զքեզ 'ի բռնութենէ սատա-
նայի և յամօթալի ծառայութենէ
մեղաց. նա արար զքեզ իւր պաշ-
տօնեայ և մուերիմ. հաւատաց 'ի
քեզ զայն ամենայն իշխանութիւնն՝
զոր առ ոտս քո բերին զարքայս
երկրի. զօր ամենայն բազմեցուցա-
նէ զքեզ 'ի սրբազան սեղանի իւ-
րում: «Այսպէս լեցի ամենայն
մարդոյ՝ զոր կամիցի արքայ փառա-
ւորել»: Բաբէ, որպէս զի մեծա-
շուք և բարերար թագաւոր է Յի-
սուս. ցոր վայր ոչ ամբարձ զնա.
մինչև 'ի գահոյս իւր. զինչ ինչ ոչ
արար վասն իմ: «Բարձր առնեմ
զքեզ, Աստուած իմ և թագաւոր
իմ, և օրհնեմ զանուն քո յաւի-
տեան և յաւիտեանս յաւիտենից»:

Է

ՅԻՍՈՒՍ ԱՐԱՐԻՉ ՄԵՐ ԵՒ ՓՐԿԻՉ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած, զի Յիսուս՝ զոլով Աստուած ճշմարիտ և կենդանի՝ ի Գոհութեան, արարիչ է քո. որ ողորմութեամբ խրով արար զքեզ որ ինչ եաղ, առանց կարօտելոյ քեզ: Այս տէր, «Ձեռք քո արարին զիս և ստեղծին»: Արարիչն ամենակարող կամի գալ՝ ի քեզ, որոյ է իշխանութիւն անժխտելի՝ ի վերայ արարածոց քո: Քանի՞ խնամով արժան եղէ քեզ պատրաստել զդա յընդունելութեան նորին. որում չերմ եռանդեամբ նուիրել զդա նմա: Ո՛վ Աստուածդ մեծ, արարիչ իմ. «Քո եմ ես բոլորովին»: Մի՛ մերժեր զբնակարան՝ զոր ինքնին շինեցեր վասն քո. ուղղեա՛ զձեռագործ քո,

կարկառ զձեռն քո 'ի նմա. տուր նմա զդեղեցկութիւնն զառաջին զոր մերկացաւ մեղաք։ Դու ստեղծեր զնա վասն քո, և քեզ փափագէ անձն իմ. «Ծարաւեցաւ առ քեզ անձն իմ, քանիսպատիկ ևս և մարմին իմ»։

Բ. Զմտաւ ածէ, զի նոյն Յիսուս որ ստեղծն զքեզ, պահէ հանապազ զէութիւն քո և զկեանս՝ զոր ետ քեզ. որպէս զի եթէ վերացուցանէր առ վայր մի զձեռն իւր 'ի քէն, իսկ և իսկ դառնայիր յոչինչն ուստի ելեր։ Այո, ոչ միայն կեանս ետուր ինձ և լցեր բարեաւք, այլ և օգնութեամբ քով պահես զոգիս իմ։ Ո՛հ, որքան պարտական եմ քեզ, Տէր։ Ո՞ւր արդ լինէի եթէ հեռացեալ էիր յինէն 'ի ժամանակի յորում անարդէի զքեզ, և թերևս անպատրաստ և գաղջութեամբ մերձենայի 'ի սեղան քո։ Քանի՜ երանութիւն է ինձ այս՝ տակաւին տեսել կեալ և հանդերձիլ 'ի մատուցումն քո և յընդունելութիւն։ Տուր ինձ, Տէր, պատարագել այս-

օր և յայտնէաւէ Եւանգելին ևս յօժարութեամբ, առ 'ի փոխարէն առաջնոցս հեղգութեանց։ Ո՛հ ո՛հ, թերևս վերջին ևս այս պատարագ՝ զոր մատուցից քեզ։ «Պահեա զիս Աստուած իմ, զի ես 'ի քեզ յուսացայ. պատարագս ուղղելոցս մատուցից քեզ»։

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ած, զի վասն յանցանաց նախամարդոյն՝ գերի եղաք սատանայի և մեղաց, դատապարտեցաք մահու և դժոխոց։ Վասն այսորիկ առաքեաց Աստուած զորդին իւր ազատել զմեզ յամենայն վտանգաց մերոց. և զի, առաւելութեամբ ինն շնորհաց և գթութեան՝ Յիսուս կատարէ մինչև ցարդ ըզպաշտօն փրկչի՝ խորհրդեամբ Գոհութեանս։ «Որ եթ զանձն վասն մեր զի փրկեացէ զմեզ յամենայն անօրէնութենէ»։ — Ո՛վ փրկիչ գերեալ, զո՞ր շնորհս փոխարինի հատուցից քեզ ընդ այսքանոյ մեծի

բարութեան քում։ «Խզեցեր զկապանս իմ, քեզ մատուցից պատարագ օրհնութեան»։ Մի դադարիր, երկնաւոր փրկիչ, կարկառել յիս զարդիւնս փրկագործութեան, որում դեռ ևս կարօտս եմ։ «Կեցո զիս տէր և ողորմեա ինձ»։

Բ. Զմտաւածս, զի Յիսուսի գնելով զքեզ՝ չէս այսուհետև քո ինքեան, այլ նորա։ «Զէք անձանց տէր»։ Նորա ես դու որպէս բաժին և ստացուածս, և ժառանգութիւն ինն, որ կարի ծանրագնոյ է՝ զեր նմին։ Ոչ է քո իշխանութիւն յայսմհետէ ծախել զժամանակ քո և զվաստակս, զբարիս, և զաղատութիւն և զկեանս 'ի զրկանս նորին։ Ո՛հ, քանիցս մատնեցեր զանձն քո 'ի մեղս, յաշխարհ, 'ի կիրս աղցաւորս, յեռ մի անգամ փրկելոյ 'ի Յիսուսէ. տես, քանի՛ անկրաւեցար նմա. և զի՞նչ գործեացես առ քաւելոյ զայդ։ Վասն քո միայն կեցից յայսմհետէ փրկիչ երկնաւոր։ «Այսուհետև մեծացի Քրիստոս յանձին իմում. քանզի ինձ կեանք՝ Քրիստոս է, և մեռանել՝ շահ»։

Ը

ՅԻՍՈՒՍ ՕՐԷՆԱԴԻՐ ՄԵՐ ԵՒ ԱՌԱՔՆՈՐԴ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած՝ զի Յիսուս նոյն այն է 'ի Գոհութեան, որ էին յաշխարհ, խափանել զօրէնսկս և զծէսս հնոյ օրէնսց, և հաստատեաց ըզնորս, որ են օրէնք շնորհաց և սիրոյ. ապա նա ինքն է օրէնադիր մեր. « Տէր դատաւոր մեր »: Քանի ըզգուշութեամբ չկցէ մեզ արժան պատրաստել զանձինս առ նա, որ ազատս զմեզ արար 'ի բազմապատիկ պատուէրանաց անսուտ և ծխից՝ ոլք ծանրանային 'ի վերայ Եբրայեցւոց, և էդ մեզ առաջի օրէնս ոբս, և արժանաւորս արար զմեզ շնորհաց՝ 'ի կատարումն նոցին. որ այնքան յորդորական խոստմամբք և

ահագին սպառնալեօք խրախուսեաց զմեզ. 'ի պատուիրանապահութիւն։ Խոստովան լեր զի էնք օրէնսդիր նման սմին. «Ոչ ոք է յօրէնսդիրս նման սմին»։ Բայց եթէ այնքան նախազգուշութիւնս պահանջեաց Աստուած 'ի ժողովրդենէ իւրմէ 'ի տալն նոցա զօրէնս, մինչև կամել՝ զի որդիքն Իսրայէլի սրբեսցեն զանձինս և լուացեն զհանդերձս իւրեանց, և 'ի կանանց իւրեանց հրաժարեսցեն զերիս աւուրս. տես, թէ որպէս արժան է քեզ զդաստանալ առ ընդունել ըզնոյն ինքն զհեղինակն օրինաց։ Դու ինքն, տուր ինձ, ով Աստուած իմ, զպատրաստութիւն երկիւղի, սիրոյ և զմաքրութեան. սրբեա զիս հեղմամբ շնորհաց քոց։

Բ. Զմտաւ ած, զի Յիսուս օրէնսդիր մեր, որ կարէր ազատ կացուցանել զինքն յօրինացն՝ զորս եդ 'ի վերայ մեր, յօժարակամ արկ զանձն ընդ նոքօք, որպէս զի իւրով օրինակաւ ուսուցէ մեզ զհրահանգ նոցին, և զի բարձցէ 'ի մէնջ

զամենայն պատճառանս ոչխարս կացուցանելոյ զանձինս 'ի նոցունց, և մերժեսցէ զամենայն հեթեթանս՝ որովք հնարիմքս ամոքել զխստութիւն նոցին։ Նա ինքն ասաց մեզ, «Ոչ եկի լուծանել զօրէնս, այլ լնուլ»։ Հայեաց նախ յօրէնս և յառաջս աւետարանի նորա, և ապա 'ի գործս և 'ի կենցաղ նորա, և գտանիցես ամենայն ուրեք հարթ հաւասար զուգութիւն։ Ամաչեաց, 'ի կշիռ եդեալ զհաւասարմութիւն նորա ընդ սխալականութեան քում, զեռանդն նորա՝ ընդ մեղկութեան քում։ Մերձեցիր 'ի նա յօժարութեամբ կատարելոյ զամենայն հրամանս նորա։ «Պատրաստեցայ և ոչ խռովեցայ, զի պահեցից զհրամանս քո»։ Պատրաստ եմ անշփոթ և անխէթ 'ի կատարել զհրամանս քո։

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ած, զի Յիսուս է դլուխ քո. եկեղեցի մարմին նորա,

և անդամ նորին. « Զնա եդ գլուխ 'ի վերայ ամ եկեղեցւոյ »: Հայրն յաւիտենական եւ զնա իբրև գլուխ համօրէն եկեղեցւոյ, որ է մարմին նորա: Տես ուրեմն 'ի Գոհութեանս կատարէ զպաշտօն գլխոյ. զի վարէ զեկեղեցի իւր, առաջնորդէ նմա, պաշտպանէ նմա, սփոէ զհոգի իւր և զշնորհս 'ի վերայ ամենայն անդամոց իւրոց, կենդանարարէ զնոսա, և զուգաւորէ ընդ իւր: Ո՛հ, քանի՛ մեծ է պատիւս մեր, լինել անդամ այնքանոյ սրբոյ գլխոյ և փառաւորելոյ, ունել ընդ նմա միութիւն անանջատ, որպէս անդամոց ընդ մարմնոյն: « Անդամք եմք մարմնոյ նորա, 'ի մարմնոյ նորա՝ և յոսկերացս նորա »: Նոքաւ ընութիւնք շնորհօք, նոքաւ՝ որ է գլուխ ամենայն պետութեանց և իշխանութեանց: « Ղերուբք նոքաւ լցեալք, որ է գլուխ ամենայն իշխանութեան և պետութեան »:— Ո՛վ Յիսուս որ ես գլուխ իմ, զօրացո զիս հոգւով քով, սրփոեա զզօրութիւնս շնորհաց և սրբութեան քո 'ի վերայ ամենայն զօրութեանց հոգւոյ իմոյ:

Բ. Զմտաւ ած, զոր պարտիսդ Յիսուսի՝ որպէս զլեսոյ. մեծարել զնա, սիրել զնա. և միացուցանել զքեզ ընդ նմա. ըստ հոգւոյ նորա կեալ, և յամենայնի հնազանդել նմա։ Քննեա և տես թէ որքա՞ն օրինակաւ հատուցեր զպարտս քո զայսոսիկ։ Ո՛հ, որպիսի՞ կշտամբանաց չեցես անձամբ անձինդ պարտականս վասն այդոցիկ։ Քանի՞ցս անարդեցեր զգլուխս քո զայս։ Որպիսի՞ ցըրտութիւն առ նա. քանի՞ ընդդիմադրութիւն առ ոգի նորա. քանի՞ պատի՞կ դրժանք կանոնաց։ Արդ դարման տար ամենայնի թերութեանցս այսոցիկ։ Ո՛վ Յիսուս, պատուեմ զքեզ որպէս զգլուխս. սիրեմ զքեզ բոլորով սրտիւ իմով. զօդեմ զիս ընդ քեզ, որքան է յիս կար. չկամիմ կեալ բայց միայն քոյին հոգւով. պատրաստ եմ հնազանդել քեզ յամենայնի. «Պատրաստ է սիրտ իմ առ քեզ Աստուած, պատրաստ է սիրտ իմ»։

Թ

ՅԻՍՈՒՍ ՀՈԳԻՒ ՄԵՐ ԵՒ ՀԱՅՐ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած զսէր հօրն յաւիտենականն՝ 'ի տալ մեզ զՈրդին իւր 'ի հովիւ, առ 'ի թափել զմեզ 'ի մախանաց ոսոխաց, առ 'ի պաշտպանել զմեզ 'ի յարձակմանէ նոցին, առ 'ի խնդիր եւանել մեզ, յառաջնորդել և 'ի անուցանել: Աքանչացիր և տես թէ քանի՛ սիրով վարէ 'ի մեզ Յիսուս 'ի խորհրդեան Գոհութեանս՝ զպաշտօն բարի հովուի. զի՞արդ 'ի խնդիր եւանէ մեզ, ո՞րպէս կազմ և պատրաստ է 'ի տալ զկեանս իւր վասն մեր: Իսկ դու զի՞նչ առ այս: Ո՛վ, քանի՛ յամառութիւն, որպիսի՛ դրժանք: Հովիւ երկնային, Ճանաչեմ զմոլորութիւն իմ. « Մոլորեցայ ես որպէս

զոչխար կորուսեալ, խնդրեա՛ զծառայս քո »։ Ընդ առաջնորդութիւն հովուին բարւոյ, ինձ ինչ ոչ պակասեցէ։ Դա եդ զիս յեկեղեցւոջ իբրև՛ ի վայրի դալարւոջ. « Ի վայրի դալարւոջ անդ բնակեցոյց զիս »։ Դոյց՝ ի սեղանի տաս զարօսն պարարտ. շնորհեա՛ ինձ միայն, Աստուած իմ, քաղել անտի օգուտս. քաղցրացո՛ զայն՝ ի քիմն իմ, և տո՛ւր ճաշակել ցանկ նորով փափագանօք և եռանդեամբք արտի։

Բ. Զմտաւ ած՝ զի հովիւն բարի ճանաչէ զիւր ոչխարսն. « Ճանաչեմ զիմն »։ և զի Յիսուս հովիւն քո քաջիկ ևս քան զինքդ ճանաչէ զքեզ։ Ի պահու յորում հանդերձեալ ես մատչել՝ ի սուրբ սեղանն, տեսանէ և զնորագոյն ծաղուկս արտիդ, զկամս քո, զմիտս, զնորհուրդս, զնշաս, նա և զպատրաստութիւնս. երկիր, մի՛ դուցէ գոցէ զքեզ սխալեալ՝ ի մեղս բազումս, զորոց թերևս և ոչ կասկած ինչ ևս ունիս քեզ։ Ո՛հ, գարշիմ, Աստուած իմ, յամենայնի զոր դու յիս՝ ի մեզս

հանարիս. սուրբ արա զնա՝ ի գաղա-
նեաց իմոց մեղաց, Աստուած իմ։
Քննեա՛ դարձեալ և զայն եթէ ճա-
նաչեցէ՞ս և դու զՅիսուս Քրիս-
տոս՝ որպէս և նայն զքեզ ճանաչէ.
զի ոչխարքդ նորա ճանաչեն զնա»։
Մի արդեօք ո՞չ կարասցէ հարկա-
նել յերեսս քո, եթէ յորմէ հեռէ
քահանայ եղեր և վարիս հանապա-
զօր ընդ նմա, տակաւին չէ՞ քո քաջ
ծանուցեալ զնա։ Իսկ եթէ ճանա-
չեցես զնա ստուգիւ որպէս և էն,
ուղղեաջիր ուրեմն զվարս քո ըստ
ճանաչողութեանդ այդմիկ։

Զկնի պատարագին

Ս. Զմտաւ ած, զի Յիսուս՝ ի
Գոհութեանս հայր է մեր ճշմա-
րիտ. զի յեռ ծնանելոյ զմեզ՝ ի կո-
ղէն պատառելոյ՝ ի խաչելութեանն,
որպէս մայր յարդանդէ, ոչ այլով
իւիք կամեցաւ կերակրել զմեզ,
բայց անձամբն իսկ իւրով. և եռ
քեզ զիւր իսկ զմարմին և զարիւն,

'ի կերակուր հոգևոր՝ հոգւոյ քո
առ 'ի պահել և աճեցուցանել ը
կեանս շնորհաց։ Ո՞վ արդարև հայ
բարեան սիրոյս։ Ո՞ւր արդեօք գը
տաւ հայը գերագոյն՝ և առաւել
արժանաւոր սիրոյ։ Հարք մեր ըստ
մարմնոյ՝ պարգևեն մեզ զկեանս
անգամ ևեթ, կեանս մահացուս
աւելի անչափ թշուառութեանց
իսկ Յիսուս տայ մեզ կեանս մարմ
նոյ և հոգւոյ, և կերակրէ զմեզ 'ի
մարմնոյ անտի իւրմէ։ Եւ արդ ոչ
ճանաչեցեալ ընդ մարդարէին, զի
նբրև զհայր խանդաղատի նա զքեզ
յիշեա զմխիթարական բանն որ 'ի
դէպ գան քեզ. « Որդեակ, դու
հանապազ ընդ իս ես, և որ ինչ
իմ է՝ քո է »։ Կարեցեալ և դու ա
սել նոյնպէս առ Յիսուս հայրն քո
Այո՛, Յիսուս իմ, քո եմ ես գլխո
վին, և կամիմ լինել հանապազ ընդ
քեզ։

Բ. Զմտաւ ածա, զի ելթէ Յիսու
քո հայր է 'ի Գոհութեան, պա
է քեզ մատուցանել նմա զպատի
զանէր և զհլութիւն զոր պարտիս

դի առ հայր իւր։ Քննեա՛ արդ ըզ-
եզ յամենայնի յայսոսիկ, և տո՛ւր
ինչ առասխանի առ հարցուածն զոր
ընդունէ քեզ 'ի ձեռն մարդարէին
Մաղաքիայ. «Եթէ հայր եմ ես,
ո՞ւր է փառքն իմ»։ Ո՞ր եռանդն և
սիրտն է քո 'ի հայթայթել ինձ
փառս։ Խնդրեցէ՛ք արդեօք զշահն
իմ յառլեթս և 'ի դէպս. ո՞ր վստա-
հութիւն է քո յիս, և որպիսի՞
հպատակութիւն առ իմ կամս։
Ո՛վ Յիսուս, ճանաչեմ զքեզ արդ-
ի հայր իմ, և մատուցանեմ քեզ զա-
մենայն մեծարանս զոր պարտիմս։
Եւ ի՞նչ ոչ սիրեցից զքեզ, զքեզ՝
որ այնքան բարիս ինձ շնորհեցեր 'ի
ձեռանս իմ։ Կամիմ կալ քեզ հա-
ստատիմ, և հնազանդ լինել մինչև
մահ։

Ժ

ՅԻՍՈՒՍ ՓԵՍԱՅ ՄԵՐ ԵՒ ԵՂԲԱՅՐ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած՝ զի Յիսուս հանդերձ այլովք իւրովք յաւակութիւնք յորջորջի եւ փեսայ հոգւոյ մերոյ. և զի զոլով Աստուած անսահման փառօք՝ յօժարեցաւ միանալ ընդ մերումս ցածուն և վատթար բնութեան. և զայս արար նախ խորհրդով մարդեղութեանն, և ապա առաւելութեամբ սիրոյն՝ ընդ որ անմարթ է աքանչանալ բան արժան բաւականին, հաճեցաւ և միանալ ընդ հոգիս իւրաքանչիւր 'ի մէնջ 'ի ձեռն խորհրդոյ սրբոյ հաղորդութեանս. որ և սակս այսորիկ կոչեցաւ ընդարձակութիւն մարդեղութեան: Արդ ահաւասիկ փեսայն որ գոյ առ քեզ. էլ ընդ առաջ նո-

ցա. «Ահա վիճակ գայ՝ արիք ընդ առաջ նորա»։ Պատրաստեա զքեզ՝ ընդունել զնա որպէս խնամատուն կուսանքն աւետարանին. և տես թէ բորբոքեցին սուրբ սիրովն օրինակելով՝ ի լապտերան վառեալս։

Բ. Զմտաւ ածա, թէ որպիսիք ի ցեն հանդամանք ասուածայնոյս վիճակի. զեղ նորա գերազանցէ քան զամենայն մարդոյ. «Գեղեցիկ տեսանելով քան զամենայն որդիս մարդկան». զողորմիկ է նա և խանդակաթ քան զամենայն վիճակ, հաւատարիմ և սերատածն, ըստ բանի մարգարէին Ովսեայ. «Եւ խօսեցայց զքեզ ինձ յաւիտեան»։ Որպիսիս արդ ազգեցեն տպաւորութիւնս՝ ի քեզ՝ առաւելութիւնք վիճակիդ Յիսուսի. արասցէն և զքեզ կղկաթ կաթոդի։ Զգայցէս իսկ ասատիկ միանալ ընդ նմա. եցէ՛ քեզ նա միայն հաճոյ։ Այլ և դու ինքնին՝ եցէս նմա հաճոյական. կարեցէս վստահ լինել եթէ ոչ հարցես զնա բնաւ ուրեք ընդ սիրտ։ Այլ թերևս և ոչ

իսկ փոյթ ինչ ունիցիս զնմանէ։ — Գուցէ և նա զզուիցի ինչ՝ ի քէն։

Ո՛վ ասուածայինդ փեսայ, հաւատածեա յինէն զամենայն որ ընդհարցի ընդ աչս քո։ Իմ մի միայն բաղձանք այս են, հաճոյ քեզ լինել և միանալ ընդ քեզ յաւիտեան։

Զկնի պատարագին

Ն. Զմտաւ ածէ, զի Յիսուս եղբայր եղև մեզ յառնուլ անդ՝ ի մարդեղութեան իւրում զմերս բնութիւն. և յայլագս այսորիկ սուրբն Պօղոս կոչէ զնա «Անդրանիկն՝ ի մէջ բազում եղբարց»։ Ո՛վ մեծի մեր պատուոյ՝ զՅիսուս եղբայր ունել. բաց՝ ի մեղաց, ՝ի տգիտութենէ և՝ ի ցանկութենէ, ամենևին իսկ նման է մեզ. և ըստ սրբոյն Պօղոսի՝ ՝ի լինելն մարդ ըստ նմանութեան մերոյ, հարկ էր նմա անկանիլ ընդ կրիւք մերովք և ընդ կարեօք, զի առաւել ևս վշտակից լիցի տկարութեան մերոյ. «Ուստի պարտ իսկ

էր նմա ամենայնիւ եղբարց նմանել զի ողորմած լինիցի »։ Գնա արդ ընդ նմա՝ որպէս ընդ եղբօր. մի՛ զանգիտեր յայտնել նմա զառաւելանս քո. վասահ լեր 'ի նա յամենայնի, շնորհս կալջիր նմա զի հաճեցաւ խոնարհեցուցանել զանձն մինչև 'ի նմանութիւն քո։

Բ. Զմտաւ ած, զի Յիսուս 'ի Գոհութեանս դարձեալ եղբայր մեր է սեպական ինն օրինակաւ. զի տայ մեզ զինքն՝ առ 'ի նմանողս նմա լինել, ոչ միայն բնութեամբն, այլ և բաղձանօք և մտօք. որպէս զի լինիցիմք, եթէ օրէն ելցէ ասել, մի Յիսուս Քրիստոս ընդ նմա։ — Ո՛վ Յիսուս, ներդործեա յիս զփոխութիւնս զայս հրաշալի, որպէս զի կարող եղէց ասել ընդ սրբոյն Պօղոսի. « Կենդանի եմ այսուհետև, ոչ ես՝ այլ կենդանի է յիս Քրիստոս »։ Ահա այս է լինել եղբայր Յիսուսի. ունել զնորա հոգին, զնորա սիրտ, զնորա խորհուրդս և զիղձս. համարել զամենայն որպէս նայն համարիցի. սի-

ըեալ զոր նայն սիրիցէ, և առնել ըզկամս Աստուծոյ՝ որպէս նայն ասացեալ. «Որ առնէ զկամս Աստուծոյ՝ նա է իմ եղբայրս»։

ԺԱ

ՅԻՍՈՒՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԵՐ ԵՒ ՓՐԿԻՉ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած՝ զբարութիւնն Աստուծոյ, զի յեւ մարգելոյ ըզմեզ 'ի ձեռն հրեշտակաց, նահապետաց և մարգարէից, առաքեաց և զորդին իւր՝ լինել մեզ վարդապետ, կրթել զմեզ յօրէնս իւր և վարժել 'ի նոսին: Ոչքան և լուսաւոր ի՞նչ մտօք, համարեաց զքեզ առաջի նորա որպէս աշակերտ կարօտ հրահանգաց, թէպէտ և պարտէր քեզ լինել այլոց ուսուցիչ: Ծանիր զտգիտութիւն քո և զկուրութիւն 'ի գործս փրկութեան և կատարելութեան: Դիմեա՛ առ վարդապետս աստուածային, և լուր նմին. «Եմա՛ լուարուք»: Նա ու-

ասացէ քեզ զոր ոչն գիտես. բայց միայն զի ունիցիս հաւատս և հլուծիւն հնազանդելոյ նմա. «Խօսեաց Տէր, զի լուիցէ ծառայ քո». ցոյց ինձ զՃանապարհս քո, և ուսո՛ ինձ զշաւիղս քո։

Բ. Զմտաւ ած՝ զի Յիսուս վարդապետն մեր ոչ շատացաւ կրթել զմեզ բանիւք լոկով, այլ և ինքնին առնէր՝ զոր կամէրն թէ առնիցեմք յետ նորա. «Սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել»։ Գործովք հաստատէր յամենայն կեանս իւր՝ զոր բանիւ վարդապետէր. նա և այժմ կրթէ զմեզ օրինակաւ իւրով 'ի սուրբ խորհրդեանս՝ յամենայն առաքինութիւնս զորս և պատուիրեաց։ Ո՛վ, քանի՞ այլազգ են Ճանապարհք քո քան զնորայն։ Ի խօսելդ՝ արդարև վարդապետ երևիս, այլ ունիցի՞ս և վարս՝ բանիցդ համեմատ։ Բազումս պահանջես յայլոց պատրաստութիւնս առ 'ի հաղորդութիւն, իսկ դու որ միշտ պատրաստեալդ՝ որպիսի՞ ունիցիս։ Քննեա՛ զսոսին առաջի Աստուծոյ,

և ասա ցանձն քո զոր ինչ և ասեսցես առ տպաշխարհին եկեալս առ քեզ։

Ո՛վ Աստուած իմ, վարանեալ տագնապիմ յանձն իմ, տեսանելով զայնքան բազմութիւն հոգւոց մարդկանց մերձեցելոց 'ի սեղան քո՝ առաւելագոյն սրբութեամբ և եռանդեամբ քան զիս. որում պարտ էր գերազանցել քան զնոսա 'ի մասնս յոյսիկ՝ որպէս և յայլն ամենայն. Տէր, մի թողուր զիս յաւուր միում դատապարտ լինել յօրինակէ նոցին և յիմոցս բանից։

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ածի, զի անուն փրկիչ՝ Յիսուսի միայնոյ վայելէ. և եթէ այլք յառաջ քան զնա կոչեցան փրկիչք, կարի ինն պիտակաբար էր այն. քանզի նոքա բազում ինամով և վաստակօք փրկեցին, իսկ Յիսուս փրկեաց զմեզ գնով կենաց իւրոց. նոքա զման ինչ ժողովրդեան փրկեցին, Յիսուս փրկիչ է

ամենեցուն. նոքա 'ի ժամանակեան
չարեաց փրկեցին, Յիսուս ազա-
տեաց զմեզ 'ի յաւիտենից չա-
րեաց. նոքա փրկեցին մինչ կենդա-
նիքն էին, Յիսուս միշտ է փրկիչ:
Աղաղակեա՛ ուրեմն վառեալ երախ-
տագիտութեամբ և սիրով, մինչ
ունիգ արդ 'ի քեզ յինքն զսիրե-
լին քո փրկիչ. «Սա է Աշխարհիս
փրկիչ աշխարհաց»:—Ո՛վ Աստուած
իմ Յիսուս, դու ես Աշխարհիս փրը-
կիչ, և ոչ այլ ոք. քեզ միայն յու-
սամ փրկիլ. «Չկայ այլով իւրաքանչիւր
կուրթիւն»:

Բ. Զմտաւ ած, զի Թէպէտ և
Յիսուս փրկեաց զքեզ, այլ ունիս
տակաւին պէտս առ 'ի նմանէ փրը-
կագործութեան. զի են քո միշտ
մեղք՝ առ 'ի սրբել, պատերազ-
մունք՝ 'ի վանել, փորձութիւնք՝ 'ի
զգուշանալ, և շնորհք 'ի խնդրել:
Արդ առանց արժանեաց փրկչիս
այսորիկ՝ ոչ ինչ կարես առնել, և
միշտ 'ի վտանգի կաս կորստեան:
Խնդրեա՛ վստահութեամբ զօգնու-
թիւն նորա և զպաշտպանութիւն.

գոչեա՛ ի վերուստ ոգեք շուրջ պաշա-
րեն զմեզ ամենայն ուսաեքք, «Տէր,
փրկեա՛ զմեզ զի կորնչիմք աւասիկ»։
Կեամք յաշխարհի սատ՝ որպէս ՝ի
ծովու ծփելոյ ՝ի մրրկաց։ Եթէ թող-
զուս զմեզ մի ևեթ վայրկեան՝ ան-
դէն և անդ կորնչիմք։ Երկիր յոյժ
՝ի տկարութենէ քումմէ, յուսա՛
զամենայն ՝ի Յիսուսէ փրկչէ քումմէ։ զկիր քաջ ՝ի մտի փախչել յառ-
թիչ մեղաց։

ԺԲ

ՅԻՍՈՒՍ ՀԻՒՐ ՄԵՐ ԵՒ ԹՈՇԱԿ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած, զի Աստուած որ բնակէն յերկինս 'ի մէջ հրեշտակաց և սրբոց, հաճի գալ բնակել 'ի սրտի քում, որպէս հիւր յիւրում տան. գոչէա ընդ մարգարէին. «Ո՞վ է մարդ՝ զի յիշես զու զնա, կամ որդի մարդոյ՝ թէ այց ինչ արասցես զու նմա»։ Զի՞նչ ելցէ մարդ, Աստուած մեծ, զի յիշատակաւ անգամ պատուէսցես զնա. այլ զի՞նչ և որդին մարդոյ, այսինքն է արդարն՝ (ըստ խմանալոյ սրբոյն Օգոստինոսի) զի յօժարեսցիս խոնարհել վասն նորա, մինչև ինքնին գալ 'ի տես նորին։ Ես հող եմ և մոխիր, և բաժին իմ ապա-

կանութիւն և մեղք. այլ զի այս-
պէս կամիս, «Տէր, եթէ գոն շնորհս
առաջի քո, մի՛ զանց առներ՝ ի ծա-
ռայէ քումմէ»:

Բ. Զմտաւ ածէ, զի ինամով ինն
վայելէ և արբութիւն տանն Աստու-
ծոյ. զի և Յիսուս նախանձաւոր
գտաւ հանապազ ունել բնակա-
ւանս մաքուրս: Ընտրեաց զար-
գանդ մաքուր ամենասրբոյ կուսի,
հաստատեաց զխորհուրդն գոհու-
թեան՝ ի մաքրազարդ վերնատան.
նա և զկնի մահուանն՝ ընտրեաց
վարշամակ և գերեզման նոր: Յուշ
լեցի քեզ և այն, զի առատապէս
վարձս ետ ասպնջականաց իւրոց,
զոր օրինակ արբոյ Կուսին, տանն
Զաքարիայ, հարսանեացն Կանայ,
Մագդալենացւոյն, և զկնի մա-
հուանն՝ արդարոցն որ՝ ի դժոխս:
Ո՛վ, որպէս մեծվայելչութիւն հիւ-
ղոյդ և շնորհքն առատաձեռք՝ որք
ընդ իւր՝ յորդորեն զքեզ՝ ի պատ-
ուաստել նմա բնակարան արժանա-
ւոր: Խնդրեա՝ ի նմանէ զի տացէ
քեզ ինքնին զառաքինութիւնս կա-

բնորս առ՝ի յարդարել զսիրտ քո, զոր ընտրեաց Ինքեան՝ի տաճարակ. « Եթէ ոչ Տէր շինէ զտուն՝ ՝ի նանիր վաստակին շինողք նորա » :

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ած՝ զի յաշխարհի ասա պանդուխտք և անցաւորք էք: Երկիրս այս Ճանապարհ է մեզ և տեղի աքսորանաց. երկինք են հայրենիք և վախճան մերոց ընթացից. իսկ Յիսուս տայ մեզ զանձն՝ի թոշակ՝ խորհրդեամբս այսու, առ՝ի կազդուրել զմեզ՝ի պանդխտութեան մերում, և տալ զօրութիւն հանապազորդելոյ յուղղութիւն գմնացուածս աւուրց կենաց մերոց: Ո՛հ, թէ քանի՛ պէտս ունիք այսպիսւոյ ինն կարողագոյն նպաստի՝ի նորոգումն ուժոյ մերոյ: Եւ այս արդիւնք են ողորմութեանն Յիսուսի. երկեաւ նա արձակել զմեզ անթոշակս մի գուցէ նուաղեսցիք զՃանապարհայն. « Եթէ արձակեմ զդ-

սա նօթիս։։ նքթիցին 'ի Ճանապարհի »։ — Ո՛վ սէր Յիսուսի, ցգէ՞ ինձ հնար օրհնել և փառաւորել զքեզ ըստ բաւականին։ Ընորհեա ինձ շահել 'ի փրկաւէտ պարգևաց ասոյ։ լեր ինձ 'ի պաշար 'ի կեանս և 'ի ժամու մահուան իմոյ։ « Պանդուխտ եմ ես առաջի քո, նժդեհ և անցաւոր, որպէս ամենայն հարք իմ։ Թոյլ արա ինձ՝ զի հանդեսցց մինչ չև երթեալ ցգեմ ուսոն ոչ ևս դառնիցիմ »։

Բ. Զմտաւ ած, զի ընկալեալ գամ մի զթոշակս զայս սուրբ, արժան է քեզ ընթանալ նորով քաջալերութեամբ, զի յայս իսկ սակս տուաւ քեզ։ Պարտ է քեզ առանց ինչ կասելոյ կամ յետս դառնալոյ՝ յառաջել 'ի Ճանապարհի փրկութեան և կատարելութեան, մինչև հասանիցես 'ի ծայր ասպարիզին, որպէս արար Եղիա յետ ուտելոյ զհացն առաքեալ յԱստուծոյ՝ 'ի ձեռն հրեշտակին։ « Եւ գնաց զօրութեամբ կերակրոյն այնորիկ ըզքառասուն տիւ և զքառասուն գի-

էր, մինչև ցլեառնն Աստուծոյ 'ի Քրիստոս» : Պարտ էր քեզ վաղա-գոյն ևս յառաջագէմ գոլ զարգա-ցեալ 'ի Ճանապարհի առաքինու-թեան, յետ այնքան բազում ան-գամ ընդունելոյ զսուրբ զայս ուռ-ճիկ. և քո դեռ հաղիւ թէ սկիզբն արարեալ է : Յամօթ լեր առաջի Աստուծոյ. երկիր, գուցէ գիշերն հասցէ 'ի վերայ քո. զիր չան դար-մանելոյ զվնաս կորուսելոյն :

ԺԳ

ՅԻՍՈՒՍ ԲԺԻՇԿ ՄԵՐ ԵՒ ԴԵՂ.

Նախ քան զպատուարգն

Ա. Զմտաւ ած, զի Յիսուս բժիշկ է գերագոյն հոգւոց մերոց և մարմնոց, որ Ճշդիւ գտակաւ գիտէ զամենայն ախտս մեր. որ կարեկից լինի մեզ. որ եկն յաշխարհս առ 'ի փարատել զցաւս մեր. և յամենայն 'ի կեանս իւրում՝ փոյթ յանձին ունէր օգնել հիւանդաց. որ կարէ և արդ բուժել զամենայն ախտս մեր զհոգւոյ և զմարմնոյ, եթէ դիմիցեմք առ նա զօրէն հիւանդացն աւետարանին, զնոցայն բերելով 'ի մեզ զվստահութիւն: Ծանիր զքեզ առաջի նորա որպէս զհիւանդ՝ որ մեծապէս կարօտ լիցէ օգնականութեան նորին: «Տէր, ահաւասիկ

զոր դուն սիրէիր՝ հիւանդացեալ է »։ Ոչ երկմտիմ, Տէր, ընդ կարո-
ղութիւն քո առ 'ի բժշկել զնա։ « Տէր, եթէ կամիս, կարող ես զնա
սրբել »։ Հաս ինձ վաղվաղակի 'ի թիկունս, ասասուածային բժիշկ
հոգւոյ իմոյ, առ 'ի բժշկել զսա։ « Բժշկեա զանձն իմ, ես մեղայ
քեզ »։

Բ։ Զմտաւ ած, զի ասասուա-
ծայինս այս բժիշկ, ոչ միայն գիտէ
զախտս մեր և կամի և կարէ բու-
ժել լոկով ևեթ բանիւ, այլ զի և
յինքն եբարձ զամենայն զցաւս մեր
և զհիւանդութիւն։ «Նա՝ զհիւանդու-
թիւնս մեր վերացոյց, և զցաւս մեր
եբարձ »։ Որպէս զի յանձին փոր-
ձոյ ծանիցէ զդեղսն որոց պէտս ու-
նիցիմք, և զի ազգոպագոյնս ևս գոր-
ծեսցէ զնոսին՝ յանձն էառ փոր-
ձիլ, պահել, քրտնիլ, վատառակել,
և տխրիլ և հոգալ, և կրեաց կիրս
ըստ ամենայն հոգեկան զօրութեցն
և ամենայն մասամբք մարմնոյն։ Ո՛վ
բժիշկ գթած։ երևեցա՛ռ ոք ուրեք
երբեք քեզ հանգուցատիպ, կամ՝

ի ոք առաւել կարեկից տկարու-
թեանցս մերոց, անձամբ զփորձ ա-
ռեալ զամենայնի՝ բաց 'ի մեղաց.
«Փորձ է ամենայնիւ ըստ նմանու-
թեան, առանց մեղաց»: Եւ զի՞նչ
քան զայս յորդորագոյն կայցէ մեզ
յ'առ 'ի նա վստահանալ. «Մատ-
ցուք այսուհետև համարձակուութիւն
առաջի աթոռոյ շնորհաց նորա, զի
ընկալցուք զողորմութիւն, և գըտ-
ցուք շնորհս 'ի դէպ ժամանակի օգ-
նականութեան»:

Զկնի պատարագին

Ն. Զմտաւ ած, զի Յիսուս 'ի
գոհութեան ոչ միայն բժիշկ է գե-
ղարագոյն հոգւոց մերոց և մարմնոց,
այլ և տայ մեզ նովիմբ զինքն 'ի գեղ
ամենայն ախտից մերոց: Զէ նա նը-
ւազեալ յառաջնոյ զօրութենէ ան-
տի իւրմէ. զի եթէ ապաքինէր զախ-
տաժէտս հեռաւորս, որպէս և ըզ-
մերձաւորս՝ այն ինչ մատուցեալ
ասա՛ ինքն, զի՞նչ ոչ գործեսցէ նա

քեզ, յորժամ բուսանդակ խակ ըզ-
նոյն զինքն 'ի քեզ կրեցես։ «Օրհ-
նեա անձն իմ զՏէր, ... ո քաւէ ըզ-
մեղս քո, բժշկէ զամենայն հիւան-
դութիւնս քո»։ Եւ ուստի է ինձ
այս, յեռ ընդունելոյ յաճախ ըզ-
դեղս զայս՝ անկանել դարձեալ ընդ
ախտիւք։ — Ոչ յանհնարութենէ
դեղոյն է, զի հզօր է նա և ազդու
և համաշխարհական, և զբազմաց
յայտ յանդիման բժշկէ զախտս.
այլ իմ են յանցանքն, ով Աստուած
իմ, խոստովան լինիմ զայն առաջի
քո. տուր շնորհս, զի յեռ այսո-
րիկ յօգուտս իմ վարեցայց տուաւ։

Ի. Զմտաւ ած՝ թէ ուրեմն պարտ
ի՞նչ է քեզ զգուշանալ, զի ազդեսցէ
'ի քեզ դեղս այս։ Նախ արժան է
քեզ տիրապէս փափագել բժշկու-
թեան անձինդ. «Կամիս ողջ լի-
նել». կամիցիս զայն. առնուցուս
արդարև յանձն՝ առնել զամենայն,
ձեռնամուխ լինել յամենայն, կրել
զամենայն, նուիրել զոհել զբոլոր՝
առ 'ի բուժումն ամբարտաւանու-
թեանդ, ցասմանդ, ագահութեանդ

և ցանկութեանդ։ Եթէ այսպիսի կամս ոչ ունիցիս՝ ոչ իմիք ապդեսցէ քեզ դեղդ։ — Երկրորդ անգամ՝, պարտ է քեզ հաստատութեամբ դնել 'ի մտի՝ եթէ կարող է նա 'ի բժշկել զքեզ. քանզի այսպէս և հիւանդքն աւետարանին ընկալան զբժշկութիւն ախտից իւրեանց, որպէս և յայտ է 'ի բանէն՝ որ ասի անդ յոճախ, «Հաւատք քո կեցուցին զքեզ»։ — Դարձեալ հարկ է թէ չզուցէ ինչ 'ի քեզ արգելիչ, այսինքն մեղք։ Բեւեռեա զայսոսիկ 'ի սրտիդ, և զգոյշ լեր զի մի դեղդ քաջ ապդու՝ փոխիցի քեզ 'ի դեղ մահու. ինդրեա 'ի Տեառնէ զի ինքնին պատշաճեցուսցէ զայն վերացք քոց։

ԺԴ

ՑԻՍՈՒՍ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՄԵՐ ԵՒ ՄՏԵՐԻՄ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած՝ զի Եսայի վերա-ձայնեաց զՅիսուս խորհրդական, և զի նմա կարի խակ ախորժելի է լինել այնպիսի 'ի սուրբ Գոհութեան։ Եթէ որդիքն Իսրայէլի և 'ի դոյզն ինչ ծփանս տարակուսանաց հարցանէին զբերան Տեառն առաջի տապանակի ուխտին, որ յարացոյց եւեթ էր առընթերութեան նորա, քանի՛ առաւել հարկ 'ի վերայ կայ մեզ հարցանել խորհուրդ 'ի Յիսուսէ 'ի հաղորդութեան, ուր կայն իրապէս և գոյացապէս։ Ո՛րչափ պէտս ունիմք խորհրդոց նորա՝ թէպէտ վասն մեր և թէպէտ վասն

այլոց, 'ի պէտպէս գիտութեանց՝ որ մեզն պատահեն։ Ամենայն յանցանաց զորս գործեմք 'ի պաշտաման մերում՝ պատճառ այն է, զի ոչ հարցանեմք ստէպ խորհուրդ 'ի Տեառնէ։ Ե՛րթ ապա առ այս հաւատարիմ խորհրդական. չգտանիցես զայլ ոք խմաստնագոյն, զգօնագոյն, և որ առաւել օգտակնդիր քո լցէ. նա է աղբիւր ամենայն խորհրդոց բարեաց։ «Ես խմաստութիւն բնակեցայ 'ի խորագիտութեան. զխորհուրդս և զգիտութիւն կոչեցի յիս. իմ է խորհուրդ և զգուշութիւն, իմ է հանճար և զօրութիւն»։

Բ. Զմտաւ ածէ, զի աստուածայինս այս խորհրդական առ 'ի թելադիր լինել մեզ՝ երկու ինչ իրս պահանջէ 'ի մէնջ, հլութիւն և հաւատարմութիւն։ Սկսիր արդ լուծանել զբնակարծիս քո. հրաժարեա՛ 'ի դատաստանաց քոց, յանձնիչնան կամացդ, յամենայն սեփական մտահաճութեանց, և 'ի մարդկային կարծեաց. առ 'ի լինելոյ ուն-

կընդէր և առ 'ի զհետ դալոյ խրատուց Յիսուսի միայնոյ։ Ծանիր իբրև Սողոմոն զոգիտուութիւն քո, և խնդրեա որպէս զնա սիրտ հեշտալուր. « Տէր Աստուած իմ, ես եմ մանուկ փոքր և ոչ գիտեմ զել և զմուտ իմ. և ծառայ քո 'ի մէջ ժողովրդեան քո է՝ զոր ընտրեցեր ժողովուրդ քո. և տացես ծառայի քումմ սիրտ լսելոյ և դատելոյ զժողովուրդ քո արդարութեամբ, խելամուտ լինել 'ի մէջ բարւոյ և չարի »։

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ածէ, զի Յիսուս 'ի գոհութեանս քաջիկ ծանուցանէ մեզ զի է հաւատուաւ բարեկամ մեր, որովհետև յայնչափ ընտանութիւն խոնարհի ընդ մեզ, մինչև բաժանորդս առնել զմեզ ամենայնի՝ զոր ունի. ամենայնի՝ որ էն. զի խնամ ածէ պիտոյից մերոց, զի տայ մեզ զգանձս իւր, զի ոչ միայն

առ մեզ գայ, այլ և 'ի մեզ. և այն-
պէս գրկապինդ միանայ ընդ մեզ,
որպէս թէ մի և եթ լինել ընդ մեզ,
եթէ օրէն ելցէ ասել: Բերկրեաց
ընդ երջանկութիւնդ, զի ստանաս
լիովին զՅիսուս, որ է ստուգապէս
քո ջերմ բարեկամ. կենակից լեր
նմին՝ որպէս ընդ գողար մտերմի.
մի՛ ինչ ակն ածելցես առ 'ի նմանէ.
մերկեաց առաջի նորա զքո կարիս և
անձկութիւնս. 'ի նմա գացես զա-
մենայն մխիթարութիւնս որովք կա-
ցատիս. ասա ընդ հարսին Եղբոց
երգոյն, « Սիրելին իմ ինձ և ես
նմա »:

Բ. Զմտաւ ած, զի խտիր մեծ 'ի
միջի կայ ընդ Յիսուս և ընդ այլ
բարեկամս. ոչ ինչ այնպէս դոյզ-
նագիւտ քան եթէ բարեկամ ան-
կեղծիկ, բարեկամ անշահասէր,
բարեկամ հաւատարիմ և տեւող:
Քեզէն տուր զկրաւն քոյով սեփհ-
կան փորձիւ. յորմէհետէ յաշխարհ
մտեր՝ գտեր ուրեք երբէք բարե-
կամ զոք այսպիսի. ոչ ապաքէն
բազմագոյնք 'ի բարեկամաց տուտա

նունք ոմանք են՝ որ սիրեն 'ի վերին երեսս, բերանով և բանիւք չափ, բարեկամք կամակատարք որ ատեն մեզ և տածեն զԹերուԹիւնս մեր. բարեկամք՝ որոց ոգիքն կցեալ են ընդ մեզ ցորվայր շուք դնեմք նոցա և կարօղ ինչ եմք օգտամատոյց լինել. բարեկամք՝ ըստ բերելոյ ժամանակին և ըստ պատահման, որք խնդրեն զմեզ 'ի բարօրուԹեան, և 'ի ձախողական՝ յուրատատ լինին 'ի մէնջ: Ա՛ռ ինչ ապա կապիցիս ընդ նոսին. ընդէր չունիցիս զՅիսուս առ միակ և միայն քո բարեկամ. եԹէ երբէք անտեսանց զքեզ 'ի կարօտուԹեան քում. կարիցեն երբէք գտանել զոք աղնուագոյն: — Ո՛վ Յիսուս, զքեզ միայն կամիմ սիրել և 'ի քեզ միայն ապաւինիլ. զայս գնեմ 'ի մտի: «Գտի զոր սիրեաց անձն իմ, կալայ զնա և ոչ Թողից»:

ԺԵ

ՅԻՍՈՒՍ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԵՐ ԵՒ ԸՆԿԵՐ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած՝ զի էջ Յիսուս յերկնից առաջնորդել մեզ զամենայն աւուրս պանդխտութեան կենաց մերոց. և ոչ դադարէ յառաջնորդելոյ մեզ և 'ի խորհրդեան Գոհութեանս յայսմիկ։ Հորդեաց նա առաջի մեր զՃանապարհս երկնից, և գիտէ ցուցանել մեզ զնոյն անխոտոր. «Ցոյց ինձ Ճանապարհ յոր գնացից». Թերևս գնաս դու ընդ թիւր և ընդ մոլար որ տանին 'ի մահ։ «Առաջնորդեա ինձ 'ի շաւիղս պատուիրանաց քոց, զի ընդ նոսա հաճեցայ»։

Բ. Զմտաւ ած՝ զի Յիսուս ոչ միայն առաջնորդ է քո, այլ և Ճա-

նապարհ ընդ որ պարտ էցէ քեզ երթալ։ Հարցանէր Թովմաս, Տէր ո՞րպէս կարէցեմք գիտել զՃանապարհն՝ ընդ որ մարթ էցէ մեզ գալ առ քեզ։ Պատասխանեաց նմա Յիսուս. «Ես եմ Ճանապարհն... ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ինչ ինև»։ Ո՛վ, ո՞րպէս սուրբ է Ճանապարհդ այդ, քանի՞ ապահով. սակայն ո՞րպէս դուն ուրեք գնացեր դու ընդ դա։ Պարտ և արժան է քեզ մոռանել յայդ շաւիղ և ընդ դա խաղալ. խնդրեա՛ 'ի Տեառնէ անդանդաղ զշնորհդ, զի քան զայդ չկաք այլ հնար փրկութեան։ «Ընդ իս թէ ոք մըտանիցէ, կեցցէ. մտցէ և ելցէ, և Հարակ գտցէ»։

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ած, զի Յիսուս 'ի Գոհութեան լինի իմն մեզ Ճանապարհակից. զի թէպէտ և անմահ է նա և փառաւորեալ, այլ թուի դարձեալ յանձն առնուլ զկեանս

ուղևորի, ոչ թէ միայն վերաբերելով առ մի մի 'ի մէնջ՝ զոր վասն հաստարակաց ամենեցուն և ասաց և կրեաց, այլ և բնակելով 'ի մեզ, այց առնելով ախտացելոցս, և օգնելով կարօտութեան մերում։ Եւ զի՞նչ քան զայս պատիւ մեծ լցէ քեզ՝ զՅիսուս ունել ուղեկից։ Շընորհս կալջիր զերախտեացն. և զի հաճի նա բնակել ընդ քեզ, այսուհետև զամենայն գուն գործեա հաճոյ լինել նմա, և զգոյշ լեր զի մի երբէք լքեալ թողցէ զքեզ՝ վասն քոց անգիտութեանց. «Մի թողուր զիս տէր Աստուած իմ, և մի 'ի բացեայ առնիր յինէն»։

Բ. Զմտաւ ած, զի որովհետև կամի Յիսուս լինել մեզ առաջնորդ և ընկերակից, հարկ 'ի վերայ կայ մեզ երթալ ընդ հետս շաւղաց նորա անսասերիւր։ Եւ զի՞նչ զհետ երթալն լցէ Յիսուսի, եթէ ոչ նմանել նմա։ Զի՞նչ լցէ գնալ ընդ շաւիղս նորա, եթէ ոչ կեալ որպէս նայն եկեաց, և որպէս կեայր արդեօք եթէ 'ի մերումս պայմանի կե-

նաց էր գտեալ։ — Առնիցեմք և մեք նոյնպէս։ Հանապազօր ընդունիմք զՅիսուս խբրև զառաջնորդ մեր և գնամք ընդ Հանապարհս հակառակս շաւղին՝ ընդ որ կամի նա առաջնորդել։ Եւ այս զինչ ինչ է, եթէ ոչ ծաղր առնել զնոսաւ։ — Ո՛վ աստուածայինդ Յիսուս, թող ինձ զանցեալ հեատուԹիւնս իմ։ «Եկից և ես զկնի քո՝ յոր վայր և երԹիցես»։ «Տէր, ընդ քեզ պատրաստ եմ և 'ի բանդ և 'ի մահ երԹալ»։

ԺԶ

ՑԻՍՈՒՍ ԲԱՐԵԽՕՍ ԵՒ ՀԱՇՏՈՒԹԻՒՆ ՄԵՐ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած՝ զի Յիսուս միջնորդ մեր եղև 'ի վերայ խաչին, և է իսկ յերկինս, և կամի լինել առանձին նմին եղանակաւ 'ի Գոհութեան։ Ապառաւաղ է նա նման հօր, մարդ՝ նման մեզ, վասն որոյ և քաջ գիտէ զերկոսին և զարգահատել. Ճանաչէ մերովանն զմեծութիւն և զծանրութիւն մեղաց մերոց, տեսանէ զպէտս մեր, լսէ աղօթից մերոց. յաստուածակողմն կուսէ ընծայէ հօր իւրում հատուցումն պատշաճական, մատուցանէ պատիւ անքաւ և ժամի վասն պիտոյից մերոց։ Ո՛վ, որպիսի փառք, ունել քեզ

բարեխօս այսպիսի առ Աստուած, առ անբաւն մեծվայելչութեամբ, զոր այնքան թշնամանեցաք։ «Եւ եթէ մեղեցէ ոք, ասէ սուրբն Յովհաննէս, ունիմք բարեխօս առ Աստուած զՅիսուս Քրիստոս՝ զարդարն և զանարատ»։ Դիմեա վըստահութեամբ առ միջնորդս երկնային, և գուն գործեա ընդունակ լինել բարեխօսութեան նորին, և միացիր մոգք ընդ նմա։

Բ. Զմտաւ ած, զի թէպէտ Յիսուս միայն է բարեխօս ընդ մարդիկ և ընդ Աստուած, զի նա միայն կարէ հաշտեցուցանել ընդ մեզ ըզՀայր, այլ առանձինն նմին շնորհիւ հաճեցաւ յանձն առնել 'ի մեզ ըզպաշտօն հաշտութեան, առ 'ի մշտընջենաւորել յանուն իւր և յարդիւնս՝ զպաշտօն միջնորդութեան։ «Եւ մեզ զպաշտօն հաշտութեան»։ Զայս վարեմք պաշտօն 'ի խորհրդեան ապաշխարութեան, և առաւել ևս 'ի սրբութիւն սեղանի, ուր ընծայեմք առ Հայրն յաւիտենական զՅիսուս Քրիստոս զՈրդին իւր միա-

ծին։ Ո՛, քանի՞ սրբութիւն, քանի՞ եռանդն և զղջումն ոչ պահանջեցէ առ 'ի մէնջ միջնորդութեանս այս պաշտօն. և ո՞ր քան հեռի եմք 'ի պատրաստութենէ աստի։ Աստուա-ծայինդ Յիսուս, զոր զթերութիւն անարժանութեան իմոյ, հաշտեցո զիս ընդ Հօր քում, մինչև ևս իմ մատուցեալ յայլոց հաշտութիւն. առաւել ևս ինձ պիտոյ է քո միջ-նորդութիւնդ՝ քան ժողովրդեանս, զի մեծ ևս են մեղք իմ. և առանց քո ուստի՞ դատանիցեմ յոյս թողու-թեան։ Ջնջեա զնոսա, Աստուած իմ, որպէս զի ընդունելի լիցի պա-տարագն զոր ընծայեցիս. գարշիմ մերժիմ ես 'ի նոցանէ յամենայն սրտէ։

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ած, զի Յիսուս կա-ղողութեամբ իւրով ետ աշխարհի զնաղաղութիւն, և պահէ զնոյն խորհրդով գոհութիւն, զոր և վան

այսորիկ իսկ սուրբ հարք կոչեն զօդ խաղաղութեան, շաղկապ ընդ Աստուծոյ, ընդ ընկերի և ընդ անձին իսկ։ Այսելս արդ՝ ի ցանկալի խաղաղութեդ. Յիսուս՝ ի սրտի քում մաղթէ, և ասայ քեզ զխաղաղութիւն՝ զոր ետ աշակերտաց իւրոց՝ ի վերնատանն. «Խաղաղութիւն ընդ ձեզ»։ Ո՞ր քան զայս երանութիւն մեծ կայցէ, խաղաղութիւն ունել հոգւով ընդ Աստուծոյ։ Զի՞նչ պարգև գերագոյն քան զսա. որ և ըստ սրբոյն Պօղոսի, «Խաղաղութիւն Աստուծոյ՝ ի վեր է քան զամենայն միտս»։ Եւ արդ ուրախ լեր և սուր փառս Աստուծոյ։

Բ. Զմտաւ ածա, զի այսպէս գերագոյն և սքանչելի գոլով շնորհի խաղաղութեան, պարտ է քեզ զամենայն հնարս հնարել առ՝ ի պահելոյ զայն։ Եւ զի՞նչ հնարքն լցեն։ Առաջին, փախիր՝ ի մեղաց, «Զի ոչ գոյ խաղաղութիւն ամենարշտաց»։ Երկրորդ, հնազանդ լեր յամենայնի կամացն Աստուծոյ. «Զի ո՞ խաստացաւ ընդ Աստուծոյ և հանգար-

տեաց »։ Երրորդ, կատարեա զամենայն պարտս քո անթերի և եռանդեամբ. «Զի արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին »։ Առաջադրեա զգուշանալ ամենայնի այսոցիկ։ — Այո, Տէր, առ ոչինչ համարեցայց զամենայն վիշտ և վըտանգ, առ 'ի չկորուսանել զխաղաղութիւն իմ որ ընդ քեզ, և շնորհիւ քով պահեցից զայն մինչև 'ի մահ։

ԺԷ

ՅԻՍՈՒՍ ՎԿԱՅ ԵՒ ԴԱՏԱՒՈՐ ԳՈՐԾՈՅ ՄԵՐՈՅ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած, զի Յիսուս վկայ է ամենայն գործոց մերոց. քանզի Աստուած գոլով՝ ամենուրեք է և տեսանէ որ ինչ անցանէ ընդ մեզ 'ի ներքոյ և արտաքոյ. այլ առաւել ևս վկայ է 'ի խորհրդեանս. քանզի զօր ամենայն յեկեղեցիս մեր կամք առաջի նորա. անդ կատարեմք զմեծամեծ պաշտամունս մեր, և անդ աղնուագոյնն 'ի պաշտամանց անտի կատարի յերկրպագելի անձն նորին՝ 'ի նուիրական պատարագի։ Եւ այսպէս տեսանէ նա զամենայն զոր գործեմք և թէ որպէս գործեմք։ Վկայ է և այժմիկ յօժա-

թութեանց յոր կապդ։ Խոստովան
լեր ճշմարտութեանս այսմիկ։ «Կէն-
դանի է Տէր Աստուած զօրութեանց,
Աստուած Իսրայէլի, որոյ կացի ա-
ռաջի նորա»։—Աստուած մեծ, դու
տեսանես զնեղքին իմ, եթէ լցեմ
բաւական մատչելոյ առ քեզ, եթէ
լցէ՞ հոգիս իմ մաքուր ըստ արժան
բաւականին, եթէ ոչ գացես ինչ
'ի նմա՝ որ չլցէ հաճոյ աստուածայ-
նութեանդ ներկայութեան։ Եւ ոչքան
են ինձ պատճառք ընդ այս խնիթա-
լոյ։ Ծանո՛ ինձ, Տէր, զծածկեալն
յիս. որպէս զի խոտան գրեցիս զոր
միանգամ անհաճոյն է յաչս քո։

Բ. Զմտաւ ած, զի պատճառ
բազում խոտորնակ գնացիս մերոց՝
չհաւատալն է ջերմն հաւատով՝ է-
թէ Աստուած տեսանէ զմեզ և կայ
ամենուրեք. և զի յայս սակս կամք
եղեն Յիսուսի զգալի օրինակաւ
մնալ 'ի միջի մերում ընդ սրբագոր-
ծեալ տեսակօք հաղորդութեան
պատարագին։ Իսկ արդ, յորմէհե-
տէ ընկալաք զնորհուրդս զայս, մի-
թէ ճանաչեցէ՞ք հաւատագոյն և

զներկայութիւն Աստուծոյ. ամիսս-
փիցեմք պնդագոյն և զուշ մնաց
մերոց, և կայցեմք հզօրագոյն և
եռանդեամբ յեկեղեցւոջ և առաջի
սեղանոյն: Ո՛հ, քանի՛ անպատկա-
ռութիւն, քանի՛ անհամեստու-
թիւնք և ցրուումն մնաց 'ի գործս
պաշտամանց մերոց: Համարիցի՛ն
ոք տեսանեն զմեզ՝ եթէ հաւա-
տայցեմք մեք յիսկական առաջի-
կայութիւնն Քրիստոսի 'ի սուրբ
խորհրդեանս: Հատո արդ փոխա-
րէն ամենայն յանցուածոց զոր յան-
ցեարդ ընդդէմ նորա 'ի խորհուրդ-
դեանս յայսմիկ. պատրաստեա զան-
ձըն քո ընդունել զնա մեծագոյն
և յարգանօք քան զանցեալն: «Ոք
երկնչին 'ի Տեառնէ, ասէ խնաս-
տուն, պատրաստեացեն զսիրտս
իւրեանց և առաջի նորա խոնարհե-
ցուսցեն զանձինս իւրեանց»:

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ած՝ զի նոյն Յիսուս որ գալոց է 'ի կատարածի դարուց դատել զկենդանիս և զմեռեալս ահագին լուսով փայլմամբ, և որ սահմանեսցէ 'ի վախճանի կենացս կամ զերանութիւնն անվախճան և կամ զաղէտս, կայ 'ի Գոհութեանս յայսմ, որպէս յաղթող դատաստանի, ուստի զօր ամենայն կարդայ մեզ վըճիռս շնորհաց և մահուան, ըստ օրինակին՝ որով ընդունիմքս զնա՝ բարուք կամ չարաչար. քանզի խրատէ զմեզ առաքեալ, ելթէ «Որ ընդունի զնա անարժանութեամբ՝ դատաստանս անձին իւրում ուտէ և ըմպէ»: Երկիր պապ Յիսուսի 'ի հաղորդութեան՝ որպէս դատաւորի քում: «Նա է սահմանեալն յԱստուծոյ դատաւոր կենդանեաց և մեռելոց»: Պատկառ կաց ամենայն դատաւորական ձրից նորին, իշխանութեանն, իմաստութեան և աբ-

գարութեան նորա. երկիր 'ի վրձ-
ռոցն զոր եհատ 'ի վերայ ամենայն
պատարագացն զոր մատուցեր յօրէ
քահանայութեանդ և զոր հանդեր-
ձեալդ էս մատուցանել. ընկեա ըզ-
քեզ գլխովին 'ի ձեռանորա : — «Ա-
տուած իմ, 'ի ձեռս քո է ժառան-
գութիւն իմ». քեզ յանձն առ-
նեմ զայն. այժմէն առնում յանձն
զոր և սահմանիցես ինձ վասն կե-
նացս, վասն կատարածիս և վասն
յաւիտենականութեան իմոյ :

Բ. Զմտաւ ած, թէ ցորվայր
հասանէ բարութիւն Յիսուսի դա-
տաւորին քո 'ի Գոհութեանս. ծած-
կէ զամենայն զփառս մեծվայելչու-
թեան իւրոյ, որպէս զի համարձա-
կագոյն ես մատչիցիս առնա. պատ-
րաստ է լսել քեզ յամենայն ժա-
մու, և կատարել զինդրուածս քո :
Ո՛վ մեծի բաստիդ, ունել քեզ դա-
տաւոր այդքան քաղցր և անյիշա-
չար : Արդ գիտա՛ զօգուտ քո մինչ-
դեռ ժամանակ է շնորհաց և գթու-
թեան, մինչև ելցէ եկեալ օր բար-
կութեան նորա և վրիժուց : Գուն

գործեա ողոքել զնա, մինչդեռ 'ի ձեռս քո է։ «Տէր մի սրամտութեամբ քով յանդիմաներ զիս և մի բարկութեամբ քով խրատեր զիս։ Ողորմեա ինձ Տէր, զի հիւանդ եմ ես»։ Պատժեա զիս որպէս հայր և մի որպէս դատաւոր. պատժեա զիս առ 'ի վերկել և մի առ 'ի կորուսանել. հայեաց ընդ յանցանս իմ որպէս ընդ անգիտութիւնս, և մի որպէս ընդ արհամարհանս անբաւդ մեծվայելչութեան. զթա 'ի մեղաւորս որ զողորմութիւն խնդրէ 'ի քէն։ «Ապտուած քաւեա զիս զմեղաւորս»։

ԺԸ

ՅԻՍՈՒՍ ԳԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՐՁՔ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած՝ թէ որ գին կայէ հոգւոյ քո, և որքանոյ եղև նա Յիսուսի։ «Ոչ ապականացու արծաթեղինօք և ոսկեղինօք փրկեցարուք, այլ պատուական արեամբն Քրիստոսի, իբրև անբիծ և անարատ գառին»։ Ահաւադիկ գին քո 'ի Գոհութեան սամ։ Խորհեա և տես, որքան պարտիս զդա մեծարել, և զինչ ինչ առնել վասն Աստուծոյ՝ որ արար քեզ զայդ ամենայն։ Եւ չկայէ արդար և իրաւացի՝ նուիրել քեզ նմա զանձն գլխովին և ծառայել նմա միայնոյ, զնա միայն փառաւորել ըստ քում կարի, և կրել զնա պատկառանօք 'ի մարմնի

քում՝ որ նմա իսկ անկ է։ Զայս այսպէս իմաստասիրէ սուրբ առաքեալն Պօղոս ըստ մտաց բանիցս եթէ «քանզի գնոց գնեցայք, փառաւորարարէք զԱստուած 'ի մարմինս ձեր»։ — Դու պատրաստեա զհոգի իմ և զմարմին, աստուածայինդ Յիսուս, որ կամիսդ առնել զնոսին քեզ 'ի սրբարան և 'ի տապանակ։ զքոյդ՝ քեզ մատուցանեմ։ Ժառանգեա զդա մինչև յաւիտեան։

Բ. Զմտաւ ածա, զի թէպէտ գինք զոր եաս Յիսուս 'ի ստանալ զմեզ, մեծ յոյժ և շատ եղեն 'ի փրկանս հազարաց աշխարհաց, սակայն ոչ զօրեցեն բաւել՝ բայց եթէ ինքնին 'ի մեզ ձգեցեմք զարդիւնս նորին, արժանապէս մերձենալով 'ի խորհուրդն սուրբ։ Ո՛րքան պէտս ունիմք տակաւին արեանն Քրիստոսի առ 'ի մաքրութիւն անձանց մերոց։ և քանի՛ ջանից չեցէ մեզ կարեւոր՝ առ 'ի վայելելոյ յարդիւնս նորին։ Ո՛հ, ո՞րքան սակաւք եղեն որք յօգուտ արկանեցեն զվաստակս նորա և զմահ։ Լուր, զիարդ ամբաստան

լինի 'ի ձեռն Եսայեայ մարգարէի, և երկիր զի մի և զքէն լցեն տրրտունջք. «Զուր ուրեմն վաստակէի տարապարտուց, յոչինչ եռու զզօրութիւն իմ. վասն այսորիկ իրաւունք իմ 'ի Տեառնէ, և վաստակ իմ առաջի Աստուծոյ իմոյ»: — Ո՛հ Յիսուս, մի, մի վայրապար վատնիցին վասն իմ գինքս այս անբաւ. մանաւանդ զհոգի իմ զօրութեամբ արեան քո պատուականի:

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ած, զի որ վարձ է հրեշտակաց և սրբոց յերկինս Յիսուս՝ նոյն և քո իսկ վարձք է 'ի հաղորդութեան. խաւիր այս միայն է, զի սուրբք դէմ յանդիման տեսանեն զնա յերկինս, իսկ դու ընդ քօղով խորհրդեանս: Ո՛վ բարութեանն Յիսուսի, որ տայն մեզ կանխագոյն զվարձս մեր 'ի հաղորդութեան: Զօրականն ոչ պատկի մինչև քաջ մարտուցեալ. և մշակին ոչ հատու-

ցանեն մինչև նորա գործեալ. իսկ Յիսուս յառաջէ տալ մեզ զվարձս մեր. 'ի կշիռ ած զինդուլթիւն զոր ունիցիս յերկինս 'ի ժառանգէլդ զԱստուածն քո՝ 'ի քաղցրութենէ աստի յայսմանէ՝ յոր վայելեսդ այժմիկ, թէպէտ և ժառանգիցես զնա թերակատար, ընդ աղօտ և 'ի ծածուկ։—Ո՛րպէս սիրելի են յարկք քո, Տէր. ցանկայ և փափաքէ հոգի իմ՝ լինել 'ի տան Տեառն, և ահա նուաղի յանձկանաց ըղձից եռանդանն։ Ո՛վ Յիսուս, յեա այնքան նուագս ընդունելոյ զքեզ 'ի կեանս յայսոսիկ, ժառանգեցիս զքեզ յաւիտեան 'ի հանդերձեալսն. « Ամենայն գործք քո գովեսցեն զքեզ, Տէր, և սուրբք քո օրհնեսցեն ըզքեզ »։

Բ. Զմտաւ ած, և տես թէ զոր վայր ժամանէ առատութիւն և մեծվայելչութիւն Յիսուսի. զոր ամենայն տայ զանձն իւր մեզ 'ի վարձս դուշնաքէլին և փոքուն՝ զոր թէ առնեմք ինչ վասն նորա։ Եթէ միանգամ՝ եթէ յամենայն կեանս մեր

ընդունէաք զնա, տակաւին առաւ-
ել քան զոր արժէաքս՝ առնուաք։
և ահա Յիսուս հանապազօր տայ
զվարձս մեր, քանիցս անդամ թէ
պատարագիցեմք։ Ո՛վ, որպիսի՛
արժան էր մեզ բերիլ եռանդեամբ
'ի պաշտաման նորին։ և ո՛հ, թէ
զիա՞րդ հեղգք եմք և գաղջք։ Հա-
զիւ թէ զոր 'ի հարկէն պահանջիմք՝
առնեմք։ աւա՜ղ ամօթոյս և կորա-
նաց։ «Տուր բարձրելոյն ըստ տրոց
նորա, և առատ ակամբ զդիւա ձե-
ռաց։ զի Տէր հատուցանող է, և
եօթնապատիկ հատուցցէ քեզ»։

ԺԹ

ՅԻՍՈՒՍ ԿԵԱՆՔ ԵՒ ՄԱՀ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած՝ զի Յիսուս կենդանի է ասա՝ որպէս էրն երբեմն 'ի վերայ երկրի և էն այժմիկ յերկինս. և զի կեանքն գործովք յայտնին՝ գործէ նա հանապազ. մատուցանէ Հօրն գոհութիւնս վասն իւր և վասն մեր, առաւել քան զամենայն գոհութիւն հրեշտակաց և սրբոց համանգամայն՝ զանցեալն և զապագայ: Խոկայ զմէնջ, թախանձի վասն մեր, և տայ մեզ շնորհս առաւել քան զարժանն մեր. և կարէ ասել 'ի սուրբ հաղորդութեանս զոր ասէր 'ի տնօրէնութեանն իւրում. « Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր, և ես կենդանի եմ

վան հօր »։ Ո՛վ, քանի՜ անարատ
են կեանք Յիսուսի 'ի հաղորդու-
թեան սրբում։ Երանի՜ էր մեզ
եթէ գոնեայ մերձաւոր նմն նորայ-
ուն լինէին կեանք մեր, որոց ե-
հաս քահանայանալ առ 'ի յարա-
ձգել զկեանս նորա 'ի վերայ եր-
կրի։— Ո՛վ Յիսուս, տես և կորո՛ յիս
զայլ ամենայն կեանս, զկեանս ըզ-
գայարանաց, զկեանս կրից, զկեանս
խառնուածոյ բնութեան, զկեանս
խելաց և մտաց. զի կեցից կենաք
հաւատոյ, և աստուածային քո
կենաք։

Բ. Զմտաւ ած, զի Յիսուս որ
կեանք է յաւիտենական՝ որ էն առ
Հօր, որպէս ասէ սուրբն Յովհան-
նէս, և երևեցաւ մեզ 'ի մարդեղու-
թեան իւրում ընդ քօղով մահկա-
նացու կենացս, 'ի սուրբ հաղոր-
դութեանս յայտնի է աղբիւր ամե-
նայն կենաց և շնորհաց սփռեալոց 'ի
հոգիս։ « Տեսաք մեք զնա, ասէ,
Յովհաննէս, լի շնորհօք և ճշմար-
տութեամբ։ Երթ ուրեմն առ աղ-
բիւրն առատ՝ զի լցցիս կենաքն շնոր-

հաց և առաքինութիւն, որում այն-
չափ կարօտ ես։ Սրեա՛ի քեզ զքաղց
կենդանարար և զծարաւ սատանիկ
այսմ արդարութեան, մինչև յա-
գեացիս և արբեսցի ծարաւ քո։ ա-
սա ընդ սամարուհւոյն։ «Տէր, տուր
ինձ զջուրն զայն, զի մի՛ ևս ծարա-
ւեցիս»։

Զկնի պատարագին

Ա։ Զմտաւ ած, զի Յիսուս որ
կենդանի է յինքեան և աղբիւր կե-
նաց մեր է՛ի սուրբ Գոհութեանս,
փոխեցաւ՛ի վիճակ խորհրդական
մահուան՝ ընդ անշուշտ տեսակօք
արբութեանս, զի առաւել ևս պա-
տուեսցէ զհայրն, և սէր մեծագոյն
մեզ ցուցցէ։ մինչև Ճահագոյնս ա-
սել նմա քան արբոյն Պօղոսի, «Հա-
նապազ մեռանիմ»։ Նա վասն քո
մեռաւ՛ի վերայ սեղանոյն։ դու
զի՞նչ առնիցես՛ի հատուցումն։ Ե-
թէ և հազար կեանս ունէիր, ո՞չ
ապաքէն պարտ իսկ էր քեզ հան-

գերձել նուիրել նմա զամենայն։ Արդ գոնեա գիր 'ի մոլ 'ի սպասու նորին վարել զայն, 'ի նորա փառս և յընկերին փրկութիւն։ — Ո՛վ Յիսուս, չեմ արժանի կրել զմարտիրոսութիւն վասն քո, որպէս բազումք 'ի սրբոց արարին, այլ կամիմ տանել ամենայնի վասն քո։ « Յանկամ եղանել 'ի մարմնոյս և լինել ընդ Քրիստոսի »։

Բ։ Զմտաւ ած՝ զի Յիսուս փոխեցաւ յայս վիճակ մահու, զի իւրով օրինակաւ ուսուցէ քեզ կեալ որպէս զմեռեալ։ այս է՝ զերծ 'ի կապանաց աշխարհի և անձին։ առանց ինչ գորովաբար փարելոյ զարարածովք։ Յայս միտս արժան է քեզ հուչակել զմահն Յիսուսի յամենայն նուագս հաղորդելոյ քոյ։ « Քանիցս անդամ թէ ուսիցէք ըզհացս զայս և զբաժակս ըմպիցէք, զմահն Տեառն պատմեցէք »։ Ո՛հ, ո՞ւրքան հեռի ես 'ի պայմանէ սասի մահու՝ յորում 'ի դէպ էր քեզ լինել։ Յիշեա զբանն Տեառն զոր ասաց։ « Եթէ ոչ հատն ցորենոյ անն-

կեալ յերկիր մեռանիցի՝ ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ »։ — Ո՛վ Յիսուս, տուր ինձ զնորհս մեռանելոյ աշխարհի և անձին, աչս ունել և ոչ տեսանել, ականջս և ոչ ինչ լսելատանջել զզգայութիւնս և զկիրս ՀԳնութեամբք, զի նմանող եղէց մեռուսակ կենաց քոց։

Ի

ՅԻՍՈՒՍ ՍՆՈՒՆԴ ՄԵՐ ԵՒ ՇՆՈՐՀՔ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած՝ զի Յիսուս կամի մնունդ մեր լինել՝ ի Գոհութեան, առ՝ ի տածել և պահպանել զաստուածեղէն կեանս որ տուաւ մեզ. քանզի տուաւ մեզ Հոգին սուրբ առ՝ ի բնակել՝ ի մեզ և լինել կեանս հոգւոյ մերոյ։ Արդ առ՝ ի պահել զԱստուած, պէտք են մեզ Աստուծոյ. զի ոչ է մարթ Աստուծոյ կերակրիլ՝ եթէ ոչ ինքեամբ։ Վասն այսորիկ իսկ ասաց Յիսուս՝ ի ձեռն Յովհաննու, եթէ ասէն՝ «Զի ըղկեանս ունիցին, և առաւել ևս ունիցին»։ այսինքն է, ասէն յաշխարհ՝ ի տալ մեզ զառաջին կեանս՝ քաւութեան մեղաց։ և գայ դարձեալ

խորհրդով հաղորդութեան՝ առ 'ի դարմանել և աճեցուցանել զառա-
ջինզայն կեանս զոր ետն մեզ։ — Ո՞վ
խմաստութիւն Յիսուսի, ո՛վ բարու-
թիւն Յիսուսի, որ այսքան սքան-
չելապէս մատակարարէ մեզ կերա-
կուր հոգւոյ։ Քանի՛ մեծարանօք
չիցէ ինձ օրէն ընդունել զսրբազան
զայս կերակուր. այլ և քանի՛ մաք-
րութեամբ սրտի, ըստ սրբոյն Պօ-
ղոսի։ «Փորձեսցէ մարդ զանձն իւր,
և ապա 'ի հացէ անտի կերիցէ»։

Բ. Զմտաւ ած, զի կերակուրս
այս աստուածային՝ ներգործէ 'ի հո-
գիս մեր զարմանալիս մեծամեծս է-
թէ ընդունիցիմք որպէս և արժանն
է։ Նախ, յօդէ զմեզ սերտ ընդ Յի-
սուսի, ըստ բանին Յովհաննու, թէ
«Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ
զարիւն իմ, յիս բնակեսցէ և ես 'ի
նմա». երկրորդ, պահէ և յաւե-
լու զկեանս հոգւոյ և զշնորհս. եր-
րորդ, մեռուցանէ զախտս մեր, և
ախորժելիս գործէ մեզ զաստու-
ծոյն։ Տես եթէ աստուածային
այս կերակուր՝ ներգործեաց և 'ի

քեզ զայս ամենայն. մի գուցէ և ոչ մի ինչ յայդցանէ քաղեցեր դու մինչև ցայսօր։ Եթէ այսպէս իցէ, դիտասջիր առանց ինչ երկբայելոյ, զի ընկալեալ ես զնա անբարի պատրաստութեամբ, առանց ըղձակաթ սիրոյ և յօժարութեամբ առ մեզս ինչ։ — Ո՛վ Աստուած իմ, մի՝ տար հասանել յիմ վերայ այսքանոյ աղիախս. տուր ինձ աճել շնորհօք և առաքինութեամբք՝ ըստ յաճախ ընդունելութեան խնոյ զսրբազան զայս կերակուր. զոր և խնդրեմ 'ի քէն այսօր այնու փափագանօք՝ որ ոսով քաղցեալ ոք և սովեալ խնդրիցէ զոգեպահիկն. « Զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր »։

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ածէ, զի այս խոսիր է ընդ Գոհութիւն և ընդ այլս 'ի խորհրդոց, զի նոքա ածեն շնորհս և եթ պատահականերս, զեղմունս և զեղմունս զառաջին շնորհացն. իսկ հա-

ղորդութիւն ունի յինքեան զնակա-
կան շնորհս, զհեղինակ և զլրումն
ամենայն շնորհաց՝ զՅիսուս Քրիս-
տոս, զտէրն մեր, զՃշմարիտն Աս-
տուած և զՃշմարիտ մարդ. «Ինձա,
ասէ առաքեալն Պօղոս, բնակէ ա-
մենայն լրումն աստուածութեանն
մարմնապէս». այսինքն է՝ էապէս,
և ոչ առերևոյթ ինչ տեսլեամբ,
կամ շնորհաց ևեթ բնակելով 'ի
նմա: Ո՛հ, քանի՛ մեծ է բաղդ քո,
զի բերես 'ի քեզ զտուչն շնորհաց
էապէս: Հատո նմա զպաշտօն քո
և զերկրպագութիւնս. հայցեա 'ի
նմանէ տրբել զքեզ, և տալ քեզ
շնորհս՝ ըստ կարօտութեան քում
և ըստ տրբութեան կարգի քում:

Բ. Զմտաւ ած, զի յընդունելդ
զՅիսուս, զտուչն շնորհաց, ընկա-
լար զաղբիւր իսկ ամենայն շնորհաց.
զսրբոց առաքելոց, մարտիրոսաց,
խոստովանողաց, կուսանաց, քա-
հանայից և ապաշխարողաց. և զի
զայդ ամենայն ժառանգես 'ի Յի-
սուս: Ո՛վ, որպիսի՛ առատութիւն,
քանի՛ ճոխութիւն անճառելի: Եւ

ես զինարդ այսպէս սակաւս օգուտ-
ցայ անսի։ Ընդէր չունիցիմ ես զնա-
խանձ առաքելոց, զհամբերութիւն
և զարիութիւն մարտիրոսաց, զհա-
ւատս խոստովանողաց, զմաքրու-
թիւն կուսանաց, զերկիւղ սուրբ
քահանայից, զմեռուցումն սրբոց
ապաշխարողաց, մինչ ընդունիմն
յաճախակի զտուիչն և զաղքերս
ամենայն առաքինութեանցս այսո-
ցիկ։ — Ո՛հ, Տէր, հոգի իմ առաջի
քո կայ որպէս երկիր անջրդի.
«Անձն իմ որպէս երկիր ծարա-
ւի է առ քեզ»։ Ամաչեմ ես.
յանցաւոր եմ ես. օրինակք սրբոց
քոց դատապարտ առնեն զիս, զի
առաւել քան զիս հաւատարիմք
եղեն շնորհաց քոց. այլ ես ոչքան
ապքատ եմ յառաքինութեանց՝ այն-
քան և պէտս ունիմ շնորհաց։ Լցցի
հոգի իմ շնորհօք, յաղեսցի և ապ-
րարեսցի. և բերան իմ օրհնեսցէ
զքեզ ցնծութեամբ սրտով։

ԻԱ

ՅԻՍՈՒՍ ԱՊԱՍՏԱՆ ՄԵՐ ԵՒ ՅՈՅՍ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած, զի Յիսուս 'ի Գոհութեանս ապաստան մեր է. և որպէս 'ի հնումն հաստատեալ էր Աստուծոյ Իսրայէլի քաղաքս ապաստանի՝ յապաւինութիւն յանցուցելոց, և առ 'ի կալ յապահովի յերեսաց թշնամեաց իւրեանց, նմանապէս կարգեաց և Յիսուս զխորհուրդս զայս 'ի նորումն՝ լինել մեզ տեղի ապաւինի 'ի թշնամեաց որ շուրջ պաշարեն զմեզ։ —Այո, Աստուած իմ, դու ես ապաւէն իմ 'ի տառապանս՝ յոր ըմբռնեալս եմ. 'ի քեզ գոլոյ զԱստուածն իմ պաշտպան և ամուր փրկութեան իմոյ. «Լէր իմ, Աստուած, պաշտպան

և տուն ապաւինի ապրեցուցանել զիս. զի հզօրիչ իմ և ապաւէն իմ դու ես »։ Առանց քո՝ աշխարհ, մարմին և սատանայ, թշնամիք իմ՝ յաղթանակեսցեն 'ի վերայ տկարութեան իմոյ. իսկ յեցեալ յօգնութիւն քո՝ ժամիմ տեսել ամենայնի. « Քեզ վրիպեցայց 'ի փորձութենէ. Ասուծով իմով անցից ընդ պարիսպս »։

Բ. Զմտաւ ած, զի Յիսուս 'ի Գոհութեանս է ապաստան մեր և յերեսաց բարկութեան Հօր իւրոյ. զի հաշտ առնէ զնա զենմամբն իւրով, և յարաժամ պատարագաւն լինի բարեխօս և միջնորդ վասն մեր։ « Վէմք ապաւէն նապաստակաց ». Քրիստոս ինքն վէմն է և ապաւէն մեղաւորաց դիզացելոց խռուացելոց մեղօք։ Քանիո՞ն չեցեմք բարեբաղդք զայսպիսի ունելով մեզ ապաւէն անկասկած։ Հապա, դիմեսցուք առնա լի հաւատով, ծածկեսցուք ըզմեզ 'ի ծերպս վիրաց նորին. մի զանդիտեսցուք բնաւ հուպ մատչել առնա, թէ և կարի յոյժ մեղաւորք և-

ցեմք, զի ինքնին հրաւէր կարդայ մեզ մատչել առ ինքն. «Եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ»։ Եւ արդ ես յո՛ երկեցայ ապաստան, Յիսուս իմ, եթէ ոչ 'ի քեզ։

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ածմ, զի Յիսուս է միակ յոյս մեր'ի Գոհութեան. ինքն է աղբիւր ամենայն բարութեանց, շնորհաց և փառաց. և զի առանց արդեանց նորին՝ ընդունիմք և ոչ լինէ։ Նա ինքն կամի և կարէ օգնել մեզ. խոստացաւ և հաւատարիմ է 'ի խոստման իւրում. այս առաւելութիւնք են՝ զորս չիք երբէք գտանել յարարածս։ Յո՞ կարիցեմ հաստատել յապահովի զյոյս քո՝ եթէ ոչ 'ի նա։ Ընդէր յենուս 'ի բազուկ մարմնեղէն։ Եւ զի՞նչ հատուցին քեզ մինչև ցայժմ ամենայն ակնկալութիւնք մարդկայինք։ Ի՞մ իմիք յուսայցես յաշխարհէ,

'ի մեծամեծաց և 'ի մտերմացդ. ոչ ամենեքին նոքա 'ի չէք դարձցին 'ի միասին և բարձցին յերկրէ։ Ո՛հ, զի՞ բարի է տալ զանձն Աստուծոյ, քան դնել զյոյս իւր 'ի մարդ մահկանացու. «Բարի է յուսալ 'ի Տէր՝ քան յուսալ 'ի մարդիկ»։ Ի քեզ միայն, Յիսուս իմ, 'ի քեզ միայն դնեմ զամենայն զյոյս իմ և յայսմ աշխարհի և 'ի հանդերձելումն. յո՛ր վինճակ և գտից զանձն իմ, միշտ 'ի քեզ կացից ապաստան։

Բ. Զմտաւ ած, զի Թէպէտ և Յիսուս ինչ բովանդակ յոյս մեր 'ի Գոհութեան, այլ սակայն կամի զի գործեսցուք և մեք զամենայն՝ զոր պարտիմք առ 'ի լինել արժանիս պաշտպանութեան նորին։ Աղաչեսցուք զնա, գործեսցուք զբարիս, ելցուք հաւատարիմք 'ի պարտս մեր. և 'ի վերայ ամենայն ջանից և վաստակոց՝ ծանիցուք զմեզ ծառայս անպիտանս. ապ՝ եթէ ոչ՝ 'ի զուր և անտի է ամենայն յոյս մեր և ակնկալութիւն. «Յուսա 'ի Տէր, և արա զքաղցրութիւն, և բնակեա

յերկրի՝ և հովուեսցիս 'ի մեծութեան նորա »։ Մատո գոհութիւնս զամենայն բարեացն՝ զոր ընկալար 'ի նմանէ. ակն կալ և այնմ՝ ամենայնի՝ զոր խոստացաւ քեզ. և առ 'ի լինել արժանի նոցունց՝ զկոր հաստատատակս 'ի մտի՝ շնորհօք նորա ջանալ յամենայն զօրութիւն քումմէ։

ԻԲ

ՅԻՍՈՒՍ ԳԱՆՁ ՄԵՐ ԵՒ ԲԱՐՕՐՈՒԹԻՆ

Նախ քան զպատարագն

Ն. Զմտաւ ած, զի Յիսուս 'ի Գոհութեան՝ գանձ է ստուգապէս ծածկեալն յագարակի, զորմէ Ճառէ յաւետարանն. քանզի բովանդակէ յինքեան զամենայն լրմունս ածային, զամենայն լաւութիւնս և զամենայն արդիւնս երկրպագելի մարդկութեանն Քրիստոսի. զամենայն մեծութիւնս շնորհաց, զամենայն պարգևս Հոգւոյն սրբոյ, թէպէտ և զտկար տարերս հացին և գինւոյ միայն տեսանիցեմք մեք։ Եթէ քաջ 'ի վերայ հասեալ նցես ճշմարտութեան այսմիկ, չկայ չմնայ ինչ զոր չնցէ քեզ արժան տալ առ 'ի տացուած մեծագնի գանձուս՝

որպէս և տեսանեմք յաւետարանի զգտող գանձու, որ վաճառեաց զամենայն զոր ունէրն՝ առ 'ի գնել զայն։ Յայս միտս էր և Պօղոս. աղէ խորհրդաղգած լեր և զոյգ ընդ նմին ասա անկեղծ մտօք. «Յամենայնէ զրկեցայ և համարիմ կղկղանս, զի զՔրիստոս շահեցայց»։

Բ. Զմտաւ ած, քանի՛ խնդութիւն լինի մարդոյ որ գտանիցէ գանձ. որպիսի՛ ժրութեամբ բառնայ զայն, քանի՛ խնամօք ծածկէ, և ո՛րքան խիթայ ընդ կորուստս նորին, և ո՛րպէս անդուլ զայնմանէ խոկայ. «Ո՞ւր գանձն ձեր է, անդ և սիրտք ձեր եղիցին»։ Քննեա արդ և տես եթէ ի՞նչ սիրտ քո 'ի հաղորդութեան, եթէ ի՞նչ առլցեալ նովաւ, եթէ փափաքիցե՞ս այնմ միայնոյ։ Ո՛հ, քանի՞ն ցրտութիւն և անփութութիւն է 'ի քեզ. թերևս սիրտ քո ի՞նչ յաշխարհի, 'ի հեշտութիւնս, 'ի պատիւս, 'ի մեծութիւնս. գուցէ ոչ յայլ ինչ այնպէս խնամով հոգայցես՝ որպէս 'ի կուտել գանձս ապականելիս, զոր

գողք կարեն գողանալ. որպիսի անմտութիւն։ Օ՛ն, խնդրեա այս սուրհեան զգանձն անապառելի, որ ոչ յաւելու և ոչ նուազի. «Գանձ անպակաս»։ Խնդրեա զՅիսուս Քրիստոս և սա ընդ սրբոյն Իգնատեայ, զՔրիստոս միայն վայելեցիր Յիսուս, զքեզ ևեթ խնդրեմ, այլ իմիք չէ՛ ինձ պիտոյ։

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ածա, զի ընկալար 'ի սրբում պատարագի՝ զՅիսուս ըզնոյն, որ ընդ Հօր և Հոգւոյն սրբոյ տնօրինէ յերկինս զամենայն երանութիւն հրեշտակաց և զսրբոց. որ բարեբաստս առնէ զհոգիս տեսլեամբ աստուածութեան իւրոյ, և զմարմինս՝ մարդեղութեամբ իւրով. և ըստ այսմ սարսափ նա ինքն է երջանկութիւն մեր գլխովին. քանզի առիթ է էականի և գերագունի մերոյս երանութեան։ Մուտ յուրախութիւն հրեշտակացն և սրբոց, միացեր ընդ նոսա 'ի փառաբանութիւն և յերկրպագութիւն, 'ի սէր և 'ի շնոր-

հակալութիւն. «Օրհնեցէք զտէր յերկնից, օրհնեցէք զնա 'ի բարձանց. օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա. օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա»:

Բ. Զմտաւ ած, զի Յիսուս 'ի Գոհութեան՝ ոչ միայն երանութիւն է մեզ՝ 'ի յաւիտենականութիւն ունդր, այլ և յառօրէիս յայսմիկ: Քանզի նա ազատէ զմեզ յամենայն ալիսից մերոց, և ընու զմեզ ամենայն բարեօք, նա միայն բաւական է ընուլ զամենայն իղձս սրտից մերոց: Ծանիր զմոլորութիւն կենցաղասէր մարդկան, որ գնեն զամենայն բարօրութիւնս իւրեանց 'ի հեթեթանս. «Երանեցիս ժողովրդեան՝ որոց այս այսպէս է»: Բաւականաբանիկ համարին զընչեղս, զբարձրացեալս պատուովք, և զօրացեալս հեշտութեամբք: Քանի՛ խաբին նոքա, Աստուած իմ: «Երանի՛ ժողովրդեան՝ որոյ տէր Աստուած է նոցա»: Զուարճացիր ընդ այսպիսիս մեծ բարերջանկութիւն, և պահեա զդա առաւել քան զամենայն գանձս աշխարհի:

ԻԳ

ՅԻՍՈՒՍ ՔԱՌՔ ՄԵՐ ԵՒ ԽՆԴՈՒԹԻՒՆ

Նախ քան զպատարագն

Ա. Զմեռաւ ած, զի չկաք մեզ և ոչ մի տեղի պարծելոյ յանձինս մեր. զի ոչ ինչ եմք, ոչ ինչ ունիմք, ոչ ինչ գիտեմք, ոչ ինչ կարեմք. «Վասն անձին ինչ ոչ պարծեցայց», ասէ առաքեալն մեծ: Այլ որչափ արժան ևս մեզ խոնարհել վասն ապիրատութեան մերոյ, նոյնչափ և օրէն է պարծիլ 'ի Քրիստոս Յիսուս. քանզի նա արար զմեզ ամենայնիւ որ ինչ եմքն, և նովաւ զամենայն ընկալաք. զի նա է Աստուած մեր և մեք ժողովուրդ նորա. ինքն գլուխ և մեք անդամք նորա. նա քահանայապետ և մեք պաշտօնեայք նորա. մեծութեանն նորա ոչ գոյ չափ,

և զնա պաշտէ ամենայն երկիր. թա-
գաւորք յերեսս անկեալ երկիր պա-
գանեն նմա, և մեք առընթեր ու-
նիմք զնա։ Այո, Տէր, գուցէ փառք
իմ. ամենայն ուրեք ոչ ինչ գտա-
նեմ եթէ ոչ զոր արհամարհել ար-
ժան է, և յորմէ ունիմ խոնարհել։
Որպիսի՞ փառք են ինձ մատչել 'ի
սեղան քո երբեւ զպաշտօնեայ։

Բ. Զմտաւ ածէ, զի Յիսուս Քրիս-
տոս է փառք մեր՝ ոչ միայն 'ի ճա-
ճանչս աստուածութեան իւրոյ, 'ի
գերահրաշ լաւութիւնան, 'ի սքան-
չելիս, 'ի պարտութեան թշնամեաց
իւրոց և 'ի փառաւորեալ խորհուր-
դըս իւր, այլ և 'ի նուաստութեան
մարդեղութեան իւրոյ, յաղքա-
տութեանն, 'ի տառապանան զորս
ընկալաւ, 'ի վշտակրութիւնան, 'ի
մահն խաչի՝ զոր ճաշակեաց վասն
մեր ամենեցուն։ Ապա ուրեմն ա-
սասցուք ընդ նախանձաւոր Առա-
քելոյն. « Ինձ քաւ լիցի պարծել՝
բայց միայն 'ի խաչն Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի ». քանզի խո-
նարհութիւնք նորա ալքիւր են

փառաց նորա և մերոց։ Պարծեսցուք նա և յայն՝ զի ժուժամբ առ սէր Յիսուսի արհամարհանաց, հակառակութեանց, աղքատութեան և այլոց կարեաց ասսի կենացս։ Մերձեսցուք առ սեղանն այսպիսի մտօք։

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ած՝ զի Յիսուս որ է ամենայն փառք մեր 'ի Գոհութեան, է ևս խնդութիւն մեր բովանդակ. քանզի նա ինքն է որ ուրախ արար զմարգարէս և զնահատակս՝ յայանելով նոցա զհանդերձեալ գալուստ իւր. ըստ այնմ զոր առ Հրէայսն ասաց. «Աբրահամ հայր ձեր ցանկացաւ տեսանել զօր իմ, եսես և ուրախ եղև»։ Նա ինքն է որ բերկրեցոյց զկոյսն սուրբ՝ յորժամ զգեցաւ մարմին յարգանդի նորա. նոյն ինքն՝ զորոյ զծնունդ աւետարանեցին հրեշտակք երբև պատճառս ուրախութեան մեծի. նոյն

ինքն՝ զոր յեռ յարութեան նորա տեսին առաքեալքն խնդութեամբ բազմաւ։ Մ՚ուտ ուրեմն ՝ի հաստատակաց ուրախութիւն անդր, որով հեռև սատանայ զնա։ Հաճի նա բնակել ՝ի քեզ, հաճեաց և դու կալ ընդ նմին։— Ո՛վ Յիսուս իմ, դու ես ամենայն ուրախութիւն իմ ՝ի վերայ երկրի։ «Լաւ է ինձ մի օր ՝ի դաւիթս քո, քան զհազարս»։ Ուրախութիւն աշխարհի խաբէպատիր է, չարայօժար և դիւրանցուկ։ Իսկ այն զոր դու, Աստուած իմ, շնորհես մեզ, միշտ անապակ է, միշտ սուրբ, միշտ հաստատուն։ Ուրախ եղէց և ցնծացայց ՝ի քեզ։

Բ։ Զմտաւ ած, զի Յիսուս ՝ի գոհութեանս ուրախ առնէ զմեզ ակնկալութեամբն ժառանգելոյ մեզ զնա յերկինս։ «Յուսով խնդացէք»։ Ո՛հ, որպիսի՛ ուրախութիւն ելցէ սրբոցն՝ որ վայելեն այժմ զերանութիւնս զայս։ որպիսի՛ ուղիք փառիկութեան արքեցուցանեն զնոսա։ Քանիցն և մեզ իսկ ուրախ լինել հասանիցէ, յորժամ ազատեալ

'ի մարմնոյ ասաի մահու՝ տեսանի-
ցեմք զԱծն մեր երես առ երես։
Իցէ՞ թէ վասն այսորիկ բերկրեցեմք
յառաջագոյն. մինչեարեցէ՞ արդեօք
զմեզ 'ի նեղութեան մերում ակն-
կալութիւնս այս, և իցէ՞մք առաւե-
լեալ 'ի զօրութեան և յեռանդեան։
Այս այն առիթ էր ուրախութեան՝
զոր բազում անգամ Յիսուս մա-
տուցանէր աշակերտաց իւրոց.
«Տրամութիւն ձեր յուրախութիւն
դարձցի»։ Բերկրեաց և տուր նշան
զուրախութեան քո. մեծամեծ վար-
ձուց հատուցմունք պահեալ կան
քեզ յերկինս։ Հապա, ասէր կաց-
ցուք 'ի խոկմանս յայսմիկ. յարուս-
ցուք 'ի մեզ զաստուածայինս զայս
ակնկալութիւն՝ յորմէհետէ ունիմք
զառհաւատչեայ նորա։— Ո՛վ Յի-
սուս, լեր իմ ուրախութիւն յեր-
կինս, որպէս եաղ 'ի վերայ երկրի։

ԻԴ

ՅԻՍՈՒՍ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԻՆՉ ՄԵՐ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած՝ զի եթէ Աստուած 'ի հնուն ասէր զինքն լինել ժառանգութիւն պաշտօնէից իւրոց, «Ես եմ բաժին քո և ժառանգութիւն». քանիւն առաւել Յիսուս Քրիստոս լցէ մերս. զի սրբագոյն քան զՀրէշտակն եղաք դաշն ընդ նմա. և անդստին 'ի խառնիլս մերում յուխտ մանկանց եկեղեցւոյ՝ ընտրեցաք զնա 'ի ժառանգութիւն մեր, ասելով. «Տէր բաժին ժառանգութեան իմոյ և բաժակի իմոյ, դու ես որ այսրէն դարձուցանես զժառանգութիւն իմ յիս»։ Ո՛վ, քանի՜ ազնուական է ժառանգութիւնս

այս, քանիցն գերազանց, որչափ
շահաւէտ. «Ժառանգութիւն իմ
հաճոյ եղև ինձ»։ Եւ քանիապատիկ
ոչ քաղեցաք մեք բարիս 'ի նմանէ
մինչև ցօրս այս. և որքանեաց ևս չիցէ
մեզ արժան ակն ունել առ 'ի նմա-
նէ։ Յարգեսցուք ուրեմն զժառան-
գութիւնս զայս առաւել քան զա-
մենայն բարութիւնս աշխարհի. մի
լիցի մեզ ուրախութիւն մեծ քան
զսահմանն զայս. ժրասցուք օգտիլ
և վայելել առ 'ի նմանէ։ Ընտ ա-
ռաւելութեան ջանից մերոց՝ յաւել-
ցի մեզ և առատութիւն շնորհաց։

Բ. Զմտաւ ած՝, զի որպէս 'ի հին
անդ օրէնս՝ Ասուած նախ պարտս
դնէր պաշտօնէից իւրոց հրաժարել
'ի մանակցութենէ երկրի որդւոցն
Իսրայէլի, «Յերկրի նոցա մի ժա-
ռանգեսցես, և բաժին քո ընդ նոսա
մի լիցի». և ապա տայր նոցա զինքն
'ի ժառանգութիւն. նոյնպէս և Քրիս-
տոսի չմարթի լինել ժառանգութիւն
մեր, եթէ ոչ գէթ սրտիւ և յօժա-
րութեամբ՝ հրաժարեսցուք յաշ-
խարհէ և յամենայն յաւելորդաց

յաւխտենիս. զի Ժառանգութիւնս այս սուրբ՝ որպիսի Քրիստոսն է, ոչ կարէ միաբանել ընդ Ժառանգութիւնս արտաքինս՝ ընդ որս թէ բեւեռեալ լցեմք: Քննեաց միանգամ թէ ո՞րպէս բերիցիս առ երկրաւոր բարիս. չեցէս իսկ ըստ չափ գրաւեալ 'ի նոցանէ. շատանայցէս արդեօք հարկաւորաւն. չխանդայցէս ընդ այնոսիկ՝ որք Ճոխագոյն քան զքեզն լցեն. չկայցէ՞ ինչ իր ընդ որում բեւեռեալ լցես, պատրաստ լցես զոհել զամենայն վասն Յիսուսի: — Ամուսած սրտի իմոյ, դու ես բաժին իմ հանապազ, որում ամէն կալայց յերկինս. և թիմ իմիք փափաքեցայց յերկրի ասա, բայց քեզ միայնոյ. «Զի՞նչ կայ իմ բնաւ յերկինս կամ 'ի քէն զի՞նչ ես խնդրեցից յերկրի. Ամուսած սրտի իմոյ, բաժին իմ Ամուսած յաւիտեան»:

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ած, զի Յիսուս 'ի գոհութեան՝ է մեր ամենայն ինչ. քանզի զնա տալով մեզ Աստուծոյ՝ էառ զամենայն միանգամայն. իբրու զի նա միայն շատ է մեզ յամենայն պէտս մեր, և զի յետ մահուան նա միայն մնայ մեզ. «Զիարդ ոչ նո-վաւ հանդերձ զամենայն շնորհեցէ մեզ»: Եթէ ատացար զնա, ատացեալ ունիս զամենայն, և եթէ զնա միայն չունիցիս՝ ոչ ինչ ոչ ունիս. քանզի բաց 'ի նմանէ «Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է»: Մեծարեա զՅիսուս՝ որ է ամենայն քո ինչ. խնդա զի ունիս զնա ընդ քեզ. հան նմա նուէր զամենայն մտածութիւնս, յօժարութիւնս, զխօսս, զգործս և զամենայն վայրկեան կենաց քոց:

Բ. Զմտաւ ած, զի զոլով Յիսուսի ամենայն ինչ քո, ոչ է քեզ օրէն խնդրել բայց զնա միայն, զնա

եւթ սիրել. զամենայն ինչ արհամարհել բաց 'ի նմանէ. արժան է քեզ ամենայն խնամով գուն գործել առ հաճոյանալ նմա, պահել զքեզ 'ի շնորհս նորին. զամենայն հնարել առ 'ի ստանալոյ զնա 'ի յաւիտեանն. «Զի՞նչ օգտիցի մարդ՝ եթէ զաշխարհ ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցի»: — Ո՛վ Յիսուս իմ, դու ինձ եղիցիս միշտ ամենայն մեծութիւն իմ, ամենայն բարութիւն, ամենայն մխիթարութիւն, ամենայն յոյս իմ, ուրախութիւն իմ և սէր. այլն ամենայն առ ոչ ինչ համարեսցի. «Ատուաց իմ և ամենայն ինչ»:

ԻԵ

ՅԻՍՈՒՍ ՏՈՒՐՔ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՌ ՄԱՐԴԻԿ, ԵՒ ՏՈՒՐՔ ՄԱՐԴԿԱՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած՝ զի Յիսուս 'ի Գոհութեանս է մեծագոյն 'ի պարգևս շնորհեալս յԱստուծոյ կամ կարելիս 'ի տալ առ մարդիկ. զի նա ինքն է Որդին նորա միածին, հաճութիւն աստուածութեանն իւրոյ, համագոյակից իւր, և նկարագիր և Բան. յամենայնի նման նմա, և զոյգ նմին մի Աստուած։ Ո՛վ անձն իմ, եթէ ծանուցեալ էր քո զպարգևս զայս, զպատուականութիւն սորա, զգին և զպիտանութիւն, և զամենայն զոր յինքեան բերէ բարիս. «Եթէ գիտէիր դու զպարգևան Ա-

ուծոյ » . քանիցն եռաւիսաւիսագ
ոենչմամբ արդեօք ընդունէիր զնա :
« Տէր , յաւել մեզ հաւատս » , զի
ծանուցեալ ընկալցուք զքեզ ամե-
նայն յարգանօք , մաքրութեամբ և
սիրով ըստ քումդ արժանաւորու-
թեան :

Բ . Զմոտաւ ած , զի Աստուած
էս մարդկան զորդին իւր 'ի ձեռն
բազմապատիկ խորհրդոց , այլ 'ի
Գոհութեան էս զնա ըստ իւրով-
այն է՝ լրութեամբ խորհրդոց իւ-
րոց , արդեանց և կատարելութեց :
Ի ողջոյութեան՝ արդիւնք կենացն
էին դեռ ևս գլխաւորեալք . 'ի կեան-
սն՝ արդիւնք մահուն չև էին լը-
ցեալք . 'ի մահուն՝ անշուք ինն էր
և չունէր զզօրութիւն և զդանձս
նորոյ կենացն . 'ի յարութեան և 'ի
համբարձման՝ թուի ինն մեկուսա-
ցեալ առ Աստուած՝ և վերացեալ
'ի մարդկանէ : Իսկ 'ի խորհրդեան
Գոհութեանս՝ չկորուսանելով և ոչ
մի ինչ , ոչ զմոտանելն առ Աստուած ,
ոչ զառաւութիւն նորոյ կենացն և
ոչ զմեծվայելչութիւն փառացն ,

տուեալ լինի մարդկան լուսթեամբ ամենայնի այսոցիկ պայմանաց և իւրոց խորհրդոց։ — Ո՛վ խմաստութիւն, ո՛վ սէր, ո՛վ մեծագործութիւն Աստուծոյ խմոյ. յաւերժ գոհութիւնք քեզ և փառք վասն անպատումն պարգևիս. « Շնորհք Աստուծոյ 'ի վերայ անպատում պարգևացն նորա »։ Եւ քանի՞ցս առատաձեռնեալ շնորհեցեր ինձ զայդ. նա և այսօր հաճիս մատնառորել ինձ դմին, որում չեմն բնաւ արժանի, յորմէ դոյզն ևեթ օգտեցայ և զօր ամենայն առ ոտն հարկանեմ զքեզ։ Այո՛, այո՛, կարեմ և ես ասել տիրապէս. « Զի ուր առաւել եղեն մեղքն, առաւել ևս յաւելան շնորհքն »։

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ած՝ զի Յիսուս 'ի Գոհութեանս է միակ ընծայ արժանաւոր Աստուծոյ՝ զոր տուեալ ի՞նչ է մարդոյ մատուցանել նմա.

քանզի այլ ամենայն ընծայ՝ չափաւոր է և թերուղիղ, վասն որոյ և կարի յոյժ յեռանեալ 'ի մեծութենէն և 'ի սրբութենէն Աստուծոյ, որոյ կատարելութեանց չիք սահման։ Ամենայն խորհուրդք մեր և բանք, սէր և գործք, և բարիք և կեանք ինքնին գլխովին՝ չեն ըստ արժան բաւականին սուրբք և պատուականք՝ առ 'ի նուէր Աստուծոյ. բայց նա հաճեցաւ տալ մեզ զորդին իւր՝ որ հաւասար է նմա յամենայնի, և գոյ մեզ հնար մատուցանել նմա զայն՝ յաղերս պատուոյ, հնազանդութեան և սիրոյ։ Ընդհ կալջիր նմա վասն այսպիսւոյ պարգևի՝ որով յաջողէ քեզ հեշտեաւ հատուցանել նմա զպարտս քո. և քանզի 'ի սրտի քում կրեա այժմիկ զՅիսուս, զմիածին Որդին Աստուծոյ, մատո ուրեմն 'ի ձեռն նորա առ Աստուած Հայր պատարագ գոհութեան։ «Արդ 'ի ձեռն նորա մատուցուք պատարագ օրհնութեան յամենայն ժամ Ա՛յ»։

Բ. Զմտաւ ած, զի 'ի պարգևին

մեզ Յն՝ի բովանդակապէս 'ի Հօրէն յաւիտենականէ՝ գոհութեամբս, մեր եղև բոլորովին և 'ի մեր պէտս. որպէս զի մարթ լցէ մեզ առնել նովաւ զամենայն, որ ինչ առ Հայր իւր պատշաճիցի. ամբառնալ զմեզ առ նա, երկիր պագանել նմա, գովել զնա և շնորհս մատուցանել, կարդալ յօգնականութիւն, հաշտ առնել զնա և սիրել. քանզի նա ինքն է օրհնութիւն մեր և գոհութիւն, խաղաղութիւն մեր և սէր. քանզի և ոչ այլով իւիք ընդունի Աստուած առ 'ի մէնջ զպարտիս զայսոսիկ՝ բայց զի հաղորդեալ եմք մարմնով յորդին նորա։ Ո՛վ Աստ իմ, երկիր պագանեմ քեզ, գոհանամ զքէն, սիրեմ զքեզ և աղաչեմ, և ընծայեմ քեզ զիս ընդ Յն՝ի Քն՝ի և Յն՝ի Քն՝ի, որպէս առնէ և եկեղեցի 'ի խորհրդեան սրբոյ պատարագին. «Նովաւ, ընդ նմա և 'ի նմին՝ քեզ Հօր ընդ Հոգւոյդ սրբոյ ամենայն փառք և պատիւ». և որպէս հրեշտակքն և սուրբքն յերկինս՝ «Կայ՝ ին առաջի գահին՝». և երկիր պագանէին Աստուծոյ ասելով, ամէն»։

ԻԶ

ՅԻՍՈՒՍ ՎԱԽՃԱՆ ՄԵՐ ԵՒ ՕՐԻՆԱԿ

Նախ քան զպատուիրակն

Ա. Զմտաւ ած, զի Յիսուս է վերջին վախճան մեր 'ի Գոհութեան. և զոր օրինակ ամենայն արարածք ուժգնակի իմն միտեալ ձգին առ կէտ նպատակի Լուրեանց, Լիբրու զի անդ գտանեն զՀանգիստ, զանգորր և զերանութիւն՝ որ 'ի ճահ Լցէ նոցա, պարտ էր և մեզ զդալ 'ի մեզ ունչ եռանդուն գիմելոյ առ Յիսուս՝ յաստուածային յայսմ խորհրդեան, որպէս 'ի կէտ վախճանի մերոյ. առ 'ի գտանել 'ինքնին զՀանգիստ մեր, զմխիթարութիւն մեր և զերջանկութիւն: Ա՛յլ փոխանակ այնորիկ որպիսի՞ ցրտութիւն և որպիսի՞ անզգայութիւն. քանզի, ո՞հ,

ոչ ճանաչեմք զՅիսուս որպէս ըզ-
միակ և վերջին վախճան մեր. քան-
զի ոչ հաւատամք 'ի Յիսուս Քրիս-
տոս: — Ո՛վ Աստուած իմ, տուր
ինձ ճանաչել զմիակ վախճանն իմ.
« Ցոյց ինձ, Տէր, զկատարած իմ »,
զի մի՛ եղէց ըղձակաթ՝ բայց քեզ
միայնոյ ըստ մարդասէին: « Որպէս
փափագէ եղջերու յաղբերս ջուրց,
այնպէս փափագէ անձն իմ առ քեզ
Աստուած »:

Բ. Զմտաւ ած, զի որպէս Գո-
հութիւնս կատարած է այլոց ամե-
նայն խորհրդոց, որք առ 'ի պատ-
րաստել եթէ զմեզ առ սոյն սահման-
նեալ եղեն. այսպէս և անկ էր մեզ
յայսմ խորհրդեան զՅիսուս միայն
ունել նպատակ ամենայն խոկ-
մանց մերոց, բանից և գործոց. որ-
պէս զի յայս միայն կրթէին 'ի պատ-
րաստել զմեզ 'ի հանապազօր մա-
տուցումն և յընդունելութիւն նո-
րին 'ի սեղանի անդ սրբութեան.
ըստ առածի սրբոյն Պօղոսի. « Զա-
մենայն՝ զոր և առնիցէք բանիւք և
արդեամբք, զամենայն յանուն

Տեառն Յիսուսի արասջիք »։ Այս-
սու օրինակաւ համօրէն կեանք մեր
լինէին անընդհատ պատրաստու-
թիւն առ սուրբ խորհուրդ պատա-
րագին։ Այլ քանիսն հեռի եցեմք
'ի կրթութենէ ասսի յայսմանէ։
Զամենայն զգործս մեր առնեմք
գրեա թէ վասն աշխարհի, և կամ
գոնեա առանց ինչ մտախոհ լինելոյ
առնել վասն Յիսուսի։ — Ո՛վ Յի-
սուս, չկամիմ առնել՝ բայց որ ինչ
վասն քո եցէ. յայսմհետէ դու լի-
ցես միակ վախճան ամենայն պաշ-
տամանց իմոց, բովանդակ հնարից
իմոց և ամենայն վաստակոց իմոց։

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ածա, զի Յիսուս 'ի
Գոհութեանս օրինակ է ամենայն
առաքինութեանց, զորս 'ի պատկեր
նմանողութեան կարգէ մեզ Հայրն
յաւիտենական. քանզի չիք և ոչ
մի 'ի լաւութեանց, զորոյ չեցէ նո-
ցա տուեալ մեզ զօրինակ, կամ

չկարիցէ ասել, որպէս ասէրն զՀեզութենէ և զխոնարհութենէ, «Ուսարուք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ». թէ ուսարուք յինէն զի 'ի խորհրդեանս սրբութեամ՝ ոչ միայն քաղցր եմ և խոնարհ սրտիւ, այլ և համբերող, գթած և հնազանդ։ Հայրց և ուսիր յաստուածային օրինակէ ասել, մինչդեռ ունիսդ 'ի քեզ. ուսիր մտադիւրութեամբ, և աքանչացիր ընդ կատարելութիւն նորա և ընդ սրբութիւն. երկիր տեսանելով զքեզ այդքան հեռացեալ 'ի նմանէ, ջանա մերձենալ առ նա. զի ոչ վասն այլ իմիք էտ քեզ զօրինակ, բայց զի նմանող նմա լինիցես։ «Օրինակ մի էտու ձեզ, զի որպէս էս ձեզ արարի, և դուք առնիջիք»։

Բ. Զմտաւ ած, զի Յիսուս 'ի Գոհութեանս գաղափար իմն է՝ որ փոխադրէ զամենայն զօրութիւնս՝ զոյոց տայն մեզ զօրինակ. և զի ոչ միայն ցուցանէ մեզ զոր պարտիմքն առնել, այլ և տայ զշնորհս և զզօրութիւն կատարելոյ. և վասն այ-

սորին իսկ գայ նա տալ քեզ զանձն

Ո՛վ Յ՞ի իմ, ոչքան պարտական եմ քեզ։ Առանց օգնականութեան քոց շնորհաց զի՞նչ կարող եցեմ առնել. քանի՛ առաւել պարտ էր ինձ նմանագոյն լինել քան զայժմուս, փոխանակ զի զոր ամենայն յանդիման առնեմ զքեզ 'ի սեղանի անդ, և զի կամիս պաշտօնէից քոց զհետ քո երթալ. «Եթէ ոք զիս պաշտեսցէ, զինի իմ եկեսցէ»։ Զը-գեա՛ զիս զհետ քո. «Զհետ քո 'ի հոտ իւղոց քոց ընթացցուք»։



ԻԼ

ՁՕՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՑԻՍՈՒՍԻ Ի ԳՈՀՈՒԹԵԱՆ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած՝ զի Յիսուս ե-բևեցուցանէ զզօրութիւն իւր՝ ի Գո-հութեանս յայսմիկ՝ ոչ՝ ի վերայ ոչնչի, որպէս յարարչագործութե-անդ, ոչ՝ ի վերայ հողոյ և մոխրոյ՝ որպէս՝ ի յարութեան մեռելոց. ոչ՝ ի վերայ երկնից կամ երկրի կամ տարերաց, որպէս յայլ նշանագոր-ծութիւնսն. այլ՝ ի վերայ մարմնոյ իւրում՝ միացելոյ ընդ Աստուածու-թեան, փառաւորեցելոյ և անմա-հի՝ զոր ունի՝ ի յերկրի անշքապէս, և ընդ անկենդան տեսակօք հացի և գինւոյ։ Քանզի մարմինս այս՝ Աս-տուծոյ գոլով մարմին, հարկ է թէ

ելեալ յերկինս. փառաւորեալ գո-
լով՝ 'ի գէպ է ամենեքին իսկ զար-
դարեալ գոլ փառօք. անմահ գո-
լով՝ հարկ է մշտաշարժ լինել։ Եւ
սակայն Յիսուս աքանչելի ինն ար-
դասեօք զօրութեան և սիրոյ իւրոյ
որ առ քեզ, հաճեցաւ փակիլ 'ի
տապանակս մեր սքօղեալ և ծած-
կեալ ընդ խորհրդական տեսակօքն։
Աքանչացիր և ծանիր զզօրութիւն
Յիսուսի 'ի խորհրդեանս յայսմիկ։

Աստուածացեալդ Յիսուս, ամե-
նայն զոր կամիս՝ հնարաւոր է քեզ.
'ի կամելն քում՝ և լինի ամենայն։
Այլ քանզի և զանհնարաւորն կա-
միս դու վասն իմ, ոչ ապաքէն ար-
ժան ելեալ և ինձ առնել զոնեա զդը-
ժուարագոյնն անգամ։ Այլ ես հա-
զիւ հազ յանձն առնում և զթե-
թեւագոյնս իսկ 'ի հրահանգաց, և
զդուշնաքեայն ջան յաղթելոյ ան-
ձին իմում։— Խոնարհեցո զքեզ ընդ
ամենակարող ձեռամբն Աստուծոյ,
և ապաչեռ զնա կատեցուցանել զընդ-
թացս կրից քոց զօրութեամբ շնորհ-
հաց իւրոց։

Բ. Զմտաւ ած՝ զի զօրութիւնն Յիսուսի 'ի Գոհութեանս՝ այնու իսկ առաւելահրաշ փայլէ, զի զամենայն զսքանչելիս գործէ՝ ոչ իւրով ձեռամբ՝ որպէս յընթրիսն անդ, այլ 'ի ձեռն քահանայից, արանց նուաստից, մահկանացուաց, մեղաւորաց, բազում անգամ և մեծամեծ մեղաւորաց. որոց տայ զամենայն զիւր իշխանութիւն. իբր ոչ եթէ 'ի շնորհս ինչ բարեպաշտութեան նոցին կամ արժանաւորութեանն և հաւատոցն, այլ վասն կարգի պաշտամանն. որպէս զի յամենայն ժամու և ամենայն ուրեք և յամենայն վիճակի կարասցեն սրբագործել. և նա իսկոյն անյապաղ կացցէ յանդիման 'ի վերայ սեղանոյն, և առ գոյզն բարբառ բանի նոցա: Փառաւորեա զԱստուած «զտուիչն այնպիսի իշխանութեան մարդկան», և առանձինն քեզ՝ որում այնքան անարժանդ ես: Տես թէ զինարդ վարեցար այնու մինչև ցայժմ. երկիր, թէ գուցէ և արդ զեղծանիցիս նովաւ. «Զի որում

բազում աւանդեցաւ, առաւել ևս պահանջեցեն 'ի նմանէ »։

Չկնի պատարագին

Ա. Զմտաւ ած, զի այնու գեր 'ի վերոյ երևեցաւ իմաստութի Քրիստոսի 'ի մարդեղութեանն, զի Աստուծոյ անհնար գոլով վշտակրել, և մարդոյ հատուցանել փոխանակ անհնարին արհամարհանացն, ինքն իսկ մարդ եղև. որպէս զի եթէ Աստուած՝ հատուցէ լիովին, և եթէ մարդ ախտակրեսցի ըստ չափ գործեցելոց յանցանացն։ Ոչ ինչ ընդհատ յայնմանէ և 'ի սրբում գոհութեանս երևի իմաստութիւնն Յիսուսի. քանզի անհնարին գոլով ճաշակել զնա առանց սոսկալոյ՝ յիւրումն տեսակի, և զի դարձեալ հացի լոկոյ չէր մարթ օժանդակել հոգւոց մերոց, ծածկի նա ընդ տեսակօք հացին և գինւոյ, որպէս զի կարասցուք կերակրիլ 'ի մարմնոյ նորա և յարբենք։ — Զամենայն ինչ

խնամատուութեամբ արարեր, ասատուա-
ծայինդ Յիսուս. այլ ոչ ուրեք այն-
պէս զարմանալի գտաւ խնամատու-
թիւն քո՝ որպէս 'ի հնարան զոր
հնարեցեր առ 'ի տալ զքեզ մարդ-
կան: Ո՛հ, ընդէ՞ր չեցեմ և ես հան-
ճարեալ ըստ բաւականին առ հայ-
թայթանս հնարից յարգելոյ և սի-
րելոյ զքեզ, այլ միայն 'ի գիւտ շա-
հու անձին իմոյ. «Տուր ինձ զքո-
յոցդ աթոռոց զդարանակալ խնամ-
ատուութիւն», զի ընդ իս լեցի և ընդ
իս գործեսցէ:

Բ. Զմտաւ ածէ, զի եթէ Յիսու-
սի տուեալ էր մեզ զանձն հանդերձ
շքո

բաւ և հեշտեաւ։ Ո՛հ, քանիցս ի-
բաւամբ ասաց խմաստունն, եթէ
« Զգաի՛ ի ծագաց մինչ՛ ի ծագս օգ-
տակար առողջութեամբ, և դար-
մանէ զամենայն քաղցրութեամբ »։
Գոհացիր զՏեառնէ՝ որ այդքան գիւ-
բացոյց քեզ մերձենալ առ ինքն.
այլ տես, մի երբէք մարդասիրու-
թիւն նորա բարձցէ՛ ի քէն զեր-
կիւղ և զակնածութիւն՝ զոր պար-
տիսդ առնա. « Ծառայեա Տեառն
երկիւղիւ, և ցնծա առաջի նորա
դողութեամբ »։

ԻԸ

ԲԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՍԷՐ ՑԻՍՈՒՍԻ

Նախ քան զպտուղաբաղն

Ա. Զմտաւ ած, զի Աստուած ըստ երկոց զանազան կարգաց հաղորդեաց զինքն արարածոց իւրոց. ըստ կարգի բնութեան՝ արարչագործութեամբն, մանաւորելով զնոսա գոյութեան իւրում. — ըստ կարգի շնորհաց՝ սրբակերտութեամբ, տպաւորելով՝ի հոգիս պատկեր իմն սրբութեան. — ըստ կարգի փառաց՝ լիապատարագ առնելով զերանելեանն իւրովն աստուածային պայծառութեամբ։ Այլ եգիտ Յիսուս նոր իմն հնարս հաղորդելոյ մեզ զինքն՝ առանձին իմն օրինակաւ, տալով մեզ զանձն գլխովին, որ է աղբիւր ամենայն բարութեանց և ամենայն

լաւութեանց. և առնէ զայս խոր-
հրդեամբ Գոհութեան։ —Իբրև զի
բարի ես, աստուածայինդ Յիսուս.
«քաղցր ես դու»։ Ո՞ խցեմ ես,
զի՞նչ ինչ արարեալ է իմ՝ զի հաղորդ
ինձ զքեզ արասցես. զքեզ ինքն
տալով անձամբ բնաւին, և ամե-
նայնիւ որ եսդ։ Դոյզն մի 'ի շնոր-
հացդ, հայեցուած մի ևեթ քո՝
մեծ պարգև բարեգթութեան էր
վասն իմ. երջանիկ զիս համարէի
ընդ քանանուհւոյն 'ի քաղեալն զփըշ-
րանս սեղանոյ քոյ. իսկ զիարդ այժմ
կարիցեմ սքանչանալ ըստ բաւա-
կանին ընդ բարութիւն քո առ իս
և օրհնել զայն։ Ամաչեմ ընդ այս,
Աստուած իմ, և խոստովանիմ զիս
անարժան յամենայն սրտէ։

Բ. Զմտաւ ածի, զի Յիսուս թէ-
պէտ անխտիր առ ամենեսին ցու-
ցանէ զբարութիւն իւր, սակայն ա-
ռանձինն ինն օրինակաւ հաղորդի
ընդ այնոսիկ ոյք յուսան 'ի նա և
խնդրեն զնա. «Բարերար է Ա-
ստուած 'ի վերայ համբերողաց իւ-
րոց». Բարի է նա ընդ բարիս և

տայ մեզ զինքն նովին չափով որով տայցեմք մեք նմա զանձինս։ Բայց ուրեմն նմա զսիրտ քո, զի հեղցի 'ի նմա զերկուսին բարութեան նորա։ Դատարկեա՝ զի լցցէ զայն Աստուած։ պատրաստ լեր տալոյ նմա զանձնդ ողջոյն, որպէս զի և նա տացէ քեզ զինքն ողջոյն։

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ած, զի Աստուած այնչափ սիրեաց զաշխարհ՝ մինչև եւ նմա զնոյն ինքն զՈրդին իւր։ և Որդին այնչափ սիրեաց զմեզ՝ մինչև եւ մեզ զինքն միոյ միոյ առանձին։ և այն զի ոչ արժանիք ինչ մեր կամ բարեմասնութիւնք, և ոչ նորին ինքեան շահ օգտի՝ ձգեցին զնա 'ի հալորդել ընդ մեզ այսքանեաւ զարմանալի եղանակաւ, այլ միայն սէրն որ առ մեզ։ սէր՝ որ անդրադոյնս վարի քան զկարծիս մտաց մերոց։ և որ եւս հիանալին է՝ յաշխարհս առ 'ի մէնջ զտապաշնորհութեան ընդու-

նելով զհաստատութիւն։ Եւ արդ հարցանէ քեզ՝ զոր հարցանէր առ Պետրոս. «Սիրե՞ս զիս», որ այնչափ սիրեցին զքեզ։ Տես թէ կարիցե՞ս տալ պատասխանի, գործովք մանաւանդ քան եթէ բանիւք, «Այո՛, Տէր, և դու գիտես զի սիրեմ զքեզ»։ — Այո՛, Յիսուս, սիրեմ զքեզ, և փափաքեմ առաւել ևս սիրել ըզքեզ. բոցակիզեա զիս հրով սրբով սիրոյ քո, և մի տար ինձ թոյլ սիրել արարած ինչ 'ի վեր քան ըզքեզ, կամ քո չափ։

Բ. Զմտաւ ածէ, թէ քանի՞ պատանէլի է սէրն Յիսուսի զոր ցուցանէ մեզ 'ի խորհրդեանս յայսմիկ. եթէ ուշով քննիցեմք զպարգևն զոր տայն մեզ, զվախճան նորին, զժամանակն տալոյն և զեղանակն որով տայ, ամենայնն առ հաստատակ հիացումն և զարմանս ածցէ մեզ և հրճուանս սիրայինս։ Զանձն իւր տայ մեզ և տայ 'ի նշանակ սիրոյն իւրոյ. տայ 'ի պահուն՝ յորում փոքր միւս ևս և մեռանելոց էր վասն մեր. տայ մեծաւ ցանկութեամբ զօրէն կե-

ղակրոյ։ — Ո՛վ սէր Յիսուսի, քանի՞ սակաւ ի՞նչ ծանուցեալ։ Եւ ո՞վ կարասցէ՝ ի միտ առնուլ զերկայնութիւն, զլայնութիւն, զբարձրութիւն և զխորութիւն սիրոյդ։ Տայր ոք ինձ, Յիսուս իմ, զբովանդակ սէր հրեշտակաց և զսրբոց, առ՝ ի սիրել զքեզ այնչափ՝ որչափ ամենեքին նոքա միահաղոյն սիրեն զքեզ։ Կամիմ սիրել զքեզ, զոնեա յամենայն զօրութենէ իմմէ և տալ քեզ ցոյցս սիրոյ յամենայն առիթս։ Վա՛յ այնմիկ որ ոչն սիրիցէ զքեզ. « Եթէ ոք ոչ սիրէ զտէր Յիսուս, եղիցի նզովեալ »։

ԻԹ

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած՝ զի ոչ շատացեալ Յիսուսի տալ զանձն 'ի մահ խաչի, առ 'ի հնազանդել հրամանաց Հօր իւրոյ, առաւել ինն ցուցանէ հնազանդութիւն 'ի խորհրդեան Գոհութեանս, յանդիման լինելով 'ի կէտն պայմանեալ ձայնի քահանային. «Հնազանդելով մեն Աստուծոյ՝ ձայնի մարդկան». դնէ զանձն իւր 'ի ձեռս նորա. բաւականանայ տեղեաւն զոր նայն ցուցցէ նմա. փակի յանձուկ սահմանի դոյզն նշխարին, չելանելով բնաւ անտի արտաքս ինքնօրէն՝ որչափ և արհամարհանս ածցեն նմա 'ի խոր-

հրդեանն, որպէս 'ի ժամանակի
չարչարանաց իւրոց։ Ո՛վ, որպիսի՛
հնազանդութիւն. Աստուած ամե-
նակարող՝ հպատակի անզօր ստեղ-
ծուածոց. տէրն՝ ծառային, սուրբն
նոցա՝ առն մեղաւորի։ Որպիսի՛ խրատ
օրինակի ինձ՝ որ հեատեմն պատուի-
րանաց նորա։ Զ իսրդ ինչեցեալ մատ-
չել առ Աստ հնազանդ՝ խոնարհ խեռ և
ամբարտաւան ոգւով, որ կամի հա-
նապազ հրամայել և ոչ երբէք
հնազանդել։ — Ո՛վ Աստուած
իմ, ահա հրաժարիմ յանձնահաճ
կամաց, և զայն միայն կամիմ՝ զոր
դու կամիս. «Ուսո՛ ինձ առնել ըզ-
կամն քո, զի դու ես Աստուած իմ»։

Ի. Զմտաւ ած, զի հնազանդու-
թիւն Յիսուսի է ամենայօժար կա-
մաք. քանզի կարող է խզել զկա-
պանսն և ազատանալ 'ի հպատա-
կութենէ անտի։ Սակայն նա կամի
բնակիլ անբաժանաբար 'ի փոքու-
տարածութեան փանաքի նշխարի
խորհրդեանն, ըստ կամն քահա-
նային՝ որ կախեալն է զնմանէ յա-
մենայնի. որպէս զի կարող ինչ ա-

սել 'ի գոհութեանն՝ զոր զմահուան-
նէն իւրմէ ասէր. «Ես դնեմ զնա
անձամբ իմով». դէպք՝ որ գերա-
պոյն ևս հանդիսացուցանեն զհնա-
զանդութիւն նորա։ Արդ զայսպի-
սի ունելով օրինակ՝ տակաւին ծանր
համարիցիմք հնազանդել վերակա-
ցուաց մերոց. կատարեալ այդպէս
դժուարաւ զհրամանս նոցա, դան-
դաղելով և քրթմնջելով ընդ խրա-
տութիւն նոցա, և ոչ հպատակե-
լով, եթէ ոչ առ անհրաժեշտ հար-
կի։ Դիցուք արդ 'ի մտի հնազան-
դել նոցա. «Իբրև ծառայք Քրիս-
տոսի առնել զկամս Աստուծոյ.
արտի մտօք ծառայել իբրև Տեառն
և մի իբրև մարդկան». առ 'ի կեր-
պարանակիցս լինելոյ Յն մեառն
մերոյ։ Մատիցուք 'ի սեղան անդր
այսու հոգւով հնազանդութեան։

Զկնի պատուագին

Ա. Զմտաւ ած, զի Յիսուս դարձեալ նովին երկայնմտութեամբ վարի 'ի ՝ի հաղորդութեան՝ որով ժուժկալեաց 'ի կեանսն և 'ի մահուն. համբերէ և ասասնօր, ոչ միայն դուշնաքեայ հաւատոց, յարգանաց և եռանդանն բազմաց 'ի քրիստոնէից՝ նաև 'ի քահանայից իսկ, այլ և անպատկառութեանց և անտարակուսութեանց ոչք գործին յանդիման երեսաց իւրոց, նա և արբապղծութեանց և սեղանակապտութեանց իսկ՝ ոչք գործին յանարժան հաղորդելոց ոմանց։ — Ո՛վ համբերութիւն Աստուծոյ իմոյ, զի՛ սքանչելի ես. «Նախատինք նախատեցաց քոց անկան 'ի վերայ իմ»։ Ընդդամ, Յիսուս իմ, 'ի խորոց սրտիս՝ զամենայն անարգանս որ հանդիպին քեզ 'ի խորհրդեանս. և ընդէր ոչ փոխարինել այնչափ արհամարհանաց որոց տարար, կամ արդե-

լուլ՝ զի մի և նորանորս 'ի վերայ յաւելցեն։ Մատուցանեմ քեզ, Աստուած մեծ, զխորին պատիւ հրեշտակաց և սրբոց քոց, զերախտիս զոր ընկալար 'ի հաւատացելոց քոց, և զշուք զոր մատոյց քեզ ելկեղեցի. ներեա՛ ժպրհուլթեանց իմոց։

Բ. Զմտաւ ած, զի համբերութիւն Յիսուսի փայլէ սքանչելապէս յամենայն 'ի դէպս յայսոսիկ. նախ այնու իսկ զի կրէ յանարգ և 'ի խոտան արարածոյ, Աստուած գոլով մեծ և ահեղ, որ կարէ 'ի չինք դարձուցանել 'ի վայրկեան ժամանակի զամպարիշտ անարգուան։ Երկրորդ, զի գժնէագոյնս կրէ նախատինս 'ի ժամանակի՝ մինչդեռ ընդ զմեզ մեծամեծ պարգևօքն և բարութեամբք. «Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ»։ Երրորդ, զի կրէ զարհամարհանան յորմէ հետէ կարգեաց զխորհուրդս զայս, և պատրաստ է 'ի կրել և ևս։ — Ո՛վ Յիսուս իմ, դու համբերութիւն ինքնին ես, զի կրեցեր յինէն և երկայ-

նամուեցեր. թե ի՞նչ ցուցից քեզ զերախտիս իմ։ Մի՛ և սար ինձ զառաջանել համբերութեամբ քովարան ինձ զընդարձակս զայս՝ զի յընդունեալն իմ զքեզ յաշխարհս, զքեզ որ Աստուածդ ես ողորմած և երկայնամիտ, կարացից ըստ քումդ օրինակի՝ տանել համբերութեամբ արհամարհանաց և հակառակութեանց։

Ի.

ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ Ի ԳՈՀՈՒԹԵԱՆ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած՝ զաղքատութիւն Յիսուսի 'ի Գոհութեան, զի ընտրէ ինքեան զանարգս և զհատարակ ինչ տեսակս՝ 'ի բնակութիւն. նա և 'ի բազում տեղիս այնպէս աղքատութիւն առնու ապաս, մինչև յայտ յանդիման երևէր՝ եթէ նոյն Աստուածն է որ ծնաւ 'ի Բեթղահէմ 'ի մսրին, 'ի յարդի վերայ։ Սակայն և յայսմ պայմանի աղքատութեան, անբաւ է նորա Ճոխութիւնն, և զօրութիւն. թագաւորէ նա 'ի վերայ թագաւորաց և հրեշտակաց, և պարտաւորտ առնէ զամենայն զօրութիւն՝ երկնաւորաց և երկրայնոց՝

անկանել՝ի խոնարհ և պաշտել զնա։ ՝ի միասին մեծութիւն և աղքատութիւն միացեալ են ՝ի նմա։ Ծանիր զնա Աստուած քո՝ յայդմ՝ի դոյն վիճակի խոնարհութեան։ և թէ կամիցիս հաճոյ գտանիլ առաջի նորա, յայսոսիկ խոկասջիր։ Յուշ լեցի քեզ զոր ասացն յաւետարանին, եթէ «Որ ոչ հրաժարեսցէ յամենայն ընչից իւրոց ոչ կարէ իմ աշակերտ լինել»։ Յամօթ լեր վասն աւելորդաց կարասեացդ և զգեստուց, և վասն ամենայնի որ ինչ հային՝ի խնամս կենցաղոյս, մինչդեռ Աստուածն քո թափուր յամենայնէ՝ չունի անգամ և տեղի՝ դնելոյ զգլուխս իւր։

Բ։ Զմտաւ ած, զանչափ աղքատութիւնն Յիսուսի՝ի Գոհութեա, մինչև չլինել նմա ոչ ինքեան և ոչ վասն ինքեան, այլ բոլորովին մեր։ որ և՝ի սակս մեր ոչ միայն մերկացաւ յամենայն բարեացն, այլ և զանձն ևս եթող, զի մեզ լեցի բովանդակ։ «Զի վասն ձեր աղքատացաւ՝ որ մեծատունն էր, զի դուք

նորա աղքատութեանն մեծաս-
ջիք »։ Ո՛վ իմն Յիսուս, մանաւո-
րեա զիս մեծութեանց քոց, շնոր-
հացդ, կարողութեանց և արժա-
նեաց. քանզի աղքատ եմ ճշմար-
տապէս. « Խոնարհեցա՛, Տէր, զուն-
կըն քո. զի աղքատ և տնանկ եմ
ես »։

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ած, զի թէպէտ և
խոնարհութիւնն Յիսուսի քաջա-
յայտ երևեցաւ 'ի մարգելութեան
իւրում, զի « զանձն խոնարհեցոյց՝
զկերպարանս ծառայի առեալ » այլ
առաւել ևս ցուցաւ 'ի Գոհութեա,
յորում արկ զինքն 'ի կերպարան
նուաստագոյն՝ քան զամենայն կեն-
դանեաց և շնչայնոց. քանզի հաց
լոկ տեսանի ասա, և այնպիսի իմն՝
որպէս թէ չունիցի ոչ կեանս, ոչ
շարժումն, ոչ բան և ոչ գործ. և
որ զարմանալին ևս է, զի կայ մնայ
'ի ամին պայմանի և հաճի իսկ ընդ-

այս։ Ո՛վ, քանի՛ յամօթ առնէ մարդեղութիւնն Յիսուսի զհպարտութիւնս մեր. նա ոչ կամի երևել որ ինչ էն, իսկ մեք կամիմք երևիլ որ ինչ չեմք։ Ո՛վ Աստուած իմ, ճանաչեմ՝ ես զմեծութիւն քո և զոչընչութիւն իմ, զզօրութիւն քո և զակարութիւն իմ, զարքութիւն քո և զիմն ապականութիւն։ Որչափ նո՛-աստագոյն զանձն քո ցուցեր վասն իմ, այնչափ և սիրելի ինձ եղեր. « Որքան նուաստ քան զիս, այնքան և բաղձալի »։ Երկիր պագանեմ քեզ՝ ի ցածութիւնս քո, և ոչ թէ միայն չհամարիմ ինձ ամօթ, այլ և փառս ինձ։

Բ. Զմտաւ ած, զի Յիսուս ամենևին իսկ մեծ գոլով՝ յանձն էառ խորագոյնս խոնարհել՝ ի խորհրդեանս. առ՝ ի խրատել զմեզ եթէ բարձրութիւնք և մեծութիւնք ոչ զոք ազատս կացուցանեն՝ ի խոնարհելոյ. նա մանաւանդ որչափ ոք մեծ լցէ, այնչափ և պարտի զանձն խոնարհ առնել, զի ոչ ինորհաց ուն՝ ի առ՝ ի կալոյ՝ ի բարձրութեան

անդ, և շնորհքն՝ խոնարհաց տը-
ւեալ լինին. քանզի մեծագոյն հա-
մարս պահանջի այնպիսին, և 'ի մե-
ծի վտանգի կայ անկանելոյ 'ի փոր-
ձանս հպարտութեան և ունայ-
նամտութեան. վասն որոյ և ասաց
Հոգին սուրբ 'ի ձեռն իմաստնոյն.
« Որչափ մեծ իցես՝ այնչափ խո-
նարհեցո զանձն քո, և առաջի
տեառն գտցես շնորհս »: Քրիստո-
սի չկայր ուսուցք խէթ 'ի մեծու-
թենէ անտի իւրմէ՝ զի անմեղան-
չական էր. շնորհաց ինչ պէտս ոչ
ունէր, զի ինքն իսկ էր տէր և աղ-
բիւր նոցին. սակայն խոնարհեցաւ
առ 'ի խրատ մեր՝ ամբարձելոցս 'ի
վերոյ քան զայլս, զի ուսանիցիմք
եթէ ամենևին իսկ կարևոր է մեզ
խոնարհութիւն: Զգաստացիր արդ
յօրինակէ ասոյ սորա, և հայեաց
'ի քեզ որպէս 'ի տրուան 'ի մարդ-
կանէ. կալ քեզ հանապազ զվեր-
ջին տեղին և անդէն կացջիր. « Բազ-
միջիր 'ի յետին տեղւոջ ». Ժոեա՛
'ի Քրիստոսէ՝ զի մանակից արաս-
ցէ զքեզ խոնարհութեան իւրում »:

Լ.

ՄԱՔՐՈՒԹԻՆ ԵՒ ՅԱՐԱՏԵՒՈՒԹԻՆ ՅԻՍՈՒՍԻ Ի ԳՈՀՈՒԹԵՆՆ

Նախ քան զպատարագն

Ա. Զմտաւ ած, եթէ որպիսի՛ ինչ լցէ մաքրութիւնն Յիսուսի՝ ի սուրբ խորհրդեան. իբրև Աստուած՝ նոյն ինքն է որ նախ քան զամենայն յաւիտեանս ծնաւ անճառաբար՝ ի հօրէ իւրմէ. իբրև մարդ՝ է նոյն ինքն որ էառ մարմին՝ ի մաքուր արենէ կուսի՝ զօրութեամբ Հոգւոյն սրբոյ. նա ինքն որ եկն յերկիր ուսուցանել մարդկան զմաքրութեանն առաքինութիւն. որ չէառ երբէք զփորձ խլրտմանց ցանկականին. որ ջնջեաց զամենայն աղտեղութիւնս աշխարհի, առանց վարակելոյ և դուշնաքեաւ իւիք արատով: Սա

ինքն Աստուած և մարդ միանգամայն, որ է քահանայ և զենելի պատարագին՝ զոր մնայ քեզ մատուցանել։ Յաւել և զայս զի խորհրդոյս այսորիկ նիւթ է յազնուագոյն ցորենոյ և յանխմոր հացէ՝ որ տպաւորէ զմաքրութիւնն. և ձևն՝ է ձայն նորուն ինքեան Աստուծոյ։ Յետ այսր ամենայնի զմտաւ ածջիր եթէ որպիսի արժան լցէ լինել մաքրութեան. քո առ 'ի տեսանել աչօք, շօշափել ձեռօք, ընծայել և ընդունել զՅիսուս՝ զնոյն ինքն մաքրութիւնն։ Ո՛հ. որպէս կուրանան ոմանք առ տեղեաւս. զդոյշ լեր, մինչև բարիոք քննեալ զանձն քո՝ մի՛ հուպ երթայցես առ մատուցանն. նա և փոքր ինչ հեշտախտութիւն՝ բազում՝ այն է զի յանցումն մեծ է և կարի յոյժ գարշելի առաջի Աստուծոյ. «Որ հոլովէն 'ի մէջ շուշանաց»։

Բ. Զմտաւ ած, զի Յիսուսի կամք այն իսկ են՝ հաղորդս առնել զմեզ մաքրութեան իւրոյ 'ի Գոհութիւն. և զի է սա 'ի թուոյ գլխաւոր ար-

դասեաց սրբութեանս այսմիկ, նշա-
նակեալ բանիւքս մարգարէին Զա-
քարիայ. «Զի որ ինչ բարին ինչ է՝
նորա է, և որ ինչ լաւն՝ նորին. ցո-
ւրեան՝ երիտասարդաց, և գինի ա-
նուշարար՝ կուսից»։ Այս արգա-
սիք ներդործին նախ՝ 'ի միանալ
անգ կուսական մարմնոյն Յիսուսի
ընդ մերումն. զի եթէ պատարագն
զոր 'ի հնումն մատուցանէին վասն
մեղաց՝ կարօղ էր սրբելոյ զամե-
նայն ինչ յոր մերձենայր, զիա՞րդ
մարմինն Յիսուսի որ այսչափ մա-
քուր պատարագ է՝ ոչ սրբեսցէ
զմարմինն որ միանայ ընդ նմա։ Եւ
երկրորդ անգամ, որովհետև ար-
գասիք ինքն էն սրբութեանս յաւե-
լուլ զսէր, զհետ գայ զի և նկուն
առնէ զհեշտախտութիւն։ Ո՛հ, ո՛ր-
չափ պէտս ունիցիս զօրաւոր օգ-
նութեանս այսմիկ՝ առ 'ի ստանալ
և պահել զայսպիսի մեծ առաքի-
նութիւն. որպէս մարթէր քեզ պա-
հել զայն մինչև ցայսօր՝ առանց ըս-
տէպ հաղորդակցութեան խորհրդ-
դոյս։ Գոհացիր զմարմնոյն և զա-

ունէին Յիսուսի եթէ ոչ ինչ խախ-
տեցար 'ի փորձութեան. ընկալ
զնա վստահութեամբ առ 'ի կալ
յուժի առ յապայ և խնդրեա սիրա
սուրբ 'ի Տեառնէ մերմէ։

Զկնի պատարագին

Ա. Զմտաւ ած, զաւետութիւնն
Յիսուսի 'ի խորհրդեանս Գոհու-
թեան. յորմէ հետէ սահմանեացն՝
եկաց միշտ 'ի նմին ստուգապէս և
ճշմարտութեամբ. գործք այլոց
խորհրդոց անցանեն, այլ սորայս
աւետ և մշանջենաւոր է ինքն յին-
քեան։ Անդանօր կայ Յիսուս 'ի վա-
ռաւորել զհայր իւր, առ 'ի գոհա-
նալ զնմանէ վասն բարերարութեց
իւրոց. յաղաչել զնա վասն մեր և
'ի բաշխել մեզ զպատուս հաճու-
թեան իւրոյ. մինչև յաւիտեանս
ժամանակաց ոչ դադարեսցի նա 'ի
կալոյ անդէն և միշտ և հանապազ
զնովին գործով գալոյ որպէս և խոս-
տացաւն. «Ահաւասիկ ես ընդ ձեզ

եմ մինչև 'ի կատարած աշխարհի»
Շնորհակալ լեր նմին՝ փոխանակ զ
հաճի բնակել միշտ ընդ մեզ, առ
ընուլ զմեզ պարգևօք խրատք.
դէպ է զի և ոչք ծառայենն նմա
լինիցին տեղոք։ Ո՛վ, որպիսի ան
հաւատարմութիւն. որպիսի յոյ
դողդութիւն 'ի վարս քո. թերև
ունիցիս եռանդն ինչ 'ի ժամու
յայսմիկ, անդբաղ եղեալ մտաք
լցեալ բարի բարի դիտաւորութիւնք
այլ փոքր մի ևս և չմնասցէ ինչ ան
դանօր։ Ոչ այդպէս, Աստուած իս
Յիսուս, ընտրեմ մանաւանդ մ
ռանել քան լինել ուխտադրուժ
«Ես ասացի 'ի բարեկենդանու
թեան իմում թէ ոչ ասանեցս
յաւիտեան»։

Բ. Զմտաւ ած, զի Յիսուս ո
օրինակ ինչ ևեթ է տեղութեա
'ի սուրբ խորհրդեանն, այլ և պատ
ճառ նորին։ Նախ՝ զի մնուցանէ զ հ
գոյ մերում. բուծանէ և պահ
զհոգևորական կեանս շնորհաց, որ
պէս կերակուրք մնուցանեն զկեան
մարմնոյ. և ապա զի պահէ զմե

'ի մահուանէ մեղաց՝ որով կորուսանեմք զշնորհս։ և դարձեալ զի խորհուրդս այս ասայ զօրութիւն յաղթելոյ փորձութեանց և ժուժկալ լինելոյ։ Ո՜վ, քանի պարտապանք եցեմք Յիսուսի՝ որ էաս մեզ այսպիսի զօրաւոր հնարս տուեալոյ։ Ի՞նչ էր մեզ մարթ կալ յակատաստանի և առ մի ևեթ վայրկեան՝ առանց նորա։ Գոհացիր զնմանէ վասն շնորհացս այսոցիկ։ Երկիր զի յեա այնչափ անկանելոյ՝ մի արդեօք եցես չարաչար ընդելացեալ խորհրդեանս։ ապաշաւեաց ընդ ամենայն անհաւատարմութիս քո, և խընդրեա 'ի տեառնէ զպարգևս տուեալոյ։ — «Ապաւաճ իմ, հաստատեա զոտս իմ 'ի շաւիղս քո, զի մի գայթակղեսցին գնացք իմ»։

ԲՆՆՈՒԹԻՒՆ ԽՂՃԻ



Տէր Հայր իմ և դաստաւոր, տուր ինձ անարժան քո պաշտօնէիս՝ ճանաչել զպարտս և զպարտապանութիւնս իմ, լուսաւոր մտօք, անխարդախ սրտիւ, խոնարհ հոգւով և հաստատուն կամօք քաւութեան մեղաց և ուղղութեան սպասաւորաց խնդոց։ Աստուածային ողորմութիւն քով հայեաց 'ի մեղուցեալս, և հաշտեաց ընդ զքնացելոյս։ Ընկալ հաճութեամբ զխոստովանութիւնս իմ, և պահեա զիս 'ի խնամն շնորհացդ և սիրոյդ։

Ա. Քահանայ Աստուծոյ եմ ես, միջնորդ կարգեալ ընդ Աստուած և ընդ մարդիկ։ Յիշեմ արդեօք յաճախ զշնորհս աստուածանիս և կեանս

ըստ այնմ։ — Զինչուցի արդեօք զարդար ցասումն Աստուծոյ, եթէ առաւել ևս բորբոքեցի իմով անարժանութեամբս։

Բ. Կանխեցի փութով առաւօտուց առ Աստուած, եթէ սիրեցի զանազանելն յանկողնի։ — Նուիրեցի տուողին ինձ զօրն սկսեալ. Ջանացայ սրբել զայն, և զոհութեամբ դարձուցանել առ նոյն յերեկոյին։ — Կատարեցի մտադիր և մտադիւր զսահմանեալ պարտս ապօթիցն և ժամակարգութեան։ — Յիշեցի զԱստուած յընթացս աւուրն. խորհեցայ կամ ընթերցայ կամ խօսեցայ յամենայն աւուր բան ինչ հոգեկեցոյց։ — Հաստատեցեմ Տեառն զոր ինչ և ուխտեալս եմ։

Գ. Զիարդ մատուցի զմեծ և ընտիր և զահեղ խորհուրդ պատարագին։ — Քննեցի քաջ զգիտակցութիւն իմ մինչև մատուցեալ'ի սեղանն։ — Խոստովանեցայ կամ զընդունայցայ զյանցուածս իմ զերիկի և զաւուրցն որ յետ վերջնոյ խոստո-

վանութեան։ — Եւ խոստովանի-
ցիմ անաչառ դատմամբ անձին և
սրտիւ բեկեալով։ — Մատեաց յօժա-
րութիւն, սիրով և ահիւ առ սուրբ
խորհուրդն գոհութեան։ — Կատա-
րեցի ըստ պայմանին զօրէնս պա-
տարագի և զպարտս պատարա-
գեաց։ — Գոհացայ զՏեառնէ յետ
պատարագելոյ՝ զէթ քառասուն մի
ժամու։

Դ. Զխնդրդ ծախեցի զաւուրս և
զժամանակն՝ որ տուեալ է ինձ 'ի
սրբութիւն անձին, 'ի խնամս հօտին
Քրիստոսի, և յօգուտ եկեղեցւոյ։
Պարտապեցի հանապազ 'ի տոսին, ե-
թէ 'ի հոգս և 'ի զբաղանս աշխարհայինս։ — Խնդրեցի զշահ և զփա-
ւորս եկեղեցւոյ՝ առաւել քան զանձին։ — Մինթէ եղէ հեռամուտ պա-
տուոյ և բարձից՝ աշխարհայնոց կամ
եկեղեցականաց։ — Եղէ ժամուա-
ճառ 'ի անտառս և 'ի զբօսանս, կամ
'ի խնամս ուսմանէս նրաց։ — Գոր-
ծեցի ինչ առ ականէ և 'ի հաճոյս
մարդկան, ապախտ առնելով ըզ-
խիղճ և զպարտս իմ։

Ե. Մինչ պատրուակաւ գար-
մանոյ կենաց՝ մեծերեցի՛ ինչս և ար-
ծաթ։—Յո՛ր և յո՛վ ծախեցի՛ ինչս...
առ աղքատս, առ հիւանդս, եթէ
'ի գրգանս ինչ կենաց, յընծայս
մարդելոյզս,'ի գամոգիւտ լինել երկ-
րաւոր բարեաց, և առ զի՛ և է աւե-
լորդ։—Յիշեցէ՛ք զի՛ ինձ քան այ-
լոց մարդկան՝ վայել և պարտք ան-
հրաժարելիք են սէր և ողորմու-
թիւն, առանց որոյ չիք հնար աշա-
կերտ լինել, թող թէ պաշտօնեայ
Քրիստոսի։

Զ. Զի՞արդ շրջիմ յաշխարհի և
ընդ աշխարհիկս։—Լինի՛մ օրի-
նակ բարի ամենեցուն, մեծացուցա-
նելով յիս զնախօրինակն իմ զՔրիս-
տոս։—Մի՛ արդեօք Էտու և աշ-
խարհայնոց տեղի գայթակղութեան
և բամբասանաց՝ անզգոյշ և անվայ-
էլ ինչ բանիւք կամ գործով, կամ
կրիւք կամ ծաղու, և այլն։—Խո-
սեցայ ինչ արդեօք Նուաստս և Երկ-
միտս զհաւատոց, և զպաշտօնէից
եկեղեցւոյ, զքարեպաշտից, զկար-
գաց և զհրամանաց առաջնորդաց։

Է. Եղէ հնազանդ խնոյ առաջ-
նորդաց և գլխաւորի եկեղեցւոյս։
— Կատարեցի զհրամայեալն ինձ
'ի նոցանէ։ — Գործեցէք զգործ
Տեառն նախանձու նորին և եռան-
դեամբ։ — Պաշտեցի զհոգիս հա-
ւատացելոց՝ աղօթիւք, խրատու,
քարոզութեամբ, և բարի վարուք։
— Ուսուցի զագէտս. — կացի պաշտ-
պան սրբոյ վարդապետութեանն կրօ-
նիցս։ — Ելի ըստ կամաց և կար-
գաց եկեղեցւոյ զամենայն պարտս
և պաշտամունս քահանայութեան։

Ը. Զիարդ կատարեցի զմեծ և
զծանր պաշտօն հօր խոստովանու-
թեան։ — Կանխեցի խնդրեցի ըստ
յԱստուծոյ. — լուայ մտադիւր և
զգաստ. — հարցի քննեցի չափով
և զգուշութեամբ, յորդորելով զե-
կեալսն՝ յապաշխարութիւն և 'ի սէր
ուղղութեան. — եռմռ կամ զլացայ
ըստ արժանին զարձակումն մեղաց.
— եղի պարտս քաւութեան և ա-
պաշխարանաց արդարակ և պիտա-
նացու։ — Աղօթեցի վասն ապաշ-
խարողաց և մեղաւորաց։ — Փու-

թացայ կամ չանայլ կոչել 'ի խոստովանութիւն զնմ որդիացեալն։ — Հրահանգեցի զմանկունս և զաղջկս 'ի պարտս քրիստոնէականս։ — պատրաստեցի զնոսա յարժան ընդունելութիւն սրբոյ հաղորդութեան։ — Խրատեցի ըստ իւրաքանչիւր վիճակի և պիտոյից՝ զծնողս, զամուսինս, զտեարս, զծառայս, և այլն։

Թ. Քննեցի զպէտս և զվիճակ հօտին իմոյ։ — Հոգացայ ուղղել զվնասն, ընուլ զկարօտութիւնս, բառնալ զդայթակղութիւնս, շինել 'ի Քրիստոս։ — Արարի այց հիւանդաց և նեղելոց։ — փութացայ 'ի նոյն՝ յորժամ ազգ ինձ արարին, եթէ դանդաղեցի, կամ ըզտկարութիւն պատճառեալ՝ ոչ էր գայ։ — Մխիթարեցի զվշտահարս։ արդարացուցի զյուսաբեկս։ յորդորեցի զանզգոնս։ յանդիմանեցի զանհաւատս։ — Հսկեցի առ մահճաւք օրհասականաց։ — կատարեցի ըզպարտս ճշմարիտ քահանայի, միայն փրկութեան հոգւոց ուշ ունելով, և

ոչ մի ինչ երկրաւոր շահու և ակն-
կալութեան: — Եռո՛ւ ձրի զձրեաքն
ինձ 'ի Քրիստոսէ շնորհս: — Պա-
հիցեմ վայելչապէս զկարգս և զըս-
պասս և զաւանդս եկեղեցւոյս իմոյ:

Ժ. Մեռուցանեմ, ճնշեմ զմար-
մինս իմ՝ որ զօր ամենայն հալորդի
ընդ մարմնոյն Քրիստոսի: — Ե-
դեամբ լցեմ պահապան խիստ ա-
ջաց իմոց՝ չհայել յաջսա, ունկան
և շրթանց՝ մի լսել և մի խօսել բը-
նաւ և մի ինչ անպատկառ և ան-
պատշաճ: — Սիրիցեն արդեօք ճա-
շակք իմ և շօշափելիք զքաղցր և
զկակուղ, ոչ յիշեալ զլեզին և ըզ-
փուշն Քրիստոսի: — Իցեմ ամե-
նեւին զգաստ և պարկեշտ 'ի կենա-
կցելն ընդ տարտեաս և ընդ ման-
կունս: — Խորհուրդք իմ լցեն միշտ
անարատք, կամ դարձցին վաղ վաղ
առ Աստուած:

ԺԱ. Հոգամ հանապազօր 'ի սրբ-
բութիւն և 'ի կատարելութիւն վա-
ղուց: — Քննեմ աւուր աւուր
զգործս և զգնացս իմ, և առաջա-
դրեմ ուղղել և կատարել: — Հրա-

ժարկցեմ 'ի չարաչար սովորութենց և 'ի կրից։ — մարտնչեցցեմ ընդ ունայ-
կացեալս ախտից և թերութեանց։
— Խոստովանեցցեմ առէպ զմեղս իմ, զնոր և զհին, մանաւանդ զմեծա-
մեծ անկղեսութեան, առ 'ի հաշտ պա-
հելոց զԱստուած։ — Առնեցցեմ էր-
բեք կրթութիւն հոգևոր, պարա-
պելով յաստուածային՝ զօր մի ոչ-
ջոյն ամոյ ամոյ, կամ 'ի մեծամեծ
ոճան, կամ աւուրս ինչ 'ի տարւոջ։
—Յիշեցցեմ զմօտալուտ և զանսասոյգ
կատարած կենաց իմոց։ և պատրաս-
տեցցեմ 'ի մահ։

ԺԲ։ Քաղցրանայցէն ինձ յիշա-
տակք հանդերձելոց կենաց։ փա-
փագեցցեմ Հոգւոյդ 'ի կենցաղոյս և
մատնել առ Աստուած։ Եթէ վայ-
րապար երկիւղիւ և թերահաւա-
տութեամբ խորշեցցեմ 'ի վերջնոցն
իմոց։ — Տամ և յայտնիկ օրինակ
արութեան առ ժողովուրդն։ —
Հանձնեցցեմ վշտաց, ցաւոց, նա-
խատանաց, կարօտութեան, և ամե-
նայն անհաճոյից որ հանդիպեսցին։
— Կարդայցեմ յօդնութիւն զՏի-

բանայրն և զուրբս Աստուծոյ, և
ելցէմ փութաջան և արդարդիր 'ի
պաշտօն նոցին։ — Ո՞ր ըքան սիրեմ
և ջանամ 'ի կրթութիւն առա-
քինութեանց, մանաւանդ որոց
յոյժ պէտս ունել գիտեմ։ — Եւ
ելցէ՞ սիրաս իմ այս արդարև սիրա-
քահանայի Աստուծոյ, հանապազ
նուիրեալ և պատրաստ առ նա-
ստուրբ, հեզ, խոնարհ, եռանդուն,
աշխարհուրաց, երկնաբնակ....
— Ելցէ՞ն ձչմարիտ և անյողդողդ զբաղ-
ջուն իմ, առաջադրութիւնք իմ և
ուխտք իմ։

ՅԱՂԱԳՍ ՔՆՆՈՒԹԵԱՆ ԽՂՃԻ

ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾՈՒԹԻՆ

Ա. Ի վերջ քան զամենայն, պարտ է քահանային Աստուծոյ մատչել 'ի քահանայագործել և յընդունել զայս խորհուրդ՝ բազում խոնարհութեամբ սրտի, և ողբական յարդանօք. լի հաւատով, և բարեպաշտ դիտմամբ փառացն Աստուծոյ: Ընդուշութեամբ քննեսցիր զանձդ մըտաց քոց, և ըստ կարի ճշմարիտ զղջմամբ և խոնարհ խոստովանութեամբ մաքրեալ սրբեսցիր, մինչև չունել կամ չգտանել 'ի քեզ ծանր ինչ, որ ստգտանիցէ զքեզ և չհամարձակեցուսցէ 'ի մատչել: Սրբեալ յամենայն մեղաց քոց առ հասարակ. և վասն հանապազորդ յանցուածոց առաւել լեցի քո զիրք և հեծութիւն: Եւ եթէ ժամանակն

ներկ, խոստովան լեր առաջի Աստուծոյ 'ի շտեմարանս սրտի զամենայն կրկից քոց թշուառութիւնս։

Ի. Հեծեծեա և ողբա, զի դեռ այդպէս մարմնաւոր ես և աշխարհային. այդչափ անմեռ 'ի կիրս. այդչափ լի խլրտմամբք ցանկութեանց. այդչափ անզգոյշ 'ի զգայութիւնս արտաքինս. այդչափ սնոտի ցնորիւք ստէպ պաշարեալ. այդչափ յօժարամիտ առ արտաքինս. այդչափ հեղգասիրտ առ ներքինս. այդչափ թեթև 'ի ծաղր և 'ի ցոփութիւն. այդչափ խիստ 'ի լալիւն և 'ի զղջումն. այդչափ պատրաստական 'ի թուլութիւն, և 'ի մարմնոյ դիւրութիւն. այդչափ պղերդ 'ի ճգուն և յեռանդն. այդչափ ընդվայրաքնին 'ի լսել զնորալուրս, և 'ի գեղոյ աչարձակութիւնս. այդչափ մեղկ 'ի ձեռնարկեալն 'ի խոնարհական և յանարդս. այդչափ ցանկացող աւելաստացութեան. այդչափ ճկուղ 'ի տալ. այդչափ ուշտ 'ի պահել. այդչափ անխորհուրդ 'ի խօսս. այդչափ անժոյժ 'ի լռել.

այդչափ անհեթեթ 'ի վարս. այդչափ դժպատեհ 'ի գործս. այդչափ զեղխ 'ի կերակուրս. այդչափ խուռ առ բանն Աստուծոյ. այդչափ արագ 'ի հանգիստ. այդչափ յամր յաշխատութիւնս. այդչափ արթուն առ առատութիւն. այդչափ քնեաց առ սուրբ հոգիսն. այդչափ փութացող 'ի կատարածն. այդչափ ապուշ 'ի մտադրել. այդչափ հեղգ 'ի կատարել զժամակարգութիւնս. այդչափ գաղջ 'ի պատարագել. այդչափ ցամաք 'ի հաղորդել. այդչափ շոյտ 'ի ցնդել զմիտս. այդչափ դանդաղ 'ի հաւաքել. այդչափ դիւրաշարժ 'ի բարկութիւն. այդչափ վաղվաղակ 'ի զզուել զայլս. այդչափ յօժարամիտ 'ի դատել. այդչափ սուղ 'ի յանդիմանել. այդչափ ուրախ 'ի յաջողութիւնս. այդչափ տկար 'ի վիշտս. այդչափ սահել բազում բարիս առաջադրես, և սակաւս 'ի գործ դնես:

Գ. Զայս ամենայն, և զսոցին նըման քո պակասութիւնս, բաղում յաւելք և տկարութեան քո տաղա-

կանոք՝ խոստովանեալ և ողբացեալ, հաստատութեամբ առաջադրեա յա-մենայնի ուղղել զվարս քո. և 'ի լաւանդր յառաջադէմ լինել: Ապա լիուլի նուիրմամբ և անթերի կա-մօք մատո զանձն քո 'ի պատիւ ա-նուան իմոյ՝ 'ի սեղան սրտի քո հա-նապազորդ ողջակէզ, զմարմին քո և զհոգի ինձ յանձն արարեալ հա-ւատարմութեամբ. որպէս զի ըստ արժանեաց արժանապէս մատչել 'ի մատուցանել Աստուծոյ զպա-տարագ, և զխորհուրդ մարմնոյ ի-մոյ ընդունել 'ի փրկութիւն:

Դ. Զի չէք նուէր ընտրելագոյն, և մեծ հատուցումն 'ի քաւել զմեղս, քան զնուիրել զանձն Աստուծոյ մաքրութեամբ և ամբողջութեամբ՝ ընդ նուիրագործութեան մարմնոյն Քրիստոսի 'ի պատարագի և 'ի հա-ղորդութեան: Եթէ արասցէ մարդ որ ինչ անկ է նմա, և ատուգու-թեամբ ապաշաւեսցէ, քանիցս ան-դամ վասն թողութեան և շնորհաց առ իս մատչիցի, կենդանի եմ ես, ասէ Տէր, որ ոչ կամիմ զմահ մե-

զաւորին, այլ զգաւնալ նորա և
զկեալ. զի զմեզս նորա ոչ էս յի-
շէցից, այլ ամենայն թողցի նմա։
ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ Դ. Է.

ԱՂՕԹՔ ԶՂՋԱԿԱՆՔ

Ա.

Տէր, տէր, տէր ամենակալ, եւ
էթէ կամիմ և էթէ ոչ՝ դու կեցու-
զես. և էս կաւ եմ և տիղմ, զի սի-
րեմ զմեզս. այլ դու որպէս ամե-
նազօր՝ խաւխանեա զնա, և լոյծ զնա
'ի մոլի մեղաց խոնց։ Զի էթէ որ-
դարոյն ողորմիս՝ ոչ մեծ է, և էթէ
զաւրքն կեցուցանես՝ ոչ են աքան-
չելիք, զի արժանի ողորմութեան
են նոքա։ Այլ 'ի վերոյ մեղաւորիս
աքանչացո զգթութիւն քո, և յիս-
ցոյց զանթիւ ողորմութիւն քո Տէր,
քանզի 'ի քեզ թողեալ է ապաքաան,
և անկեալքն դու էս օգնական։

Բ.

Երկնաւոր Թագաւոր որ վասն դիւաց մեղաւորի՝ զՀայր և ըզՀոգի հանդերձ հրեշտակօքն ուրացուցեր, ապա մի յապաղեսցէ յինէն գութ ողորմութեան քո. գիտ զկորուսեալս մեղք 'ի խորս ընդգոց, և արա խրախութիւն 'ի ոձունս երկնաւորացդ. կանգնեա զգլորեալս 'ի մեղաց, լուսաւորեա զնաւարեալս, արբեա զաղտեղեալս, դարձո զմոլորեալս: Մի Թողուր զիս 'ի կամս անձին իմոյ գնալ, զի մի տիրեսցեն ինձ ամենայն մեղք իմ: Խնդրեմ, Տէր, հայցեմ և բաղխեմ, բաց ինձ, Տէր, զդուռն ողորմութեան քո: Մի՛ ընդ վայր և 'ի զուր լիցի այնքան աշխատութիւնն վասն իմ, զոր կրեցեր 'ի Գողգոթա. խաչն, բեւեռքն, ծարաւն, լեղին, քացախն, հարուածք տիպին, հեղուումն արեանդ, ձայնն ահաւոր, գոչումն ուժգին, բարբառն էլի էլի.

նա և այլ ամենայն վիշտքն՝ զոր կրեցեր վասն կորուսելոյս։ Վասն որոյ մինչեւրդ և բարեխօս ունիմ առ քեզ զփրկարար տնօրէնութեամբ ըղկիրան. փրկեա զմեզուցեալս 'ի սպառնալեաց գեհենոյն, և հանդո զգինս արեան անեղիդ յերկնային յառաջասան լուսոյ. զի ընդ ամենայն սուրբս քո փառաւորեցից ըղքեզ ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ

ՊԱՏԱՐԱԳԵԼՈՅ

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. և սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

Յիշեա, Տէր, զԴաւիթ և զամենայն հեզութիւն նորա։

Որպէս երդուաւ տեառն, և ուխտս եդ Աստուծոյ Յակոբայ։

Թէ ոչ մտից 'ի յարկս տանն իմոյ, թէ ելից յանկողինս մահճաց իմոց։

Թէ տայց քուն աչաց իմոց, կամ նինջ արտեւանաց իմոց, կամ հանգիստ կրանաց իմոց, մինչև գտից զտեղի յարկի տեառն Աստուծոյ Յակոբայ։

Ահա լուաք զնմանէ յԵփրաթա, և գտաք զնա 'ի դաշտս մայրեաց։

Մտցուք 'ի յարկս նորա, երկիր

պատցուք 'ի տեղւոջ՝ ուր կացեալ
են ոտք նորա։

Արի՛ տէր 'ի հանդիստ քո, դու
և տապանակ կտակի սրբութեան քո։

Երկնցունք քո զգեցցին զարդա-
րութիւն, և սուրբք քո ցնծալով
ցնծացեն։

Վասն Դաւթի սիրելւոյ քո մի
դարձուցաներ զերեսս քո յօծելոյ
քումմէ։

Երդուաւ տէր Դաւթի ճշմար-
տութեամբ, և ոչ ստեաց նմա, 'ի
պտղոյ որովայնի քումմէ նստուցից
յաթոռ քո։

Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս
իմ, և զվկայութիւնս իմ՝ զոր ու-
սուցից նոցա։

Որդիք նոցա նստցին յաւիտեանս
յաւիտենից յաթոռ քո։

Հաճեցաւ տէր ընդ Սիոնն, և
ընտրեաց բնակել 'ի նմա։ ասէ՝ այս
է հանդիստ իմ յաւիտեանս յաւի-
տենից։ 'ի սմա բնակեցայց, զի հա-
ճեցայ ընդ սա։

Զորս սորա օրհնելով օրհնեցից,
և զաղքատս սորա լցուցից հացիւ։

Քահանայից սորա զգեցուցից զփրկութիւն, և սուրբք սորա ցընծալով ցնծացեն։

Անդ ծագեցից զեղջիւր 'ի Դաւիթ, պատրաստս արարից զՔրիստոս օծելոյ իմոյ։

Թշնամեաց նորա զգեցուցից զամօթ, այլ 'ի վերայ նորա ծաղկեսցէ սրբութիւն իմ։ — Փառք հօր։

ՍԱՂՄ. ՃԼԱ։

ՔԱՐՈԶ

Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ 'ի Տեառնէ, զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ 'ի վերայ մեր։ ամենակալ տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա։

Տէր ողորմեա (ԺԲ անգամ)։

ԱՂՕԹՔ

Որ զգեցեալ ես զլոյս որպէս հանդերձ, տէր մեր Յիսուս Քրիստոս,

անձառելի խոնարհութիւն՝ ի յերկրի
երևեցար և ընդ մարդկան շրջեցար.
որ էիր քահանայապետ յաւի-
տենից ըստ կարգին Մելքիսեդեկի,
և զարդարեցեր զեկեղեցի քո սուրբ։
Տէր ամենակալ, որ պարգևեցեր
մեզ զնոյն զերկնային հանդերձ ըղ-
գեցուալ, արժանի արա և զիս՝ ի ժա-
մուս յայսմիկ զանպիտան ծառայս
քո, որ համարձակիմն և մերձենամ
՝ի նոյն հոգևոր պաշտօն փառաց
քոց. որպէս զի զամենայն ամպա-
րշաւութիւնս մերկացայց, որ է հան-
դերձ պղծութեան, և զարդարե-
ցայց լուսով քո։ Ընկեա յինէն
զչարիս իմ, և թօթափեա զյան-
ցանս իմ, որպէս զի արժանի եղէց
հանդերձեալ լուսոյդ առ՝ի քէն։
Շնորհեա ինձ քահանայական փա-
ռաք մատանել՝ ի պաշտօն սրբութեց
քոց ընդ այնոսիկ՝ որ անմեղութիւն
պահեցին զպատուիրանս քո. զի
և ես պատրաստ գտայց երկնաւոր
առագաստիդ ընդ խնամսուն կու-
սանսն, փառաւորել զքեզ Քրիս-
տոս՝ որ բարձեր զմեղս ամենեցուն։

Զի զու էս սրբութիւն անձանց մերոց. և քեզ բարեբարիդ Աստուծոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աստուցանեմ քեզ, Տէր, զպատարագս զայս անարատ մարմնոյ և պատուական արեան միածնի քո, ըստ արարողութեան սրբոյ եկեղեցւոյ, 'ի փառս և 'ի պատիւ անուանդ քում սրբոյ, և ամենայն սրբոց քոց: Որպէս զի լիցի սա 'ի փրկութիւն ինձ և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ, և ամենեցուն՝ որք պատուիրեցին ինձ հաւատով: Սովաւ շնորհեա զանշարժ խաղաղութիւն առաքելական սուրբ եկեղեցւոյ. խնդութիւն և խաղաղութիւն և առաքինի վարս, ապաշխարութիւն 'ի բոլոր սրտէ, զշնորհս և զմխիթարութիւն Հոգւոյդ սրբոյ. և հաստատութիւն 'ի գործս բա-

թութեան պարգևեա մեզ սովաւ, ամենակալ և մարդասէր Տէր *։

ԱՌ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ

Ողորմած գթած և ամենօրհնեալ սրբուհի. մեղուցեալ և անարժան քո ծառայս 'ի բոլոր սրտէ և 'ի բոլվանդակ մտաց առ քեզ ապաւինիմ, և աղաչեմ զգթութիւն քո. զի որպէս կայիր առ խաչին միածնի որդւոյ քոյ, և այժմ կացցես առ ընթեր ինձ մեղաւորիս, և որոյ ընդ ամենայն եկեղեցիս պատարագէն քահանայք։ Որպէս զի քոյին բարեխօսութեամբդ արժանաւոր լիցուք մատուցանել պատարագ ընդունելի անբաժանելի սուրբ Երրորդութեանն. որում վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

* Թողութիւն պապիոց Ճ ամսոյ շնորհեալ 'ի Գրիգորէ ԺԴ մատուցողաց զաղօթս զայս նախ քան զսուրբ պատարագն։

Եւ լուսոյէ փահանայն պէտուն, ասէլով
Սաղմ. ԻԵ։

Լուացայց սրբութիւն զձեռս իմ, և շուրջ եղէց զսեղանով քո, Տէր։

Դատ արա ինձ, Տէր, զի ես յամբ ընծութեան իմում գնացի. 'ի Տէր յուսացայ զի մի եղէց հիւանդ։

Փորձեա՛ զիս, Տէր, և քննեա՛ զիս. փորձեա՛ զերիկամունս իմ և զսիրտ իմ։

Ողորմութիւն քո, Տէր, առաջի աչաց իմոց. և հաճոյ եղէց ճշմարտութեան քում։

Ոչ նստայց ես յաթոռս նանրաց, և ընդ անօրէնս ես ոչ մտից։

Ատեցի ես զժողովս չարաց, և ընդ ամպարիշտս ես ոչ նստայց։

Լուացայց սրբութեամբ զձեռս իմ, և շուրջ եղէց զսեղանով քո, Տէր։

Լսել ինձ զձայն օրհնութեան քո, և պատմել զամենայն սքանչելիս քո։

Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քո, և զտեղի յարկի փառաց քոց։

Մի կորուսանիր ընդ ամբարիշտս զանձն իմ, և մի ընդ արս արիւնահեղս զկեանս իմ։

Որոց ձեռք իւրեանց յանօրէնութեան են, և աջ նոցա լի է կաշառաւք։

Ես յամբծութեան իմում գնացի, փրկեա՛ զիս, Տէր, և ողորմեա՛ ինձ։

Ոտն իմ կացցէ յուղղութեան, յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ։

Փառք Հօր։

Ե՛ դէոյ յառաջ զԽոյրն 'ի գլուխն, և՝ ասասցէ։

Դիր, Տէր, առաւաւտ փրկութեան 'ի գլուխս իմ, պատերազմել ընդ զօրութիւնս թշնամւոյն։ Ընդ հօք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ որում վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ ամէն։

Ասպին։

Զգեցո ինձ, Տէր, հանդերձս փրկութեան, և պատմուճան ուրախութեան, և շուրջ պատեա զգեստուս փրկութեան։ Ընդհօք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և այլն։

Գոգոյն։

Շուրջ պատեսցէ կամարս հաւատոյ զմէջս սրտի իմոյ և զմտաց, և շինեսցէ՛ի սմանէ զնորհուրդս աղաւեղիս, և զօրութիւն շնորհայ քոյ յամենայն ժամ բնակեսցէ՛ի սոսա։ Ընդհօք տեառն մերոյ։

Բուլպանին։

Տուր, Տէր, զօրութիւն ձեռին իմոյ, և լուսա զամենայն ապաւեղութիւնս իմ, որպէս զի կարօղ լինիցիմ ապաստաւորել քեզ անախտութեամբ հոգւոյ և մարմնոյ։ Ընդհօք տեառն մերոյ։

Ողորմի։

Զգեցո, Տէր, պարանոցի իմոյ զարդարութիւն, և արբեա զսիրտ իմ յամենայն աղտեղութենէ մեղաց։ Շնորհօք տեառն մերոյ։

Նափորպին, որ է շուրջառն։

Տէր, ողորմութեամբ քով զգեցո ինձ զգեստ պայծառ, և պարապեա ընդդէմ նեղգործութեան չարին. զի արժանի եղէց փառաւորել զքո փառաւորեալ անուն։ Շնորհօք։

Ցնծացէ անձն իմ 'ի Տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան։ Իբրև փեսայի եդ ինձ պսակ, և որպէս զհարսն զարդու զարդարեաց զիս։ Շնորհօք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

ԱՅԼ ԱՂՕԹՔ

Ա.

Մեղայ յերկինս և առաջի քոյ։ ընդ անառակ որդւոյն պատկառեցեալ՝ հայրենի գթոյդ վերատին դարձեալ թախանձ արկանեմ։ զողորմելին ձայն աղերսանաց՝ արտօսրածին ողբովք գոչման 'ի տխուր դէմս մատուցեալ առաջի քոյ տարածանեմ։ Հայր գթութեանց Աստուած բոլորից, չեմ արժանի կոչիլ և ոչ ընաւին առ այս անուանիլ, ոչ միայն որդի, այլ և անպիտան ստրան վարձկան։ Ընկալ զսովեալս տարագրական, պարտական ինաւուց։ և զցաւ քաղցոյս լսկանաց հեղոյսնուաղեցելոյս՝ կենաց քո հաւիւդ բժշկեացես։ Լեր ընդ առաջ քո ողորմութեամբդ 'ի սկզբնաւորս ապաւինութեան։ զդեցո, գթած և անհատակալ, անօրինեալս մեղապարտի՝ զնախակարգուս հանդերձին

ծածկոյթ. աւանդակորոյս ձեռացս
ալտեղեալ մեղօք՝ զկնիք մատա-
նեալն համարձակութեան ամենա-
ռատ կամօք մատուցեալ. զգարշա-
պարացս թշուառութիւն մերկու-
թեան ոտիցս՝ պատապարութեամբ
աւետարանական ամրավերարկու
օդիցս կոշկաց՝ 'ի յօձին թիւնից միշտ
ամրացուցեալ։ Զզուարակդ պա-
տարակի եղկնդ երկնայնոյ, որ է
միածին որդիդ քո՝ օրհնեալ խակա-
ղէս մարդասիրութեամբ, կարօ-
տելոյս բարեաց նուիրեա. որ մա-
տուցեալ միշտ, և անպակաս մնայ
'ի լուութեան. յարակայ զենեալ 'ի
սպանդարանի անթիւ սեղանոց ան-
սպառութեամբ. բոլոր յամենեսին
և բնաւ յամենայնում. էութեամբ
յերկինս և խակութեամբ 'ի սա-
ղինս. անուաղ մարդկութեամբ և
անթերի աստուածութեամբ՝ փրկ-
ութեալ և բաշխի 'ի մատուռս անհատս,
զի զհամայնն հաւաքեսցէ առ 'ի
նոյն մարմին խաղաղութեան գլխոյ։ Զէզ
փառք ընդ նմին, Հայր ողորմութեան,
յաւիտեանս. ամէն։— ՆԱՐԵԿ. ԽԷ։

Բ

Տէր Աստուած մեր, արժանաւորեա զիմ անարժանութիւնս՝ որ բազում մեղօք շաղախեալ եմ. մի՛ անարժան համարիր զիս, տէր Աստուած իմ. ահա մերձեցեալ յաստուածային և յերկրպագելի քո սեղանս, ոչ եթէ արժանի ինչ գոլով, այլ՝ի քո բարերարութիւնդ հայելով՝ արձակեցից զայս ձայնս. Աստուած՝ քաւեա զիս զմեղաւորս. զի մեղայ յերկինս և առաջի քո. և ոչ եմ արժանի ակնատես լինել քահանայական և հոգևորական սեղանոյս, յորում տէրդ մեր և Աստուած Յիսուս Քրիստոս միածին որդիդ քո՝ ինձ մեղաւորիս և ամենախղճիւ լցելոյս խորհրդաբար կայ առաջի զենուումն։ Ի ձեռն որոյ զպատարագս քեզ մատուցանեմ առ՝ի յառաքել ինձ զմխիթարիչ և զբարերար զամենասուրբ Հոգիդ, զօրացուցանելով և հաստատելով զիս

առ 'ի յաստուածային յայս քա-
հանայութիւնս, և առ 'ի քէն ինձ
ժողովուրդս խոստացեալ։ Օրհ-
նեալ ես գալստեամբդ քո առ մեզ,
Քրիստոս Աստուած մեր որդի Ա-
ստուծոյ և ամենաստուրբդ։ 'ի Հօրէ,
կամակցութեամբ սուրբ Հոգւոյն՝
եկիր և կեցուցեր զմեզ Աստուածդ
մեր։ ողորմեցար Հողորմելոցս, կան-
գնեցեր զգլորեալքս, հանդէս արա-
րեր փրկութեան մերում։ Վասն
բազում մարդասիրութեանդ քո
զիմ զանարժանութիւնս արժանա-
ւորեցեր և կարգեցեր առաջի սրբ-
բոյ սեղանոյս։ Վասն այսորիկ, Ա-
ստուած իմ, մի անարգեր զիս 'ի ժա-
մուս յայսմիկ, այլ անցո յինէն
զյանցանս իմ, և լուա զաղօտ Հոգւոյ
և մարմնոյ իմոյ, և տուր ինձ հա-
մարձակութեամբ օրհնել զքեզ
կենդանիդ Աստուած, 'ի հաճոյս ա-
մենասուրբ անուանդ Հօր և Որդւոյ
և Հոգւոյդ սրբոյ։ այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից։ ամէն։

Գ.

Տէր Աստուած մեր, որ ստացար զմեզ և ածեր 'ի կենդանութիւն, և ցուցեր մեզ Ճանապարհ փրկութեան, և զերկնային խորհրդոց քոց յայտնութիւն. քանզի դու ես որ եդիր զմեզ 'ի սպասաւորութիւն յայս զօրութեամբ Հոգւոյդ քո սրբոյ. արդ բարեհաճեցիր և այժմ, Տէր, լինել մեզ սպասաւորս սրբոյ քո խորհրդոյ: Ընկալ զմեզ զմերձաւորեալքս սրբոյ քում սեղանոյս՝ ըստ բազում գթութեան քում. զի եղիցուք արժանի մատուցանել քեզ զբանաւոր պատարագս զայս և զանարիւն զենումն՝ վասն մեղաց մերոց և ժողովրդեանս անգիտութեան. զորս առ ընկալ, Տէր, 'ի քո սուրբ յերկնային և յիմանալի սեղանդ՝ 'ի հոտ անուշից. և փոխանակ առաքեա 'ի մեզ զշնորհս Հոգւոյդ սրբոյ: Վերանայեաց 'ի մեզ Տէր, և 'ի պաշտօնս յայս, և ընկալ զսա

որպէս զԱբելի զընծայն, զՆոյի զենմունս, զԱբրահամու զողջակէզն, զՄովսէսի և զԱհարոնի զքահանայութիւնն, զՍամուէլի զնապատականն։ Եւ որպէս ընկալար 'ի ձեռաց սրբոց առաքելոցն զՀնամարիտ պաշտօնս զայս, դու ինքն Տէր, ընկալ և 'ի ձեռաց մերոց մեղաւորացս զպատարագս զայս քաղցրութեամբդ քով. զի արժանի լիցուք սպասաւորել անբիծ սրտիւ սրբոյ քում սեղանոյս, և գոցուք վարձս հատուցման ընդ քոց արդար և հաւատարիմ ոնտեսացն. բարեխօսութեամբ ամենասրբուհւոյ Աստուածածնին և ամենայն սրբոց քոց, վասն գթութեց միածնի որդւոյ քո տեառնդ մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում օրհնեալ ես, Հայր ամենակալ, հանդերձ ամենասուրբ և բարերար քո Հոգւովդ, այժմ և միշտ և յաւիտեան յաւիտենից. ամէն։

Դ

Տէր Աստուած մեր առաքեա ինձ զօրութիւն 'ի բարձանց, և զօրացո զիս 'ի սպասաւորութիւնս քո յայս՝ զի անդատապարտ կացից առաջի սրբոյ քո սեղանոյս, մատուցանել զանարատ քո զենումնս. վասն զի դու ես փրկութիւն մեր, որ օրհնեա և սրբեա զամենայն, Քրիստոս Աստուած մեր: Եւ քեզ ընդ Հօր և ընդ սուրբ Հոգւոյդ փառս մատուցանեմք, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԵՐԳ ՄԱՂԹԱՆԱՑ

ԱՌ ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ

Եկ սուրբ Հոգի՝ ստեղծօղ էից,
Յայց էլ մըտաց քոց ծառայից.
Եւ վերնական շնորհօք քո լից
Ըզքո ստեղծեալ սիրտ բոլորից:

Մըխիթարիչդ ամենայնի,
Եւ բարձրելոյն պարգև բարի,
Աղբիւր կենաց հուր կենդանի,
Սէր և օծումն խմանալի։ [ին,
Դու Եօթնարփեան շընորհք վե-
Մատն հայրական աջոյ ձեռին,
Դու աւետիք հօր բարձրելոյ,
Որ տաս բարբառս բերանոյ։
Վառեա ըզլոյս 'ի զգայարանս,
Հեղ ըզսիրոյ քո ըզհոսանս.
Զտրկարութիւն մարմնոյ մերոյ,
Միշտ զօրութեամբ քո ամրացո։
Ի բաց վանեա զթշնամութիւն,
Եւ պարգևեա զխաղաղութիւն.
Զի քեզ յաւէտ առաջնորդեալ,
Առ 'ի չարեաց լիցուք զերծեալ։
Տուր Ճանաչել մեզ քեզ ըզհայր,
Եւ զՄիածին իւր հաւատալ,
Եւ յերկոցունց զՀոգիդ բղխեալ,
Յամենայն ժամ սերտ հաւատալ։
Փառք պատիւ հօր Աստուծոյ,
Եւ Միածնին յարուցելոյ.
Հոգւոյն սրբոյ մըխիթարչի,
Այժմ և յաւէտ անլըռելի. ամէն։

ԱՂՕԹՔ

ԳՈՀՈՒԹԵԱՆ

Օրհնեցիր զտէր յամենայն ժամ, յամենայն ժամ՝ օրհնութիւն նորա 'ի բերան իմ։

Ի տէր պարծեսցի անձն իմ, լուիցեն հեզք, և ուրախ եղիցին։

Մեծարարէք զտէր ինձ, և բարձր արասցուք զանուն նորա 'ի միասին։

Խնդրեցի 'ի տեառնէ, և լուաւ ինձ. յամենայն նեղութենէ իմմէ փրկեաց զիս։

Մատիք առ տէր և առէք զլոյս, և երեսք ձեր մի ամաչեսցեն։

Այս աղքատ կարդաց առ տէր, և տէր լուաւ սմա. յամենայն նեղութենէ սորա փրկեաց զսա։

Բանակ հրեշտակաց ՝ն շուրջ է զերկիւղածովք իւրովք, և պահէ զնոսա։

Ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է տէր. երանեալ է այր որ յուսայ ՝ի նա։

Երկերուք ՝ի տեառնէ ամենայն սուրբք նորա. զի ոչ ինչ է պակասութիւն երկիւղածաց նորա։

Մեծամեծք աղքատացան և քաղցեան. բայց ոչք խնդրեն զտէր՝ մի՛ պակասեսցէ՝ ի նոցանէ ամենայն բարութիւն։

Եկայք որդեակք իմ՝ և լուարուք ինձ, և զերկիւղ տեառն ուսուցից ձեզ։

Ո՞վ է մարդ՝ որ կամի զկեանս, սիրէ զաւուրս իւր տեսանել՝ ի բարութեան։

Լռեցո զլեզու քո ՝ի չարութենէ. շրթունք քո մի՛ խօսեսցին զնենդութիւն։

Խոտորեա ՝ի չարէ, և արա զբարի. խնդրեա զխաղաղութիւն, և երթ զհետ նորա։

Աչք տեառն ՝ի վերայ արդարոց,ականջք նորա ՝ի վերայ աղօթից նոցա։

Երեսք տեառն ՝ի վերայ չարա-

գործաց, սատակել յերկրէ զնշա-
տակս նոցա։

Կարդացին արդարք առ տէր՝ և
տէր լուաւ նոցա, յամենայն նեղու-
թենէ նոցա փրկեաց զնոսա։

Մերձ է տէր առ այնոսիկ՝ որ մա-
ղեալ են սրտիւք, և զխոնարհս հո-
գւով կեցուցանէ։

Բազում նեղութիւնք են արդա-
րոց. յամենայնէ փրկէ զնոսա տէր.
և պահէ զամենայն ոսկերս նոցա, և
մի 'ի նոցանէ ոչ փշրեսցի։

Մահ մեղաւորի չար է, բայց որ
ատեայ զարդար՝ զղջասցի։

Փրկէ տէր զանձինս ծառայից իւ-
րոց, մի զղջասցին ամենեքեան որք
յուսացեալ են 'ի նա։ Փառք հօր։
(ՍԱՂՄ. ԼԳ.)

Ա.

Գոհանամ զքէն հայր ամենա-
կալ, Աստուած յաւիտենական,
որ զմեղուցեալ և զանարժան ծա-
ռայս քո ոչ ըստ իմոց ինչ բարե-

գործութեանց՝ այլ ըստ բաղում ողորմութեան քո արժանի արա-
ցեր հաղորդակից լինել սուրբ մարմնոյ և արեան միածնի քո։ Եւ
այժմ աղաչեմ զքեզ, մի՛ լեցի սա ինձ ՝ի դատապարտութիւն, այլ ՝ի
քաւութիւն և ՝ի թողութիւն մեղաց, սպառազինութիւն հաւատոյ,
և վահան ամրութեան կամաց ընդդէմ չարին։ Սրբեա զիս սրբոյք յա-
մենայն ախտից. հեռացո յինէն զամենայն աշխարհական ցանկութիւս.
և տպաւորեա յիս զսէր, զհամբերութիւն, զխոնարհութիւն, զհլութիւն, և զամենայն գործս առաքինութեան։ Ամրացո զիս, տէր, յամենայն դարանակալութեանց երևելի և անտեսանելի թշնամւոյն։
Խաղաղացո զամենայն զգնացս հոգւոյ և մարմնոյ իմոյ. յօդեա զիս
ընդ քեզ անմեկնելի, և տուր ինձ մեռանել սրբութեամբ. զի արժանի եղէց ուրախութեան սեղանոյ երկնից արքայութեանդ, ուր ոչք
ամենայն լուսով քո լցեալ, միշտ և հանապազ ուրախանան յանապատ

ուրախութիւնն, երանաւետեալք 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր. ո-
րում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից. ամէն:

Բ

Աղաչեմ զքեզ, մարդասէր փրկիչ, չարչարանք քո լեցի ինձ 'ի զօ-
րութիւն և 'ի պարիսպ ամրութեան. վէրք քո լեցին յարբեցումն և 'ի ճաշակ քաղցրութեան, յագենալ ինձ նոքօք և զմայլիլ. ցօղ արեան քո լեցի 'ի լուացումն ամենայն մեղաց իմոց, և մահ քո ինձ փառք մշտնջենաւոր. և 'ի նոսին լեցի ինձ սփոփումն և բերկրութիւն, կեանք և քաղցրութիւն: Եւ քեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն*:

* Թուղթ Ներսիսեան պապի Յ սուրբ ընդ-հանուր 'ի Պիսակ Թ. Մատուցողաց զաղօթս զայս զինքն սրբոյ պապարագին:

Գ

Հոգի Քրիստոսի, սրբեա զիս. մարմին Քրիստոսի, կեցո զիս. արիւն Քրիստոսի, արբո զիս. աղբիւր կողին Քրիստոսի, լուա զիս. քիրան Քրիստոսի, կենարարիծեա զիս. չարչարանք Քրիստոսի, զօրացո զիս։ Մարգարէր Յիսուս, լուր ինձ. 'ի վէրս քո ամրացո զիս, և մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց. 'ի նենգուելոյ թշնամի չարին պահեա զիս. 'ի ժամ մահուան իմոյ՝ կոչեա զիս առ քեզ, և ընկալ զիս. ընդ սրբոց քոց հրեշտակաց օրհնեցից զքեզ յաւիտեանս. ամէն։

Դ

Գոհանամք զքէն մարգարէր տէր և բարերար հոգւոց մերոց, զի երկնաւոր և անմահ խորհրդոց քոց արժանաւորեցեր զմեզ. և արդ ուղ-

ղաձևեա զՀանապարհս մեր, կեցո զմեզ զամենեսեան երկիւղիւդ քո սրբով. պահպանեա զկեանս մեր, հաստատեա զշաւիղս մեր. աղաչանօք սրբուհւոյ և փառաւորեալ Աստուածածնիդ, և աղօթիւք ամենայն սրբոց քոց. զի դու ես սրբութիւն մեր, քեզ փառս մատուցանեմք այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ե

Տէր՝ տէր Աստուած մեր, Աստուած կենդանարար, դու ուսո մեզ գոհանալ զքէն արժանապէս յաղագս բարերարութեանց քոց, զոր արարեր մեզ և առնիցես: Դու ես Աստուած մեր որ ընկալար զպատարագս զայս, մաքրեա զմեզ յամենայն պղծութենէ հոգւոյ և մարմնոյ: Ուսո մեզ զկատարեալ սրբութիւն երկիւղիւդ քով. որպէս զի մաքուր վկայութեամբ մըտայց մերոց ընկալցուք զման 'ի

արքութիւնէս քումմէ, և միաւո-
րեսցուք ընդ սուրբ մարմնոյ և ա-
րեան Որդւոյ քո. ընդունելով 'ի
սմանէ արժանապէս, ընկալցուք
զՔրիստոս բնակել 'ի մեզ, և եղի-
ցուք տաճար Հոգւոյդ քում սըր-
բոյ։ Այո, Աստուած մեր, մի՛ զոք
'ի մէնջ պարտական արասցես սոս-
կալի և երկնաւոր խորհրդոյս այս-
միկ. և մի՛ տկարասցի հոգի և կամ
մարմին անարժանութեամբ 'ի սմա-
նէ հաղորդելով. այլ տուր մեզ մին-
չև 'ի վերջին շունչ մեր արժանա-
պէս ընդունել զսրբութիւնս զայս
առ 'ի թոշակ կենացն յաւիտենից,
առ 'ի պատասխանատրութիւն հա-
ճոյական. զի եղիցուք և մեք հա-
ղորդս քոց յաւիտենական բարու-
թեանցդ, զոր պատրաստեցեր սի-
րելեաց քոց, Տէր։

Զ

Դարձեալ բազում անգամ ա-
ռաջի քո անկանիմ, և 'ի քէն հայ-

ցեմ բարերար և մարդասէր. որ-
պէս զի նայելով յաղաչանս մեր,
մաքրեացես զհոգի և զմարմին մեր
յամենայն աղտեղութենէ, և տա-
ցես մեզ անամօթս և անդատա-
պարտս կալ առաջի սրբոյ սեղա-
նոյ քոյ: Ընդունիցես, Աստուած, և
աղօթակցաց մերոց յառաջադիմու-
թիւն կենցաղոյ և հոգևորական
հանձարոյ. տուր նոցա հանապազ
երկիւղիւ և սիրով պաշտել զքեզ,
և անամօթս և անդատապարտ հա-
ղորդիլ սրբոյ քոյ խորհրդոյ, և երկ-
նային քո աղբայութեանդ արժա-
նաւորիլ. որպէս զի ընդ հովանեաւ
քո պահպանեալք հանապազ՝ քեզ
փառս վերառաքեսցուք Հօր և Որ-
դւոյ և Հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Է

ԱՌ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ

Աղաչեմ զքեզ սուրբ կոյս Մա-
րիամ Աստուածածին, վերօրհ-

նեալդ 'ի յերկինս և 'ի յերկրի. որ զհաստիչն ամենայն եղակիանաց արժանի եղեր կրել յորովայնի, զորոյ զնոյն Ճշմարիտ մարմին և արիւն անարժանս ընկալայ, 'ի ձեռն սուրբ կուսութեան քո և խոնարհութեան, և վասն չարչարանաց և մահուան միածնի քո, բարեխօս լեր առ նա վասն իմ մեղաւորիս. զի որ ինչ յանցեայ 'ի սուրբ քահանայապործութեանս անգիտութեամբ, հեղգութեամբ և տարտամութեամբ, քոյին ընդունելի բարեխօսութեամբ թող ցէ ինձ. ամէն:

Ը

ԵՐԳ ԳՈՀՈՒԹԵԱՆ

Ընդքեզ Աստուած գովաբանեմք,
Եւ ընդքեզ Տէր խոստովանեմք.
Ընդքեզ Հայր մեր անժամանակ
Պաշտէ երկիր առ հասարակ:
Քեզ հրեշտակաց զօրք ամենայն,
Երկինք և պետք միանգամայն.

Հոյլք քրովբէից և սրովբէից,
Անլքուեալի լեալ ձայնակից,
Եղանակեն զերգս օրհնութեանց,
Սուրբ սուրբ սուրբ ես Տէր զօրութեանց.
Լի են երկինք 'ւ երկիր համայն,
Փառաք քո մեծ վայելչութեան:
Զ քեզ պանծալի դասքք սրբոց,
Երկոտասան առաքելոց,
Պարքք գովեալ մարգարէից,
Տնօրէնութեանդ նախատեսից,
Գունդք լուսազգեաց մարտիրոսաց
Գովաբանեն զՏէրըդ փառաց.
Ըզքեզ մինչև 'ի ծագս երկրի,
Դաւանէ սուրբ եկեղեցի:
Ըզհայրըդ մեծ անքաւելի,
Ըզմիածինըդ քո զՈրդի,
Զմխիթարիչ քո սուրբ Հոգի,
Փառաւորէ անլքուելի:
Քրիստոս փառաց դու թագաւոր,
Անժամանակ ծընունդըդ հօր.
Ի փրկութիւն մարդկան ազգի,
Խոնարհեցար յարգանդ կուսի:
Դու կոխեցեր զմահու խայթոց.
Զերկինս բացեր յուսացելոց.

Եւ համբարձեալ յաջմէ նրատար,
Փառաք ընդ Հօր քո հաւասար։
Գալ միւսանգամ ես հանդերձել,
Ի դատել զազգըս հողածնեալ.
Եւ արդ խնդրեմք օգնել մեզ Տէր
Զոր պատուական արեամբ գնեցեր
Ընդ սուրբըս քո դասաւորեա
Ի փառս անանց և յարակայ.
Ըզժողովուրդըս քո փրկեա,
Զժառանգութիւն քո Տէր օրհնեա
Հովուեա զնոսա և խնամարկեա
Յայսմհետէ և առ յապայ.
Զօր հանապազ զքեզ օրհնեսցուք
Եւ զանուն սուրբ քո գովեսցուք։
Ընորհեա մեզ Տէր զաւուրս կեն
նաց,
Անցուցանել առանց մեղաց.
Ողորմեաց մեզ, Տէր, ողորմեաց,
Եւ գթութեամբ 'ի մեզ հայեաց
Ողորմութիւնդ լեցի 'ի մեզ,
Որպէս և մեք յուսամք 'ի քեզ.
Ի քեզ անձինք մեր յուսացան,
Մի ամաչեսցեն 'ի յաւիտեան.
ամէն։

ԱՂԵՐՍՔ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉՔ

ԱՂԵՐՍ ՀԱՒԱՏՈՑ

Հաւատամ, Տէր. օգնեա անհաւատութեանս։ (Մարկ.) — Հաւատացի՝ զոր և խօսեցայ։ (Սաղմ.) — Ես հաւատացի, եթէ դու ես Քրիստոս որդի Աստուծոյ՝ որ յաշխարհ գալոց էիր։ (Յոհ.) — Տէր, առ ո՞վ երթիցուք, զի բանս կենաց յաւիտենականաց ունիս։ (Յոհ.) — Վկայութեանց քոց մեք յոյժ հաւատացաք։ (Սաղմ.) — Տէր իմ և Աստուած իմ։ (Յոհ.) — Մերձ ես դու, Տէր, և ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են։ — Արդարութեամբ են վկայութիւնք քո

յաւիտեան իմաստուն արա և կեցո զնա։ (Սղմ.)—Երկինք և երկիր անցցեն, և բանք (քո) ոչ անցանիցեն։ (Մաթ.)

ԱՂԵՐՍ ՅՈՒՍՈՅ

Պահեա զնա, Աստուած իմ, զի ես 'ի քեզ յուսացայ։ — Ի քեզ, Տէր, յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան։ — Տէր Աստուած իմ, 'ի քեզ յուսացայ, փրկեա զնա։ — Տէր, փրկեա զծառայս քո, Աստուած իմ, որ 'ի քեզ յուսացայ։ — Ընդունելի իմ ես, ապաւէն իմ Աստուած, և ես յուսամ 'ի նա։ — Հոգի՛ քո բարի առաջնորդեացէ ինձ յերկիր ուղիղ։ — Եւ ես և մարմին իմ բնակեսցէ յուսով։ — Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումի՞ երկեայց։ Տէր, ապաւէն կենաց իմոց, ես յումի՞ դողացայց։ — Թէ յարիցէ 'ի վերայ իմ ճակատամարտ՝ սակայն և այսուհիկ 'ի քեզ, Տէր, յուսացայ։ — Բայց միայն Աստուծոյ հնազանդ լեր անձն իմ։ զի 'ի նմանէ է

ինձ փրկութիւն։ Նա է Աստուած իմ և փրկիչ իմ, ապաւէն իմ, զի մի սասանեցայց առաւել։ — ՅԱստուծոյ է զօրութիւն իմ և փառք իմ. Աստուած օգնութեան իմոյ, յոյս իմ առ Աստուած։ — Աստուած մեր՝ Աստուած կենարար։ — Ո՞քաւէ զմեզս քո, բժշկէ զամենայն հիւանդութիւնս քո։ Ո՞ փրկէ յապականութենէ զկեանս քո. պսակէ զքեզ ողորմութեամբ և գթութեամբ։ (Սաղմոսք) — Կեցուսցես զիս ողորմութեամբ քով, և ես օրհնեցից զքեզ զամենայն աւուրս կենաց իմոց։ — (Մանաս)։ — Ահա՛ սասիկ Աստուած իմ, փրկիչ իմ Տէր, և յուսացեալ եղէց 'ի նա, և ոչ երկեայց. զի փառք իմ և օրհնութիւն իմ Տէր, և եղև ինձ 'ի փրկութիւն։ (Եսայի) — Կայ ճնայ ինձ արդարութեան պսակն. զոր հատուսցէ ինձ Տէր յաւուր յայնմիկ։ (Բ. Տիմ.)

ԱՂԵՐՍ ՕԳՆՈՒԹԵԱՆ

Մի՛թէ յաւիտենից մերժեսցէ՞ զիս, Տէր, և ո՞չ ևս յաւելուցու՝ ի հաճել և ևս։ Կամ խոպան արդեւցէ՞ զողորմութիւն իւր յինէն։ — Կամ մոռացի՞ գթալ Աստուած իմ և ևս։ — Տէր, լուր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց։ — Դարձ, Տէր, և փրկեա զանձն իմ. կեցո՛ զիս, Տէր, ըստ ողորմութեան քում։ — Մի դարձուցաներ զերեսս քո յինէն, և մի խոտորիր բարկութեամբ՝ ի ծառայէ քումէ։ — Օգնական իմ լեր, Տէր, և մի անարգեր զիս, և մի թողուր զիս, Աստուած փրկիչ իմ։ — Մի մատներ զիս՝ ի ձեռս նեղչաց իմոց։ — Եւ զհոգի քո սուրբ՝ մի հաներ յինէն։ — Առաջնորդեա՛ ինձ՝ ի շաւիղս քո ուղիղս։ — Կեցո՛ զիս, Աստուած, զի հասին ջուրք յանձն իմ. ընկղայ ես՝ ի խորս անդնդոց, ուր ո՛չ դոյ ինձ հանգիստ։ — Մի՛ ընկղցեն զիս սելաստոյտք ջրոց, և մի՛ ընկղմեսցեն զիս

անդունդք խորոց։ — Հայեա յանձն իմ և փրկեա զիս, և վասն թշնամեաց իմոց ապրեցո զիս։ — Օգնեա՛ ինձ Տէր Աստուած իմ, և փրկեա զիս ըստ ողորմութեան քում։ — Արի՛ Տէր, օգնեա մեզ, և փրկեա զմեզ վասն անուան քո։ — Մի՛ թողուր զիս Տէր Աստուած իմ, և մի՛ ի բացեայ առնիր յինէն. հայեաց յօգնել ինձ Տէր փրկութեան իմոյ։ (Սաղմոսք) — Տէր, փրկեա՛ զմեզ, զի կորնչիմք։ (Մատթ.) — Օգնեա մեզ Տէր, զթացեալ՝ի վերայ մեր։ (Մարկ.) — Տէր, հայր և իշխան կենաց իմոց, մի՛ թողուր զիս։ Տէր հայր և Աստուած կենաց իմոց, ըզբօսանս աչաց մի՛ տար ինձ, և զյանկուութիւն սրտի դարձո՛ յինէն։ (Սիրաք)։

ԱՂԵՐՍ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Աստուած, քաւեա զիս զմեղաւորս։ — Հայր, մեղայ յերկինս և առաջի քո, չեմ արժանի կոչիլ որդի քո։ (Ղուկ.) — Յիսուս, որդի

դաւթի, ողորմեա ինձ։ (Մարկ.)
— Զանօրէնութիւնս իմ պատմեցից, և հոգացայց վասն մեղաց իմոց։ — Տէր, մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի բարկութեամբ քով խրատեր զիս։ — Մի մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում. զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։ — Ողորմեա ինձ, Տէր, զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։ — Ողորմեա ինձ, Աստուած ըստ մեծի ողորմութեան քում, և ըստ բազում գթութեան քում՝ քաւեա զանօրէնութիւնս իմ։ — Քեզ միայն մեղայ, Տէր, և չար առաջի քո արարի։ Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։ — Դարձո զերեսս քո 'ի մեղաց իմոց, և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն։ Սիրտ սուրբ հաստատեա յիս, Աստուած, և հոգի ուղիղ նորոգեա 'ի փորի իմում։ — Տէր, ողորմեա՛ ինձ, բժշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ։ —

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, և որպէս բեռն ծանր՝ ծանրացան 'ի վերայ իմ։ (Սաղմ.) — Մեղայ աւելի քան զաւազ առ եզը ծովու, և բազմացան անօրէնութիւնք իմ։ Զեմ արժանի հայել և տեսանել զերկինս 'ի բազմութենէ անօրէնութեան իմոյ։ — Եւ արդ խոնարհեցուցանեմ ըզծունր սրտի իմոյ և հայցեմ 'ի քաղցրութենէ քումէ։ Մեղայ, Տէր, մեղայ, և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ։ Ապաշխեմ և խնդրեմ 'ի քէն, Թող ինձ, Տէր, Թող ինձ, և մի կորուսաներ զիս ըստ անօրէնութեան իմոյ։ Մի յաւիտեան բարկանար ինձ, Տէր, և մի յիշեր զչարիս իմ. և մի պարտաւորեր զիս ընդ այնոսիկ որ ելանեն 'ի ներքոյ երկրի չարեօք։ Զի դու Աստուած՝ Աստուած ապաշխարողաց ես, և յիս ցոյց զբարերարութիւնդ քո՝ որ անարժանս եմ։ (Մանասէ)։

ԱՂԵՐՍ ՈՒՂՂՈՒԹԵԱՆ

Օրհնեալ ես դու Տէր, ուսո՛ ինձ զարդարութիւնս քո։ — Ի բաց ա-ռա յինէն զնախատինս և զարհա-մարհանս, զի զվկայութիւնս քո խնդրեցի։ — Ի ճանապարհս արդարութեանց քոց խմաստուն արա զիս, և քննեցից զսքանչելիս քո։ — Մերձեցայ ես 'ի վկայութիւնս քո, Տէր, մի յամօթ առներ զիս։ — Իմաստուն արա զիս և քննեցից զօրէնս քո. և պահեցից զնա բովորով սրտիւ իմով։ — Առաջնորդեա ինձ 'ի շաւիղս պատուիրանաց քոց, զի ընդ նոսա հաճեցայ։ — Դարձո՛ զաչս իմ զի մի տեսից զնանրութիւն, 'ի ճանապարհս քո կեցո՛ զիս։ — Ահա ցանկացայ պատուիրանաց քոց, յարդարութեան քումմ կեցո զիս։ — Եղիցի սիրտ իմ ամբիծ յարդարութեան քումմ, զի մի ամաչեցից։ — Ցաւիտեան ոչ մոռացայց զարդարութիւնս քո, զի նոքօք կեցուցեր զիս։ — Ընդ կամս բերանոյ ի-

մոյ հաճեա, Տէր, և զիրաւունս քո ուսո՛ ինձ։— Բնեռեա ընդ երկիւղ քո զմարմին իմ, զի՝ ի դատաստանաց քոց երկեայց յոյժ։— Զճանապարհս իմ ուղիղ արա՛ ինձ ըստ բանի՛ քում, և մի՛ տիրեսցեն ինձ ամենայն մեղք։— Եղիցի՛ ձեռն քո՝ ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս քո ընտրեցի։— Կեցցէ՛ անձն իմ, օրհնեսցէ զքեզ, և իրաւունք քո օգնեսցեն ինձ։— Եթէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ, մոռացի՛ զիս աջ իմ։— Լոյս տուր, Տէր, աչաց իմոց՝ զի մի՛ երբեք ննջեցից՝ ի մահ։ (Սաղմ.)

ԱՂԵՐՍ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ

Մեծացուսցէ՛ անձն իմ զՏէր... զի հայեցաւ՝ ի խոնարհութիւն (ծառայի) իւրոյ։— Արար ընդ իս մեծամեծս հզօրն, և սուրբ է անուն նորա։— Քակեաց զհզօրս յաթոռոց, և բարձրացոյց զխոնարհս։ (Ղուկ.)— Տէր, ո՞ է մարդ՝ զի յայտնեցար նմա, կամ որդի մարդոյ՝ թէ

համարիս ինչ զնա։ Մարդ նանրութեան նմանեաց, և աւուրք նորա որպէս հովանի անցին։ — Աղքատ և տնանկ եմ էս։ — Կար զօրութեան իմոյ՝ որպէս ոչինչ է առաջի իմ. սակայն ամենեքին ընդունայն է ամենայն մարդ մնեալ։ — Պանդուխտ եմ էս առաջի քո, նժդեհ և անցաւոր, որպէս ամենայն հարք իմ։ — Թէ ոչ տեառն օգնեալ էր, ինձ փոքր միւս ևս բնակեալ էր անձն իմ 'ի դժոխս։ — Ես արհամարհեալ եղէ և ոչ գիտացի. որպէս զանառուն համարեցայ առաջի քո։ — Ես որդն եմ և ոչ մարդ, նախատինք մարդկան և արհամարհանք ժողովրդոց։ — Մի մեղ, Տէր, մի մեղ, այլ անուան քում տուր զփառս՝ վասն ողորմութեան և ճշմարտութեան քո։ (Սաղմ.)

ԱՂԵՐՍ ՀԱՄԲԵՐՈՒԹԵԱՆ

Պատրաստ է սիրտ իմ, Աստուած, պատրաստ է սիրտ իմ։ — Վասն քո մեռանիմք զօրհանապազ, հա-

մարեցաք որպէս զոչխար'ի զենու�: Ես որպէս խուլ զի ոչ լսէ, որպէս համր՝ որ ոչ բանայ զբերան իւր: Եղէ ես որպէս մարդ՝ որ ոչ լսէ, և ոչ գոն խօսք 'ի բերան նորա: — Ես 'ի ատանջանս պատրաստ եմ, և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ: — Խուլ եղէ և խոնարհեցայ, լռեցի 'ի բարութենէ, և ցաւք իմ նորոգեցան յիս: — Ո՞վ է համբերութիւն իմ՝ եթէ ոչ դու Տէր, կամ կար զօրութեան իմոյ՝ թէ ոչ 'ի քէն: — Սիրտ իմ խռովեցաւ 'ի փորի իմում, և ես որպէս ստուերս 'ի խուսափել իմում պակասեցայ, և թօթափեցայ որպէս մարախ: — Խրատելով խրատեաց զիս Տէր, և 'ի մահ ոչ մատնեաց: — (Սաղմ.) — Եղեցին կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի: (Մատթ.) — Զզոհս և զպատարագս ոչ կամեցար, բայց մարմին հատատեցեր ինձ: Ահասիկ եկի առնել զկամս քո, Աստուած: (Եբր.) — Դու ես համբերութիւն իմ, Տէր. Տէր, յոյս իմ 'ի մանկութենէ իմմէ: (Սաղմ.)

ԱՂԵՐՍ ԳՈՀՈՒԹԵԱՆ

Զ ինչ տայց տրխտուր Տեառն ընդ ամենայնի՝ զոր և եւ ինձ։ — Խոստովան եղէց առ քեզ, տէր Աստուած իմ, բոլորով սրտիւ իմով, փառաւոր արարիցս զանուն քո յաւիտեան։ Մեծ եղև 'ի վերայ իմ ողորմութիւն քո. փրկեցեր զանձն իմ 'ի դժոխոց ներքնոց։ — Բարձր առնեմ զքեզ, Տէր, զի ընկալար զիս, և ոչ ուրախ արարեր զթշնամին իմ յիս։ Տէր Աստուած իմ, կարդացի առ քեզ և բժշկեցեր զիս. Տէր, հաներ 'ի դժոխոց զանձն իմ, փրկեցեր զիս յայնցանէ որ իջանեն 'ի գուբ։ — Ես ասացի 'ի բարեկենդանութեան իմում՝ թէ ոչ սասանեցայց յաւիտեան։ — Տէր, 'ի կամն քո եառուր գեղոյ իմոյ զօրութիւն... Տէր Աստուած իմ, յաւիտեան խոստովան եղէց քեզ։ — Ահա ծանեայ զի Աստուած իմ ես դու. զԱստուած օրհնեցից 'ի բանս իմ, և զՏէր գովեցից 'ի խօսս իմ.

յԱստուած յուսացայ և ոչ էր-
կեայց. զի՞ արասցէ ինձ մարդ։ —
Յինէն են ուխտք իմ՝ զոր տայց քեզ,
Աստուած, օրհնութեամբ։ Փրկե-
ցեր զանձն իմ 'ի մահուանէ, զաչս
իմ յարտասուաց, և զոտս իմ 'ի
դայթակղութենէ. հաճոյ եղէց ա-
ռաջի Տեառն յերկրին կենդանեաց։
— Օրհնեա անձն իմ զՏէր, և ամե-
նայն ոսկերք իմ զանուն սուրբ նո-
րա։ Օրհնեա անձն իմ զՏէր, և մի՛
մոռանար զամենայն տուրս նորա։
Ոչ ըստ մեղս մեր արար մեզ և ոչ
ըստ անօրէնութեան մերում հա-
տոյց մեզ։ Այլ որպէս բարձր են
երկինք յերկրէ՝ այնպէս զօրացոյց
Տէր զողորմութիւն իւր 'ի վերայ
երկիւղածաց իւրոց։ — Ահա դու,
Տէր, ծանեար զյեսին իմ և զառա-
ջին իմ. դու ստեղծեր զիս և եդեր
զձեռն քո 'ի վերայ իմ։ — Դու
ստացար զերիկամունս իմ և ընկա-
լար զիս յորովայնէ մօր իմոյ։ —
Խոստովան եղէց քեզ, Տէր, զի ա-
հեղ և սքանչելի ես. սքանչելի են
գործք քո, և անձն իմ սիրեաց

յոյժ։ — Խոստովան եղէց քեզ, Տէր, բոլորով սրտիւ իմով, առաջի հրեշտակաց սաղմոս ասացից քեզ. զի լուար զբանս բերանոյ իմոյ. երկիր պագից 'ի տաճար սուրբ քո, և խոստովան եղէց անուան քում՝ վասն ողորմութեան և ճշմարտութեան քո։ — Խոստովան եղիցուք Տեառն, զի բարի է, զի յաւիտեան է ողորմ նորա։ Խոստովան եղիցուք Աստուծոյն աստուծոց, զի յաւիտեան է ողորմ նորա։ (Սաղմ.)

ԱՂԵՐՍ ՍԻՐՈՅ ԵՒ ԽՆԴՈՒԹԵԱՆ

Աստուած սէր է։ (Ա. Յոհ.) — Ամենայն ինչ նովաւ եղև... որ ինչ եղևն։ Նովաւ կեանք էր։ (Յոհ.) — Սիրա իմ և մարմին իմ ցնծացեն առ Աստուած կենդանի։ — Սիրեցից զքեզ, Տէր, զօրութիւն իմ, Տէր հաստատիչ իմ, ապաւէն իմ և փրկիչ իմ։ — Օրհնեա անձն իմ զՏէր. Տէր Աստուած իմ, մեծ եղեր յոյժ։ — Ո՛րպէս զի մեծ են գործք քո, Տէր, զամենայն ինչ ի-

մասուութեամբ արարեր. և լցաւ երկիր ստեղծուածովք քո։ — Եղեցին փառք Տեառն յաւիտեան. Տէր ուրախ եղեցի յարարածս իւր։ — Օրհնեցից զՏէր 'ի կեանս իմ, սաղմոս ասացից Աստուծոյ իմոյ մինչև եմ ես։ Քաղցր եղեցի նմա օրհնութիւն իմ, և ես ուրախ եղէց 'ի Տէր։ — Խոստովան եղեցին առ քեզ, Տէր, ամենայն գործք քո. և սուրբք քո օրհնեսցեն զքեզ։ Արքայութիւն քո արքայութիւն ամենայն յաւիտենից, և տէրութիւն քո յազգէ յազգ։ — Զօրհնութիւն Տեառն խօսեսցի բերան իմ. օրհնեսցէ ամենայն կենդանի զանուն սուրբ նորա յաւիտեան, և յաւիտեանս յաւիտենից։ — Օրհնեցէք զՏէր, զի բարի է սաղմոսք, Աստուծոյ մերում քաղցր եղեցի օրհնութիւն։ — Բժշկէ զբեկեալ սիրտս, և պատէ զամենայն վէրս նոցա։ — Ամենեքեան քեզ սպասեն, և դու տաս կերակուր նոցա 'ի ժամու։ Բանս զՏեառն քո, կերակրեա զամենեսեան կամօք քովք։ — Ես 'ի Տէր

յուսացայ, ցնծացայց և ուրախ է-
ղէց 'ի փրկութեան քում: — Որ-
պէս զի բազում է ողորմութիւն
քաղցրութեան քո, Տէր, զոր պա-
հեցեր երկիւղածաց քոց: — Սիրե-
ցէք զՏէր, ամենայն սուրբք նորա,
զի ստուգութիւն խնդրէ Տէր: Քա-
ջալերեցարուք և զօրացին սիրտք
ձեր, ամենեքեան ցյք յուսացեալ
էք 'ի Տէր: — Մեծ արարէք զՏէր
ինև, և բարձր արասցուք զանուն
նորա 'ի միասին: — Ցնծացէք ար-
դարք 'ի Տէր, ուղղոց վայելէ օրհ-
նութիւն. խոստովան եղերուք Տեառն
օրհնութեամբ. տանջալեաւ սաղ-
մոսարանաւ սաղմոս ասացէք նմա:
— Ողորմութեամբ Տեառն լի է երկ-
իր, և բանիւ Տեառն երկինք
հաստատեցան, և հոգւով բերանոյ
նորա ամենայն զօրութիւնք նոցա:
— Երանի՛ ազգի որոյ Տէր Աստուած
օգնական է նմա, ժողովուրդ զոր
ընտրեաց 'ի ժառանգութիւն իւր:
— Ո ստեղծ առանձինն զսիրտս նո-
ցա, 'ի միտ առնու զամենայն գործս
նոցա: — Ի նա ուրախ եղիցին սիրտք

մեր և յանուն սուրբ նորա յու-
սացուք : — Աչք իմ յամենայն
ժամ առ Տէր, և նա հանէ յորո-
գայթէ զոտս իմ: — Տէր, սիրեցի
զվայելչութիւն տան քո և զտեղի
յարկի փառաց քոց : — Անձն իմ
ցնծասցէ 'ի Տէր, ուրախ եղիցի 'ի
փրկութեան նորա. և ամենայն ոս-
կերք իմ ասասցեն, Տէր, ո՞ նման է
քեզ : (Սաղմ.) — Սիրելին իմ ինձ
և ես նմա : (Երգ)

ԱՂԵՐՍ ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԿԵՆԱՑ

Ցոյց ինձ, Տէր, զկատարած իմ,
և զթիւ աւուրց իմոց՝ քանիո՞ն է,
զի գիտացից թէ ո՞րչափ ինչ պակա-
սեալ է յինէն : Ահա չափով եդիր
զաւուրս իմ, և կար զօրութեան
իմոյ որպէս ոչ ինչ է առաջի իմ:
Սակայն ամենեւին ընդունայն է ա-
մենայն մարդ մեղի : — Զի՞նչ կայ
իմ ընաւ յերկինս, կամ 'ի քէն
զի՞նչ ևս խնդրեցից յերկրի : — Ել-
աղեաց սիրտ իմ և մարմին իմ.

Աստուած որոյ խնդ, բաժին իմ Աստուած յաւիտեան։ — Ինձ մերձենալ առ Աստուած բարի է, և դնել առ Տէր զյոյս իմ։ — Տա՛ր ոք ինձ թեւս որպէս աղաւնոյ, զի թռուչէի վերանոյն, հեռացեալ դադարէի։ (Սաղմ.)

Այր մի տառապեալ եմ ես. ո՞վ ապրեցուսցէ զիս 'ի մարմնոյ սոսի մահու։ (Հռոմ.) — Ինձ կեանք Քրիստոս է, և մեռանել շահ։ — Ելանել և ընդ Քրիստոսի լինել՝ առաւել լաւ համարիմ։ (Փիլիպ.) — Վա՛յ է ինձ, զի ընդ երկար եղև պանդխտութիւն իմ։ — Տէր.. դու ես բաժին իմ յերկիր կենդանեաց.. Տէր, հա՛ն 'ի բանտէ զանձն իմ, դոհանամ զանուանէ քումմէ։ — Սպասեցին աչք իմ փրկութեան քում, Տէր.. Զբերան իմ բացի և առի զհոգի.. Կանխեցին աչք իմ առաւօտուց.. Ցնծացայ ես 'ի բանս քո՝ որպէս այն՝ որ գտանէ աւար բազում։ — Զմի խնդրեցի 'ի Տեառնէ և զայն ողջէմ, բնակել ինձ 'ի տան Տեառն զամենայն աւուրս կենաց իմոց։ —

Խնդրեցին երեսք իմ զերեսս քո, Տէր, խնդրեցին։ —

Ուրախ եղէ ես ընդ այնոսիկ որք ասէին ցիս, 'ի տուն Տեառն երթիցուք մեք։ Հասեալ կային ոտք մեր առ դրունս քո, Երուսաղէմ։ — Ո՞րպէս սիրելի են յարկք քո, Տէր զօրութեանց, ցանկայ և փափագէ անձն իմ 'ի դաւիթս քո։ Սիրտ իմ և մարմին իմ ցնծացեն առ Աստուած կենդանի։ Քանզի ՀՆՃԼՈՒԿ եգիտ իւր տուն, տատրակ զբոյն՝ ուր դիցէ զձագս իւր։ — Սեղան քո, Տէր զօրութեանց, թագաւոր իմ և Աստուած իմ։ — Երանի՛ ամենեցուն՝ որ բնակեալ են 'ի տան Տեառն, յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ։ — Երանեալ է այր՝ որոյ օգնութիւն իւր 'ի քէն է։ Ելս եդ 'ի մտի իւրում 'ի հովտէս տրամութեան 'ի տեղւոջ յորում ուխտեաց։ — Լաւ է ինձ մի օր 'ի դաւիթս քո՝ քան զհազարս։ Ընտրեցի ընդ աղբ դալ 'ի տան Աստուծոյ՝ քան զբնականալ 'ի յարկս մեղաւորաց։

Որպէս փափագէ եղջերու յաղ-
թերս ջուրց, այնպէս փափագէ ան-
ձին իմ առ քեզ, Աստուած հզօր և
կենդանի. երբ եկից երևեցայց երե-
սացդ Աստուծոյ: — Աստուած,
Աստուած իմ, ես առ քեզ առա-
ւօտ առնեմ. ծարաւեաց առ քեզ
հոգի իմ, քանիպատիկ ես և մար-
մին իմ. որպէս երկիր անապատ և
անջուր՝ ուր ոչ գոյ 'ի նմա ճանա-
պարհ: Այսպէս 'ի սուրբս երևե-
ցայց քեզ, տեսանել զիձ զզօրու-
թիւն քո և զփառս քո: Վասն զի
լաւ է ինձ ողորմութիւն քո քան
զկեանս իմ, և շնորհք իմ գովեսցեն
զքեզ: — Յերեսաց քոց երա-
ւունք ինձ ելցեն, և աչք իմ տեսցեն
զուղղութիւն: Պահեա զիս որպէս
բիբ ական, 'ի հովանի թևոց քոց
ծածկեսցես զիս: — Ես արդարու-
թեամբ երևեցայց երեսաց քոց,
յագեցայց յերևել փառաց քոց:
— Տան քում վայելէ արբութիւն,
Տէր, ընդ երկայն աւուրս: — Այս
է հանգիստ իմ յաւիտեանս յաւի-
տենից. 'ի սմա բնակեցայց, զի հա-
ճեցայ ընդ սա: (Սաղմ.)

ԱՂԵՐՍ ԱՌ ՏԻՐԱՄԱՅՐՆ

Ո՞վ է սա որ երևեալս է իբրև զառաւօտ. գեղեցիկ իբրև զլուսին, ընտիր իբրև զարեգակն, զարմանալի յօրինեալ: (Երգ.) — Ահա մայրդ քո: (Յովհ.)

Ուսա՞ի է ինձ այս, զի եկեսցէ մայրն Տեառն իմոյ առ իս: — Մեծացուսցէ անձն իմ զՏէր, և ցնծացաւ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով: Զի հայեցաւ 'ի խոնարհութիւն Աղախնոյ իւրոյ: Յայսմհետէ երանեսցեն (քեզ) ամենայն ազգք: — Երանի՛ որովայնին որ կրեաց զքեզ, և ստեանցն՝ որ դիեցուցին զքեզ: (Ղուկ.) Որպէս աչք աղախնոյ 'ի ձեռն տիկնոջ իւրոյ, այնպէս են աչք մեր առ քեզ: (Սաղմ.) — Օրհնեալ ես դու 'ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո: (Ղուկ.) — Իշխեա մեզ դու և որդի քո: (Դատ.) Իբրև մայրն որդւովք բերկրեալ: (Սաղմ.) — Քոյր մեր, եղիցես 'ի հազարս և 'ի բիւրս: Եւ 'ի քեզ օրհ-

նեացին ամենայն աղգք երկրի։ — Օգնեաց քեզ Աստուած իմ, և օրհ-
նեաց զքեզ օրհնութիւն երկնից 'ի վերուստ, և զօրհնութիւն երկրի՝
լի ամենայնիւ. վասն օրհնութեանց ստեանց և արգանդի... քոյ, որ
զօրացան քան զօրհնութիւնս լե-
ռանց մշանջենաւորաց, և քան զօրհ-
նութիւնս բլրոց յաւիտենականաց։
(Ծննդ.) — Ամենևին գեղեցիկ ես,
և արատ ինչ ոչ գոյ 'ի քեզ։ — Իւղ
անոյշ հեղեալ է անուն քո. զհետ
հոտոյ իւղոց քոց ընթացուք մեք։
— Ցնծացուք և ուրախ լիցուք 'ի
քեզ։ Ծաղիկ դաշտաց, շուշան հով-
տաց. իբրև շուշան 'ի մէջ փշոց։ —
Արի եկ մերձաւոր իմ, գեղեցիկ իմ,
աղաւնի իմ։ Դիր զիս իբրև զկնիք 'ի
սրտի քում։ (Երգ.)

ՅԻՇԵԼԻՓ

1. Յիշեա, յիշեա ով քահանայ Աստուծոյ, զի կրկին անգամ նուիրեալ ես առ Աստուած. կրկին պարտիս նմա։ — «Սոքա ընտրեցան 'ի մարդկանէ՝ առաջի Աստուծոյ և գառին»։ (Յայտ.)

2. Անբաւ են լաւութիւնքն, և բարձր է յոյժ կատարելութեանն աստիճան. սակայն պարտ և արժան է մեզ ժամանել ժողովել զնոսին, զի մի գտանիցիմք ամաչեցեալք յատենի Տեառն։ — «Եղերուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է»։ (Մատթ.)

3. Փրկութեան քուամ կամ կորըստեան՝ կցորդ է և փրկութիւն կամ կորուստ բազմաց։ — «Յուցցուք մեք եղբարց մերոց, զի 'ի մեզ

կան կախեալ ոգիք նոցա, և արբու-
թիւնքն և սեղանքն »։ (Յովհ.)

4. Հիմ նուիրեցար Աստուծոյ, բայց 'ի վաստակել հանապազօր 'ի արբութիւն անձին։ — « Այս են կամք Աստուծոյ՝ արբութիւն ձեր »։ (Ա. Թես.) — « Արժանի գնալ կոչմանն՝ յոր կոչեցայք, ամենայն խոնարհութեամբ և հեզութեամբ և երկայնմտութեամբ »։ (Եփես.)

5. Եթէ ոչ ստրկանաս այսօր ընդ երիկեան թերութիւնս, գուցէ վաղիւ չարաչար ևս սխալեսցիս, փութա յուղղութիւն զի քան ըզկարծիս՝ մերձ է վախճանն։ — « Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն՝ մինչդեռ ևս 'ի ճանապարհի. գուցէ մատնիցէ զքեզ... և արկանիցիս 'ի բանդ »։ (Մատթ.)

6. Ոչ զանձին ևեթ համարս պահանջիցիս 'ի Տեառնէ, այլ որքանեաց վերակացու և հայր ևս կարգեալ։ — « Զգոյշ կացէք անձանց և ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին սուրբ՝ տեսուչս »։ (Գործ.)

7. Այնքան վստահ լեր յԱստուած՝ որքան անվստահ յանձն քո։ — «Նա գիտաց զստեղծուածս մեր. և յիշեաց թէ հող եմք»։ (Սաղմ.)

8. Մի խնդրեր քանքար շատ, այլ զքաջիկ կիրառութիւն տուեցելոցն քեզ։ — «Որոմ շատ ըլլաւ՝ շատ խնդրեսցի 'ի նմանէ»։ (Ղուկ.)

9. Եթէ յաջողեցար՝ այն Աստուծոյ է, եթէ վրիպեցար՝ այն քո է։ — «Աստուած է որ յաջողէ 'ի մեզ զկամելն և զառնելն վասն հաճութեան»։ (Փիլիպ.)

10. Վարդապետ կոչիս, մի արհամարհեր զուսումն կարևոր. զի կայ դեռ քեզ գիտելոյ։ — «Սնանիցիս բանիւք հաւատոց և բարուք վարդապետութեամբ»։ (Ա. Տիմ.)

11. Մի արկաներ յիր անտուրբ և անօգուտ զձեռն՝ որ օծեալ և սրբեալ է Աստուծոյ։ — «Ձեռք մեր շօշափեցին 'ի վերայ բանին կենաց»։ (Ա. Յովհ.)

12. Եթէ 'ի սպասու Աստուծոյ կաս՝ մի երկբայիս բնաւ յօգնութե-

նէ նորա։ — «Ես ընդ ձեզ եմ»։ (Մատթ.)

13. Յամենայնի՝ Աստուծոյ յանձն արա զքեզ, որում յանձն եղեն և այլոց հոգիք։ — «Գիտէ Հայր ձեր երկնաւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն»։ (Մատթ.)

14. Ի յաւիտենից կոչեաց զքեզ Աստուած 'ի պաշտօն իւր. քանզի գոհութեամբ և մտադիւր անել նոցէ քեզ պաշտել զնա։ — «Մէք սիրեսցուք զԱստուած, զի նա նախ սիրեաց զմեզ»։ (Ա. Յովհ.)

15. Ընդ լաւութիւն և ընդ մոլութիւն էնք Հանապարհ միջնաշաւիղ։ — «Մինչև ցերբ կաղայք ընդ երկուս հեաս»։ (Գ. Թագ.)

16. Զոր միանգամ եառուրդ Աստուծոյ՝ ոչ ևս է քոյ. յիշեա զԱնանխա։ — «Զինչ ունիս՝ զոր ոչ նոցէ առեալ. և եթէ առեր՝ զի՞ պարծիս իբրև զչառեալ»։ (Ա Կորն.)

17. Աղօթք և հառաչանք՝ բանալիք լեցին դժուարինցն 'ի պաշտամանդ։ — «Մի՛ ինչ հոգայք, այլ ամենայն աղօթիւք և խնդրուածովք»։ (Փիլիպ.)

18 • Ակնարկի մի սրտառուչ յերկինս 'ի վեր՝ քանի՞ լամպարս շնորհաց ոչ ինչցց անտի։ — «Հայեցաւ յերկինս, և եսես զփառս Աստուծոյ»։ (Գործք •)

19 • Յիշեա զի քեզ սեփական և հայր է Աստուած, որպէս և դու հայր ես ժողովրդեան։ — «Ես եղէց նմա 'ի հայր և նա եղիցի ինձ յորդի»։ (Բ • Թագ •)

20 • Այնքան յառաջես՝ որքան ճգնիս։ — «Զոր ինչ սերմանէ մարդ՝ զնոյն և հնձեսցէ։ — Զբարիս գործել մի՛ ձանձրացուք, զի 'ի ժամանակի իւրում հնձեսցուք առանց լքանելոյ»։ (Գաղ •)

21 • Խաղաղարար աշխարհի կարգեցար, մի՛ ընդ ու�ք խռովիցիս, և մի՛ իսկ ընդ անձին։ — «Զխաղաղութիւն զիմ տամ ձեզ • ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ»։ (Յովհ •)

22 • Յիշեա զերանութեան Քրիստոսի, զի քեզ նախ վայել է ընկալուչ նոցին լինել և ապա թէ ուսմկին։ — «Երանի այնոցիկ է՝ որ լսեն

զքանն Աստուծոյ և պահիցեն » : (Ղուկ.)

23. Քրիստոս է քո առաջնորդ, օրինակ և զօրաւիգն. մի զանգիտեր այլ նմանեաց : — « Հաստատութիւն ընթացցուք 'ի պատերազմ՝ որ առաջի կայ մեզ. հայեացուք 'ի զօրագլուխն հաւատոց և 'ի կատարիչն Յիսուս » : (Եբր.)

24. Զոր յաւիտեանս ժառանգել կամիս՝ ընդէր ոչ խնդրես այժմէն : — « Արքայութիւն երկնից բռնադատի, և բռնաւորք յափշտակեն զնա » : (Մատթ.)

35. Զգուշութեամբ պահեա և մի զլանաս զշնորհս՝ որ վասն յանձնելոյն 'ի քեզ հօսի տուան : — « Մի թէ հովիւք զանձինս արածեն. ոչ հովիւք զխաշինս արածեն » : (Եզեկ.)

26. Քրիստոս է քո նախագաղափար. և քեզ անկ է ճշդապատգոյնս նմանել նմա, որպէս զի և զայլս 'ի նոյն կրթիցես պատկեր. կարելով ասել ընդ Պօղոսի. « Նմանողք լինջ եղերուք, որպէս և ես Քրիստոսի» :

27. Երկնաւոր հրոյն է պաշտօ-

նեայ, ջեռո և բորբոքեա զգրաա-
ցեալ հոգիս. մի արդեօք ինքնին սա-
ռուցեալ իցես։ — «Հուր եկի ար-
կանել յերկիր, և զի՞նչ կամիմ թէ
արդէն իսկ բորբոքեր»։ (Ղուկ.)

28. Աստուածայնոց իրաց եղար
սեղանաւոր, մի գոցի առ քեզ մա-
մոնայ։ — «Ոչ ոք կարէ երկուց տե-
րանց ծառայել»։ (Մատթ.)

29. Եթէ դժուարաւ իցեն մուտք
մեծատան յարքայութիւն, քանի՞
ինչ լիցի ընչասէրն քահանայի։ —
«Հեշտագոյն դժուարին է որ զինչսդ
ունին՝ մտանել յարքայութիւն Աս-
տուծոյ»։ (Մարկ.)

30. Յորմէ հարկ իսկ է քեզ հրա-
ժարել վաղ կամ անագան, հրա-
ժարեաց այժմէն կամովին։ — «Ե-
թէ յարերուք ընդ Քրիստոսի՝ ա-
պա զվերինն խնդրեցէք, զվերինն
խորհեցարուք, մի զայս՝ որ յերկրի
ասա է»։ (Կողոս.)

31. Եթէ քեզ չուսուցանելն մեղք
իցէն, իսկ զի՞նչ զայլս ուսուցանել
և զնոյն ոչ առնել։ — «Որ ոք գի-
տիցէ զբարին և ոչ առնիցէ, մեղք
էն նմա»։ (Յակ.)

32. Մի՛ չանար մարդկան հաճոյ լինել, այլ զմարդիկ առնել հաճոյս Աստուծոյ։ — «Եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի՝ ապա Քրիստոսի ծառայ ոչ էի»։ (Գաղ.)

33. Հարկ է քեզ առաւել ինքն քան զաշխարհիկսն՝ աւագ աչօք հայել ընդ բնաւ, և ճանաչել՝ զի «Ամենայն ինչ որ ընդ արեգակամբ՝ ընդունայնութիւն է»։ (Ժող.)

34. Եթէ ոչ սիրես զարհամարհին քո ասէն վասն Քրիստոսի, զինարդ փառաւորիցես անդ ընդ նը-մա։ — «Երանի՛ է ձեզ յորժամ նախատիցեն և ատիցեն, և ասիցեն զամենայն բան չար սուտ վասն իմ»։ (Մատթ.)

35. Ըստ աշխարհիս փայլմունք և փողփողմունք՝ յաճախ խափանեն առ'ի մէնջ զլոյսն երկնային։— «Սէր աշխարհիս այսորիկ՝ թշնամութիւն է առ Աստուած»։ (Յակ.)

36. Ուր չինք քեզ հարկ երևելոյ՝ կաց 'ի թաքստի. յերկինս իմա ըզ-քաղաքավարութիւն քո։ — «Մուտ 'ի սենեակ քո և փակեա զդուռս

քո։ ։ ։ և Հայրն քո որ տեսանէ 'ի ծածուկ՝ հատուցցէ քեզ յայտնապէս »։ (Մատթ.)

37. Եթէ ոչ հոգաս բժշկել զքո ախտ, զինարդ զնոյն յայլս դարմանեցես։ — « Բժիշկ, բժշկեա զանձն քո »։ (Ղուկ.)

38. Մի լինիր ձեռնեարէց 'ի տեսչութիւն հոգւոց՝ ուր եթէ ճարտարապետնք քան զքեզ կայցեն։ — « Մի բազմիցիս յառաջին բարձին, դուցէ պատուականագոյն ես քան զքեզ եկեալ եկիցէ »։ (Ղուկ.)

39. Զոր ոչ կարես գիտութեամբդ ուղղել, խոնարհութեամբ և արտասուաւք հայցես։ — « Որ սիրէ զԱստուած՝ նա է տեղեկացեալ 'ի նմանէ »։ (Հռոմ.)

40. Մեռելութիւնք զդայարանաց յոյժ կարևոր պահարանք են շնորհաց քահանայի։ — « Եթէ մեռարուք ընդ Քրիստոսի 'ի տարերաց աշխարհիս, զի՞ ևս իբրև զկենդանիս տանէն յաշխարհիս կրօնաւորիք »։ (Կողոս.)

41. Ընդ օրհասական դեգերիս

և զհանդերձելն ցուցանես, զինչդ ոչ տեսանես և զքո մահ մոռալուս։ — «Ամենեցուն վախճան մերձեալ է, զգաստացարուք այսուհետև»։ (Ա. Պետ.)

42. Զխաչ ցաւոց Քրիստոսի բարձեալ հանապազ 'ի թիկունս, և զՔահ սիրոյ նորա 'ի ձեռս, ապա երթ ուր և երթաս։ — «Տէր ուղղեսցէ զսիրտս ձեր 'ի սէրն Աստուծոյ և 'ի համբերութիւնն Քրիստոսի»։ (Բ. Թես.)

43. Ոչ վայրապար գործել պատուիրեցար, այլ հոգւոյն Քրիստոսի։ — «Որ հոգւոյն Աստուծոյ վարին՝ նոքա են որդիք Աստուծոյ»։ (Հռոմ.)

44. Հեղգութիւն և գաղջութիւն դահիճք են պաշտամանց քահանայի։ Երկիր զի մի լուիցես յԱստուծոյ, թէ «դու գաղջ ես, և ոչ ջերմ և ոչ ցուրտ, հանդերձեալ ես փսխել 'ի բերանոյ իմմէ»։ (Յայտ.)

45. Պաշտել՝ ասաց քեզ Յիսուս ընդ իւր, և ոչ պաշտօն առնուլ. մի կրթիր զհետ բարձից և աշտիճա-

նաց։ — «Որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել, և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց։ (Մատթ.)

46. Զհետ մոլորելոյն և հիւանդին փուլթալ ուսոյց Քրիստոս, և ոչ դեգերել 'ի դրունս աւազակաց և բարեկեցիկ։ — «Մի յուսայք յիշխանս և մի յորդիս մարդկան, զի ոչ գոյ փրկութիւն 'ի նոսա»։ (Սղմ.)

47. Եթէ նեղեսս անձին իբրև փոքու ինչաստու, զմեծամեծան քեզ ո՞ նեղիցէ։ — «Եթէ յանկրաւ մամոնային չեղէք հաւատարիմք՝ զճշմարիտն ձեզ ո՞ հաւատացէ»։ (Ղկ.)

48. Առանց բազում երկանց և քրտանց յինչ ոք ոչ յաջողի. դու անցաւ և անաշխատ՝ համարիցիս զգործս պաշտամանդ վճարել։ — «Բազում նեղութեամբք պարտէ մեզ մտանել յարքայութիւն Աստուծոյ»։ (Գործ.)

49. Եթէ վասն Աստուծոյ՝ յաջաց մարդկան էլեր, ցնծա ընդ առաքեալսն. նոցին վիճակակից լինիս։ — «Եթէ աշխարհ զձեզ ա-

տեայ՝ գիտասջիք զի նախ զիս ա-
տեաց » : (Յովհ.)

50 . Որպէս ուղիս ընդ զառիվայր
վախիր՝ թափեաց և ամոյ անշաղախ
ընդ աշխարհ, յոր թէ հարկ լինիցի
մինչ : — « Հայր սուրբ՝ պահեա զնո-
սա .. յաշխարհէ ասի չէն, որպէս
և ես չեմ յաշխարհէ ... պահեա
զնոսա 'ի չարէ » : (Յովհ.)

51 . Որպէս կեաս՝ այնպէս մե-
ռանիս . կեաց այնպէս՝ որպէս մե-
ռանելն կամիս : — « Արդարն եթէ
հասցէ 'ի վախճանել՝ 'ի հանդիս-
տեան եղիցի » : (Իմաստ.)

52 . Սուրհանդակ ես արքայու-
թեան, տես արդ այժմիկ յորպիսի
գոտանիս ճանապարհ : — « Իբրև զի
գեղեցիկք են ոտք աւետարանչի
համբաւոյն խաղաղութեան » : (Եսայի.)

53 . Վաղու անցեալ է 'ի քէն
վայելչութիւն աշխարհիս . զայդ
յայտնեա վարուք քան բանիւ : —
« Ամենայն որ ինչ յաշխարհի է՝
ցանկութիւն է մարմնոյ և ցանկու-
թիւն աչաց և ամբարտաւանութիւն
ասի կենացս » : (Ա. Յոհ.)

54. Յաշխարհէ Էլանել՝ թերևս չկցէ քեզ մարթ, այլ զաշխարհ սիրել՝ ամենևին իսկ անմարթ։ — «Մի սիրէք զաշխարհ և մի որ ինչ յաշխարհի է»։ (Ա. Յոհ.)

55. Տես, որպիսեաց ընտանեանս, կամ՝ յո՞ յարիս. զնոսին և գտցես յելս քո 'ի կենցաղոյս։ — «Ոչ կարէ ծառ բարի պտուղ չար առնել, և ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել»։ (Մատ.)

56. Որ զԿրիստոս կերպարանեալդ ես՝ եթէ ոչ և քրիստոսօրէն վարիս՝ յոյժ չարաչար կեղծաւորիս։ — «Կրիստոսի չարչարանքն մարմնով վասն մեր, և դուք 'ի նոյն միտս վառեցարուք»։ (Ա. Պետ.)

57. Անհնար է քեզ իմաստութեամբ յաւիտենիս այսորիկ՝ յայն յաւիտեանս ժամանել։ — «Իմաստութիւն աշխարհիս այսորիկ յիմարութիւն է առաջի Աստուծոյ»։ (Ա. Կորն.)

58. Մի եթէ ախտ տարբացեալ 'ի քեզ՝ շատ է 'ի կորուստ քո, թէ ոչ հանապազ տարչանաս։ — «Որ

միով իւիք գթիցէ՝ եղև ամենայն օրինացն պարտապան »։ (Յոհ.)

59. Եթէ երկար թուիցի քեզ ժամանակս, ապա ոչ ծանեար ըզյաւիտեանն։ — « Ոչ յամեցուս ցէ Տէր զաւետիսն՝ որպէս ոմանք յամրն համարին »։ (Բ. Պետ.)

60. Վաճառական կարդեցար միակն քրիստոսեան պատուական մարգարտի, զայլ ամենայն կենցաղական՝ խոտան համարեալիր։ — « Զմի խնդրեցի 'ի Տեառնէ և զսոյն աղաչեմ, բնակիլ ինձ 'ի տան Տեառն զամենայն աւուրս կենաց իմոց »։ (Սաղմ.)

61. Սակայ քննեա 'ի քեզ զսիրտ քո, ո՞ւր հանգիցէ. յարարածս՝ եթէ յարարիչն։ — « Ուր գանձն ձեր է՝ անդ և սիրտ ձեր եղիցի »։ (Մատթ.)

62. Շնորհաց մատակարար ես, լեր լի շնորհօք՝ ըստ քում կարի։ — « Զեմք ընդ օրինօք, այլ ընդ շնորհօք »։ (Հռոմ.)

63. Եթէ ոչ առաւելուցու սրբութիւն քո քան զաշխարհիկ մարդոյ, զուցէ վրէպ գայցես յաստի-

Հանէդ և ասա և անդ։ — «Եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր քան զդպրացն և զփարիսեցւոց՝ ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից»։ (Մատթ.)

64. Ի բարձու աշտանակի ճրագ վառեցար. կամ լուսաւորես, կամ զբիծս քո նշաւակես։ — «Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինսն է»։ (Մատթ.)

65. Ամենասկիզբ էս Քրիստոսի, վասնզի յամենայնոցն ժամանիս։ — «Քակեաց զՀզօրս յամենայնոցն, և բարձրացոյց զխոնարհս»։ (Ղուկ.)

66. Յիսուսի աշակերտ էս և հեռուորդ, պատուական և ուստ զՀեզութիւն։ — «Ուսարուք յինէն զի հեզ եմ և խոնարհ սրտիւ և գտջիք հանգիստ անձանց ձերոց»։ (Մատթ.)

67. Եթէ դժուարին է շահելն ողբով, դիւրագոյն ևս է կորուսանելն խստութեամբ։ «Եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ»։ (Մատթ.)

68 • Ձեռք քո նուիրեալ են այսուհետև՝ի մանչն արօրին Քրիստոսի, մի զուր և՝ի վնաս քո դարձցես հայել յետս՝ յաշխարհ։ — «Ոչ ոք արկեալ ձեռն զմանչով՝ և դարձեալ հայեցի յետս՝ թէ յաջողեաալ ինչ արքայութեանն Աստուծոյ»։ (Ղկ•)

69 • Արա դու զարժանն, և զելս իրացն թող յԱստուած։ — «Ընդ Տեառն երկայնմտութիւնն՝ փրկութիւն համարեսջիք»։ (Բ• Պետ•)

70 • Տրամել ընդ անյաջողն՝ աղբատութիւնչ է զԱստուծոյ։ — «Գոհացարուք յամենայն ժամ՝՝ի վերայ ամենայնի»։ (Եփես•)

71 • Եթէ ամենայն աշակերտ Քրիստի՝՝ի սիրելոյ զընկերն ճանաչի, քանի՞ հզօր պահանջն սէր՝՝ի վերակացուէ անտի աշակերտաց։ — «Նա զանձն իւր էդ՝՝ի վերայ մեր• և մեք վասն եղբարց մերոց պարտիմք դնել զանձինս»։ (Ա• Յովհ•)

72 • Քահանայի չէ՝՝ի դէպ ունել ինչ աւելի• զի հայր է ամենայն աղքատի։ — «Եթէ կամիս կատարեալ լինել՝ երթ վաճառեա զինչս քո և տուր աղքատաց»։ (Մատթ•)

73. Եթէ աղքատ եցեալ և չունի-ցիս տալոյ, զանատացուածութիւնն և զընչաւէտութիւն արա ողորմութիւն։ — «Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից»։ (Մտթ.)

74. Որ օրինաւոր այլոց էգաբ, հարց սակս զօրինադիրն ամենեցուն զԿրիստոս։ — «Ասուած հարց և Տէր ողորմութեան քո, ... տուր ինձ զքոյոց աթոռոցդ զդարանակալ խնամութիւն»։ (Իմաստ.)

75. Զգուշութեամբ պահեա ըզդրուն էլի և մոի բանից. զի մահ և կեանք հոգւոց դարանին 'ի լեզու և 'ի լսելիս։ — «Եղիցի ամենայն մարդ արագ առ 'ի լսել, և ծանր առ 'ի խօսել»։ (Յակ.)

76. Կրիստոս է քո շահ մեծ, և գանձ և ամենայն ինչ. մի խմիք փափագիցես այնպէս որ ստուերածս նմա ածցէ։ — «Մեծ է որ 'ի ձեզդ է՝ քան զայն որ յաշխարհին է»։ (Ա. Յոհ.)

77. Եթէ փառաց լինիս հեռամուտ ասէն, զԿրիստոս անփա-

ռունակ առնես։ — «Յամենայնէ զրկեցայ և համարիմ կղկղանս՝ զի զՔրիստոս շահեցայց»։ (Փիլիպ.)

78. Անկ է քեզ սակաւ ամիսառնալ զսիրտ քո յերկինս, և անձկալնմին՝ որոյ ամենայն ինչ կայուն և յաւիտենական է։ — «Նորոյ երկնից և նորոյ երկրի՝ ըստ աւետեացն հայեցեալ սպասեմք, յորս արդարութիւնն բնակէ»։ (Բ. Պետ.)

79. Հանապազօրեայ արուեստ քահանայի ինչ կրթութիւն կատարելութեան։ Կատարելութիւն ինչ նմանողն լինել Քրիստոսի. նմանութիւն Քրիստոսի՝ գործելն ըստ Քրիստոսի։ — «Որ ասիցէ՝ ի նմա բնակիլ՝ այնպէս պարտի գնալ որպէս և նայն գնաց»։ (Գ. Յոհ.)

80. Քահանայութիւն՝ զօրհանապազ քաւչութիւն է մեղաց աշխարհի, ոչքան և առաւել՝ անձինն։ — «Ասուած, քաւեա զանօրէնութիւնս իմ... ուսուցից անօրինաց զճանապարհս քո»։ (Սաղմ.)

81. Զրի տուան քեզ շնորհքդ, բայց ոչ ձրի պահեսցին, այլ քո

Ջանիւդ և բարուք զգուշութեամբ։ — «Ունիմք զգանձս զայս յամանս խեցեղէնս»։ (Բ. Կորն.)

82. Ճշմարտութեան դարան և շաւիղ մեծի արքայի է բերան քո. քանի՛ սուրբ և յատակ պարտ ելցէ լինել։ — «Ընթացարք քահանային զգուշացին գիտութեան, և օրէնս խնդրեսցեն 'ի բերանոյ նորա, զի հրեշտակ Տեառն ամենակալի է»։ (Մաղ.)

83. Եւ սիրտ և աչք և մարմին բովանդակ, և ամենայն ինչ սուրբ և սրբակիր պահանջի 'ի քահանայ։ — «Աղաչեմ զձեզ պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ»։ (Հռոմ.)

84. Ձեր ինչ այնպէս անվայել և ամօթալի 'ի քահանայ՝ որպէս թէ զանձին շահ օգտի խնդրել։ — «Մի՛ ոք զանձին ևեթ խնդրեսցէ, այլ և զընկերին»։ (Ա. Կորնթ.)

85. Քան զհրեշտակաց մեծագոյն տուաւ քեզ պաշտօն և շնորհս. ով, քանի՛ զգուշակենցաղ պարտ է

քեզ լինել։ — «Քահանայն . . 'ի սրբութեանց անուն մի եւ անիցէ . զի սուրբ իւրն օծութեան որ յԱստուծոյ՝ 'ի վերայ նորա է »։ (Ղեւ.)

86. Մի երբեք հանդիցես՝ երբ անհանգիստ ոք 'ի քո հօտէդ կայցէ։ — «Ես մտադիրութեամբ ծախեցից և ծախեցայց վասն անձանց ձերոց »։ (Բ. Կորն.)

87. Յիշեա զօրհնութիւն և զհրաւէր աջէիցն, և փութա սիրել և արդահատել զամենայն վշտացեալ և զնեղեալ՝ 'ի հոգի և 'ի մարմին։ — «Եկայք օրհնեալք Հօր իմոյ . . . զի հիւանդ էի և տեսէք զիս »։ (Մատթ.)

88. Եւ յոլո մի լուծանել կամաւ 'ի պատուիրանացն՝ մեծ ինչս եցոյց Տէր, քան զանցանելն երկնից և երկրի։ — «Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ մի անցցեն »։ (Մատթ.)

89. Մեծ ինչ վասն Աստուծոյ գործել ոչ կարես, կամց հաւատարիմ 'ի փոքուդ։ — «Որ 'ի փոքուն հաւատարիմ է և 'ի բազմին հաւատարիմ է »։ (Ղուկ.)

90. Եւ զփոքր և զսակաւ ատես

զմեղս, զի առհասարակ չար են առաջի Աստուծոյ։ — «Ողջացար, մի՛ և ես մեղանչեր, զի մի՛ չար ևս ինչ լինիցի քեզ»։ (Յովհ.)

91. Դիւրագոյն հնարք են շահելոյ զայլս՝ շահելն զանձն՝ի Քրիստոս։ Յայս շահավաճառ կարդեալ է քո։ — «Զերիցուն՝ այսուհետև աղաչեմ.... լինել օրինակ հօտին. զի յերևել հովուապետին՝ ընդունիջիք զանթառամ փառաց պսակն»։ (Ա. Պետ.)

92. Եթէ չկցես հաշտ ընդ քոսմ գիտակցութեան, ընդ Աստուծոյ զինքդ հաշտիս, կամ զՔրիստոս ոչ կարես պատարագիցես անդատապարտ։ — «Եթէ ունիցիս ինչ խէթ, թող զպատարագն քո («՛ի վերայ սեղանոյն) և երթ նախ հաշտեաց»։ (Մտթ.)

93. Եթէ գիտես և ոչ գործես՝ դատապարտեսցիս. իսկ թէ ոչ գիտես և ոչ գործես՝ և ոչ այնու արդարանաս։ — «Որ արասցէ և ուսուցցէ՝ նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից»։ (Մտթ.)

94. Զար քան զՅուդայի աշակերտութիւնն է՝ անարժան քահանայապետութիւն։ — «Մեղայ, զի մատնեցի զարիւն արդար»։ (ՄԿԸ.)

95. Համօրէն անձինդ՝ արժան է լինել և սեղան սրբութեան Քրիստոսի, և զոհ ընդ նմին, և ողջակէզ անծախելի զամենայն աւուրս կենաց։ — «Գնացէք սիրով, որպէս և Քրիստոս սիրեաց զմեզ, և մատնեաց զանձն իւր վասն մեր՝ պատարագ և զեղումն 'ի հոտ անուշութեան»։ (ԵՓԵ.)

96. Քրիստոս չունէր ինչ պէտս և հանապազ աղօթէր, դու հէգդ և կարօտեալ՝ ջանասցիր զամենայն գործս քո համակել յաղօթս նմին անմեռունչս։ — «Յաղօթս կացէք զի մի անկանիցիք 'ի փորձութիւն»։ (ՄԿԱ.)

97. Եթէ ծանր ինչ թուիցի քեզ հրաժարիլն 'ի տնոտի և յանրջական զբօսանաց կենցաղոյս, քանի՞ ահագին չարիք եկեն յաւիտեան զրկիչն 'ի հանդերձելոց ամենունակ և ան-

վախճան բարեացն։ — «Աշխարհս անցանէ և ցանկութիւնն. իսկ որ առնէ զկամս Աստուծոյ՝ մնայ 'ի յաւիտեան»։ (Ա. Յհ.)

98. Փոքր մի, փոքր միւս կա և ահա վաղվաղ 'ի վախճան կենացդ հասանես. ո՛հ, որպէս քաջ քաղաքավարեկիր՝ եթէ անդուստ դարձեալ նորոգէին կեանք քո։ Այժմեն արա նոյնպէս։ — «Հաստատեցէք զսիրտս ձեր. զի գալուստ Տեառն մերձ է»։ (Յակ.)

99. Սրբութիւն վիճակիդ ինչ քեզ ոչ օգտէ, եթէ ոչ քեզէն վառաւաւոր առնիցես զայն վայելուչ վարուք։ — «Զգործ իւր կշռեսցէ իւրաքանչիւր ոք»։ (Գաղ.)

100. Կրթեաց'ի հաստատութիւն հաւատոցդ՝ խոնարհութեամբ. խոկմամբ ամրացո զյոյս քո յանսուտն Քրիստոս. և սիրեա ամենայնիւ, որպէս պատուէր ընկալար, զարարչին քո և զփրկիչ և զտուիչն շնորհաց. և սիրեա հանապազ, սիրեա և կա։ — «Արդ մնան հաւատք, յոյս, սէր. երեքեան սոքա. և մեծ քան զսոսա Սէր է»։ (Ա. Կորնթ.)

ԱՂՕԹՔ

ԽՈՍՏՈՎԱՆԱՀՕՐ

Տուր ինձ, Տէր, զդարանակալ դահոյից քոց զնմանութիւն, այլ զի գիտացից դառել զժողովուրդ քո արդարութեամբ և զաղքատս քո իրաւամբք. տուր ինձ այնպէս վարել զյանձնեալսն ինձ փրկանս արքայութեան երկնից, զի մի բացից՝ որում փակել պարտ իցէ, և մի փակեցից՝ որում պարտ իցէ բանալ։ Դիտաւորութիւն մըտացս՝ մաքուր իցէ. նախանձաւորութիւն իմ անկեղծ. սէր հաճելոյ, և աշխատութիւն իմ արդասաւոր։ Քաղցրութիւն իմ մի իցէ մեղկ, և մի խստութիւն իմ ատելիկ. մի արհամարհեցից զաղքատն, և մի առից ակն 'ի մեծատանէ։ Տուր ինձ զթութիւն յորսալ զմե-

ղաւորս, խոհեմութիւն 'ի հաղ-
ցաքննութիւնս, գիտութիւն յու-
սուցանել։ Ալաչեմ տուր ինձ փոյթ
խորշեցուցանելոյ 'ի չարէն, հոգ՝
հատուցանելոյ 'ի բարւոյն, և հան-
ձար՝ զարդացուցանել 'ի լաւագոյն-
սն։ 'ի պատասխանիս՝ կշռութիւն
բանի, 'ի խորհուրդս՝ ուղղութիւն,
'ի գաղտնածածուկս՝ լոյս, 'ի մա-
նուածոյս՝ աչալրջութիւն, 'ի դը-
ժուարինս՝ յաղթութիւն։ Մի ըմ-
բռնեցայց 'ի մոռոխաբանութիւնս,
մի՛ շաղախեցայց յաղտեղիս։ փրկե-
ցեալ զայլս, անկորուստ պահելով
զանձն։ ամէն։

Եղիցի անուն Տեառն օրհնեալ
յաւիտեան։ ամէն։

Սրբուհի Մարիամ՝, աղթող խնա-
մութեան։ ապաչեա վասն մեր։

ԱՆԵՐԿԲԱՅ

ԱՊԱՒԻՆՈՒԹԻՒՆ

ԱՌ ՏԻՐԱՄԱՑՐՆ

Յիշեա՛ ով ամենագութ կոյս, Մարիամ, զի ոչ ուրեք երբեք եղև լսելի, եթէ անտեսեցաւ առ՝ի քէն ոք՝ի դիմելոցն և յապաւինելոց յօժանդակութիւն քո։ Արդ այսու վստահութեամբ դիմեալ և ես անկանիմ առ սուս քո, ով կոյս կուսանաց և մայր իմ. և ընդ ծանրութեամբ մեղաց իմոց՝ հեծեծելով կարդամ առ քեզ. Ո՛վ մայր Աստուծոյ, մի՛ անտես առներ զաղաչանս իմ, այլ լուր և ընկալ քաղցրութեամբ. ամէն։

Ղ. ԲԵՌՆԱՐԴ

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ГСС Библиотека
ZUUՌ-Арм.ССР
Ս. ԱՄ. Ա. Մասեանցի անվ.

ՅԱՆԿ

ՔՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

Ա. Յիսուս պատարագ և խորհուրդ 7
Բ. Յիսուս օրինակ և Ճշմարտութիւն . . . 12
Գ. Յիսուս քահանայ և զոհ. 17
Դ. Յիսուս պատարագ ողջակէզ և գոհացողական 22
Ե. Յիսուս պատարագ հաշտութեան և ընդունելութեան 28
Զ. Յիսուս Աստուած մեր և Թագաւոր մեր . . 33
Է. Յիսուս արարիչ մեր և փրկիչ. 38
Ը. Յիսուս օրէնադիր մեր և առաջնորդ 42
Թ. Յիսուս հովիւ մեր և հայր 47

Ժ. Յիսուս վեհապայ մեր և
Եղբայրը 52
ԺԱ. Յիսուս վարդապետ մեր
և փրկիչ 57
ԺԲ. Յիսուս հիւր մեր եւ
Թոշակ 62
ԺԳ. Յիսուս բժիշկ մեր և
դեղ 67
ԺԴ. Յիսուս խորհրդական
մեր և մտերիմ . . . 72
ԺԵ. Յիսուս առաջնորդ մեր
և ընկեր 77
ԺԶ. Յիսուս բարեխօս և հաշ-
տութիւն մեր . . . 81
ԺԷ. Յիսուս վկայ և դատա-
ւոր գործոց մերոց . . 86
ԺԸ. Յիսուս գին մեր և վարձք 92
ԺԹ. Յիսուս կեանք և մահ . 97
Ի. Յիսուս մնունդ մեր և
շնորհք 102
ԻԱ. Յիսուս ապաստան մեր
և յոյս 107
ԻԲ. Յիսուս գանձ մեր և բար-
օրութիւն 112
ԻԳ. Յիսուս փառք մեր և խնդ-
դութիւն 116

ԻԴ. Յիսուս ժառանգութիւն և ամենայն ինչ մեր . 121
ԻԵ. Յիսուս տուրք Աստուծոյ առ մարդիկ, և տուրք մարդկան առ Աստուած 126
ԻԶ. Յիսուս վախճան մեր և օրինակ 131
ԻԷ. Զօրութիւն և իմաստութիւն Յիսուսի 'ի Գոհութեան 136
ԻԸ. Բարութիւն և սէր Յիսուսի 142
ԻԹ. Հնազանդութիւն և համբերութիւն Յիսուսի . 147
Լ. Աղքատութիւն և խոնարհութիւն Յիսուսի 'ի Գոհութեան . . . 153
ԼԱ. Մաքրութիւն և յարատևութիւն Յիսուսի 'ի Գոհութեան 158
ՓՆՆՈԻԹԻՒՆ ԽՂՃԻ 165
Յաղագս քննութեան խղճի մտաց յառաջ քան զքահանայագործութիւն . . 173
ԱՂՕԹՔ ԶՂՋԱԿԱՆՔ 178

ԱՂՕԹՔ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՊԱ-
ՏԱՐԱԳԻ 181
Այլ աղօթք 191
Երգ մաղթանաց առ սուրբ
Հոգին 197
ԱՂՕԹՔ ԳՈՀՈՒԹԵԱՆ 199
Երգ գոհութեան 208
ԱՂԵՐՍՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉՔ
— Հաւատոց 211
— Յուսոյ 212
— Օգնութեան 214
— Ապաշխարութեան . . 215
— Ուղղութեան 218
— Խոնարհութեան . . . 219
— Համբերութեան . . . 220
— Գոհութեան 222
— Սիրոյ և խնդութեան . 224
— Հանդերձեալ կենաց . 227
— Առ Տիրամայրն . . . 231
ՑԻՇԵԼԻՔ 233
Աղօթք խոստովանահօր . . . 256
Անբիծայ ապաւինութիւն առ
Տիրամայրն 258

PERE ARSEN YERETZIAN
✠
الخوري ارسين يريتسيان
ارمن كاثوليك
Arménien Catholique

Rec'd

001 5185

2013

2001